



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Կ. Խաչատրյան  
Կ. Ավետիսյան, Ժ. Մխիթարյան, Վ. Սարգսյան  
Կ. Մինասյան, Հ. Զաքարյան**

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**ՄԱՍ 2**

**ԵՐԵՎԱՆ  
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
2023**

ՀՏԴ 351:004.9:338  
ԳՄԴ 67.401+32.97+65.9  
Հ 247

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ գիտական խորհուրդը:*

Հետազոտությունն իրականացվել է «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի կողմից տրամադրած ֆինանսավորմամբ՝ թիվ ՏՀ-4 պայմանագրով գիտական թեմայի շրջանակներում  
2021-2022թթ.:

Մասնագիտական խմբագիր՝ ի.գ.թ. Ա.Ղ. Քրմոյան

Հ. Սարգսյան, Ռ. Գևորգյան, Կ. Խաչատրյան, Կ. Ավետիսյան,  
Ժ. Մխիթարյան, Վ. Սարգսյան, Կ. Մինասյան, Հ. Ջաքարյան  
Հ 247 ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում: Մաս 2: -Եր., ԵՊՀ հրատ., 2023, 178 էջ:

Երրորդ հազարամյակի մեկնարկն ուղեկցվեց չորրորդ արդյունաբերական հեղափոխությամբ, որի տարբերիչ առանձնահատկությունը հասարակական և տնտեսական հարաբերությունների թվայնացումն է: Վերջինս բնութագրվում է *երկակի ազդեցությամբ*: Մի կողմից պետությունները ձգտում են ռազմավարական առաջնորդություն ցուցաբերելով հնարավորինս արագացնել թվային փոխակերպումների ընթացքը՝ առավելագույնս օգտվելու թվայնացման առաջ բերած օգուտներից, մյուս կողմից՝ որքան աճում է թվային փոխակերպումների խորությունը, այնքան մեծանում են թվային տարածքից բխող մարտահրավերները, այդ թվում՝ կիբերանվտանգության ռիսկերը: Աշխատանքում գնահատվել են թվայնացման գործիքակազմի կիրառման հնարավորությունները, և դրա հիման վրա առաջարկվել են փոփոխություններ գոյություն ունեցող ինստիտուցիոնալ հարաբերություններում, ինչպես, օրինակ, գոյություն ունեցող ինստիտուտներին փոխարինող նոր ինստիտուտներ և հին ինստիտուտներին զուգահեռ գործող նոր ինստիտուտներ:

Աշխատանքը նախատեսված է դասախոսների, ասպիրանտների, ուսանողների, ինչպես նաև թվայնացման և տեխնոլոգիական զարգացման ոլորտում աշխատող և պետական կառավարման մարմինների աշխատողների համար:

ՀՏԴ 351:004.9:338  
ԳՄԴ 67.401+32.97+65.9

ISBN 978-5-8084-2615-3  
<https://doi.org/10.46991/YSUPH/9785808426153>

© ԵՊՀ հրատ., 2023  
© Հեղ խումբ, 20

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	5
1. ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ .....	7
1.1. Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը և գործունեության արդյունավետությունը պետական համակարգում .....	7
1.2. Թվային փոխակերպումների, թվայնացման ազդեցությունը տնտեսության որոշ ոլորտների վրա.....	16
2 . ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ .....	22
2.1. Պետության կայացածության տնտեսական և քաղաքական ասպեկտները.....	22
2.2. Պետական կառավարման համակարգի թվայնացման գործընթացը ...	27
3. ՀՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ. ԹՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	34
3.1. Թվային սահմանադրականության հարացույցը .....	34
3.2. Ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման միտումները թվայնացման համատեքստում.....	38
4. ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԿՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ .....	51
4.1. Թվային փոխակերպման տնտեսամաթեմատիկական մոդելավորումը.....	51
4.2. «ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում» թեմայի շրջանակներում իրականացված հարցման արդյունքների ամփոփում.....	54
5. ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ .....	73
5.1. Կրթության ոլորտի թվայնացման արդի վիճակն ու զարգացման միտումները ՀՀ-ում .....	73
5.2. Թվայնացման միտումները ՀՀ առողջապահության համակարգում և զարգացման հիմնախնդիրները.....	89
5.3. Էլեկտրոնային առևտրի ոլորտում թվայնացման նորամուծությունների ներդրման և կիրառման հնարավորությունները.....	103

5.4. Ֆինանսական հատվածում նորագույն տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները .....	119
Օգտագործված գրականության ցանկ.....	169

## Ներածություն

Պետությունները՝ որպես հասարակության կյանքի կազմակերպման հիմնական ինստիտուտ, կառավարման ու կարգավորման իրենց զինանոցը հարստացնում են առավել կատարելագործված մեթոդներով:

Յուրաքանչյուր երկիր տարբեր նպատակներ է սահմանում պետական կառավարման համակարգում թվային գործիքների կիրառման համար և յուրովի է գործադրում այդ նպատակները: Տարբեր երկրներում էլեկտրոնային կառավարության հայեցակարգի ներդրման բազմաթիվ փորձերի արդյունքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանցից քչերն են հասել այն նպատակին, որի համար մշակվել են: Պետական կառավարման թվայնացման հաջողությունների համեմատական վերլուծությունների համար որոշակի ցուցանիշների մշակման անհրաժեշտություն է առաջանում, որի հիման վրա էլ հնարավոր է դառնում ստեղծել երկրների թվայնացման մակարդակի վարկանիշներ: Վարկանշման առումով ամեն տարի հաշվարկվում են էլեկտրոնային մասնակցության ցուցիչը, էլեկտրոնային կառավարության և թվային տնտեսության պատրաստվածության վարկանիշը, Համաշխարհային բանկի կողմից մշակվել են պետական կառավարման ցուցանիշները, ՏՀԶԿ-ի կողմից հաշվարկվում է համացանցի միջոցով պետական մարմիններին դիմող քաղաքացիների մասնաբաժինը: Որպես կանոն, նմանատիպ ցուցանիշներն օգտագործվում են ոչ միայն պետությունների միջև առկա տարբերություններն ամրագրելու և համապատասխան վարկանիշներ ձևավորելու նպատակով, այլև գնահատելու համար այս կամ այն երկրի կողմից էլեկտրոնային կառավարության զարգացմանն ուղղված ջանքերը: Վարկանիշային ցուցակներից ամենից օգտագործելիին ՄԱԿ-ի էլեկտրոնային կառավարության ցուցիչն է, որն արտացոլում է երկրի տնտեսական, սոցիալական և ժողովրդավարական զարգացման աստիճանը: Այն միջինն է ստորև բերված երեք հիմնական ցուցանիշների.

- ✓ համացանցի առկայություն (հաշվարկվում է հասանելիության ցուցանիշի միջոցով),
- ✓ հեռահաղորդակցության ենթակառուցվածքներ (հաշվարկվում է սպառողների կողմից հեռահաղորդակցության սարքերի և համացանցի օգտագործման ցուցանիշի միջոցով),

- ✓ մարդկային կապիտալ (հաշվարկվում է մարդկային կապիտալի զարգացման ցուցիչի, տեղեկատվության հասանելիության ցուցիչի և բնակչության խտության ցուցանիշի միջոցով):

Թվային տնտեսության չափերը նեղ սահմանմամբ որպես տնտեսության տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) հատված բնութագրելու պարագայում գնահատվում են ՏՀՏ զարգացման բաղադրյալ ցուցիչի հիման վրա: Հաշվի առնելով ՏՀՏ շուկայի միջազգայնացման բարձր մակարդակը՝ նպատակահարմար է դիտարկել նաև ՏՀՏ ծառայությունների արտահանման ու ներմուծման ցուցանիշները: Հայաստանի Հանրապետության համար դրանք 2020 թվականին կազմել են համապատասխանաբար 4.5% և 0.6%: Այս ցուցանիշներով Հայաստանը համադրելի երկրների շարքում գտնվում է ցածրագույն ցուցանիշներ ունեցող երկրների հնգյակում:

Թվայնացման գործընթացների իրականացման արագությունը և թվային փոխակերպումների ինտենսիվությունն առավել ընդգրկուն բնութագրվում են Կյանքի թվային որակի համաթվով (Digital Quality of Life Index), որը բաղկացած է հինգ հենասյուներից՝ համացանցին հասանելիություն, համացանցի որակ, էլեկտրոնային ենթակառուցվածք, էլեկտրոնային կառավարում, էլեկտրոնային անվտանգություն:

Համաթվի հիմնական բովանդակությունն այն է, որ մարդկանց կենսամակարդակն արդի ժամանակներում մեծապես կանխորոշվում է թվային կենսամակարդակով՝ հաշվի առնելով թվային տեխնոլոգիաների և թվայնացման գործընթացների ներթափանցումը կենսագործունեության բոլոր ոլորտներ: Համաթիվը 2020 թվականի համար տալիս է աշխարհի 85 երկրներում «թվային բարեկեցության» մակարդակի գնահատականը: Այս գնահատականով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է ցածրագույն հորիզոնականն ԱՊՀ և ԿԱԵ երկրների շարքում, ինչը խոցելի դիրք է համադրելի երկրների հետ համեմատական մրցակցային առավելությունների ապահովման և երկրի հետագա զարգացման ապահովման առումով:

Իսկ արհեստական բանականությանը կառավարության պատրաստվածության համաթվով, որը ցույց է տալիս, թե որքանով է պատրաստ տվյալ երկրի կառավարությունը կիրառելու արհեստական բանականությունը բնակչությանը հանրային ծառայություններ մատուցելու համար, ՀՀ-ն զբաղեցնում է 77-րդ տեղը 172 երկրների շարքում և ցածրագույն 6-րդը՝ համադրելի երկրների շարքում (42.7%):

# 1. ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՂԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ


## 1.1. Էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումը և գործունեության արդյունավետությունը պետական համակարգում

Էլեկտրոնային կառավարումը և ինստիտուտների գործունեությունը հետազոտական մոդուլներում համադրվել են պետական կառավարման արդյունավետությունը բնութագրող ինդեքսների և թվայնացման մակարդակը բնորոշող ինդեքսի միջոցով: Այդ հետազոտությունն իրականացվել է 198 երկրների ընտրանքի վրա, որով պարզվել է, որ գոյություն ունի հստակ ֆունկցիոնալ կապ վերը նշված փոփոխականների միջև: Մասնավորապես, պարզվել է, որ էլեկտրոնային կառավարման համակարգը բնութագրող ինդեքսի բարելավումը 0.1 միավորով բերում է կառավարման ինդեքսի շուրջ 0.36 միավոր աճի: Պարաբոլիկ կապով նկարագրվող արդյունքը վկայում է այն մասին, որ էլեկտրոնային կառավարման ազդեցությունն ինստիտուտների վրա նշանակալի է, որ ցուցանիշի բարելավումը կարող է դրական ազդեցություն ունենալ պետական կառավարման տարբեր ոլորտների վրա:

Հայաստանի Հանրապետությունում թվայնացման գործընթացները դեռևս գտնվում են թույլ զարգացվածության մակարդակում, թվային տնտեսության չափերը դեռևս սահմանափակ են, և համադրելի երկրների շարքում Հայաստանը զբաղեցնում է միջինից ցածր դիրքեր:

Թվային տնտեսության չափերը, նեղ սահմանմամբ որպես տնտեսության տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների հատված (S<S) բնութագրելու պարագայում, գնահատվում են S<S զարգացման բաղադրյալ ցուցչի հիման վրա, որը դիտարկում է երեք ուղղություններ՝ S<S-ի պատրաստվածության մակարդակ (ենթակառուցվածքներ, հասանելիություն), S<S-ների օգտագործում (ինտենսիվություն) և S<S-ի կարողունակություն (հմտություններ): Այս ցուցանիշով Հայաստանի դիրքը համադրելի երկրների համատեքստում ներկայացված է ստորև բերված գծապատկերում:





**Գծապատկեր 1. SCS-ի զարգացման համաթիվը ԱՊՀ և ԿԱԵ երկրներում**

Հաշվի առնելով SCS շուկայի միջազգայնացման բարձր մակարդակը՝ նպատակահարմար է դիտարկել նաև SCS ծառայությունների արտահանման ու ներմուծման ցուցանիշները: Հայաստանի Հանրապետության համար դրանք 2020 թվականին կազմել են համապատասխանաբար 4.5 և 0.6%: Այս ցուցանիշներով Հայաստանը համադրելի երկրների շարքում գտնվում է ցածրագույն ցուցանիշներ ունեցող երկրների հնգյակում:

Թվայնացման գործընթացների իրականացման արագությունը և թվային փոխակերպումների ինտենսիվությունը առավել ընդգրկուն բնութագրվում են Կյանքի թվային որակի համաթվով (Digital Quality of Life Index<sup>1</sup>), որը բաղկացած է հինգ հենասյուներից, որոնք են՝


- համացանցի հասանելիությունը,
- համացանցի որակը,
- էլեկտրոնային ենթակառուցվածքը,
- էլեկտրոնային կառավարումը,
- էլեկտրոնային անվտանգությունը:

Համաթվի հիմնական ուղերձն այն է, որ մարդկանց կենսամակարդակը արդի ժամանակներում մեծապես կանխորոշվում է թվային կենսամակար-

<sup>1</sup> Աղբյուր՝ <https://surfshark.com/dql2020>:

դակով՝ հաշվի առնելով թվային տեխնոլոգիաների և թվայնացման գործընթացների ներթափանցումը կենսագործունեության բոլոր ոլորտներ:

Համաթիվը 2020 թվականի համար տալիս է աշխարհի 85 երկրներում «թվային բարեկեցության» մակարդակի գնահատականը: Այս գնահատականով Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է ցածրագույն հորիզոնականը ԱՊՀ և ԿԱԵ երկրների շարքում, ինչը բավական խոցելի դիրք է համադրելի երկրների հետ համեմատական մրցակցային առավելությունների ապահովման և երկրի հետագա զարգացման ապահովման առումով:



**Գծապատկեր 2. Կյանքի թվային որակի համաթիվը ԱՊՀ և ԿԱԵ երկրներում**

Մեկ այլ՝ ՄԱԿ-ի «Էլեկտրոնային կառավարում» հարցման համաձայն, առցանց պետական ծառայությունների զարգացման ցուցանիշով 193 երկրների շարքում ՀՀ-ն զբաղեցնում է 68-րդ հորիզոնականը՝ զիջելով Ղազախստանին, ՌԴ-ին և Բելառուսին:

Իսկ արհեստական բանականությանը կառավարության պատրաստվածության համաթիվով, որը ցույց է տալիս, թե որքանով է պատրաստ տվյալ երկրի կառավարությունը կիրառելու արհեստական բանականությունը բնակչությանը հանրային ծառայություններ մատուցելու համար, ՀՀ-ն զբաղեցնում է 77-րդ տեղը 172 երկրների շարքում և ցածրագույն 6-րդը՝ համադրելի երկրների շարքում (42.7%):

**Մեր կարծիքով, Հայաստանի թվային փոխակերպման անբավարար առաջնությունը հետևանք է թույլ ռազմավարական առաջնորդության:**

Հայաստանում թվայնացման գործընթացները մեծապես կրել են ինտերցիոն բնույթ այնքանով, որքանով մասնավոր հատվածը, ելնելով գործարար շահից, հնարավորություն է ունեցել իրականացնելու թվային փոխակերպումներ միկրոմակարդակում, ինչպես նաև առանձին պետական գերատեսչությունների մակարդակում իրականացվող հատվածական փոխակերպումները:

2021 թվականին ընդունվել է Հայաստանի թվայնացման ռազմավարությունը՝ նախատեսված 2021-2025 թվականների համար: Թվային փոխակերպումների իրականացման ճանապարհին ՀՀ-ում առկա են թերևս առավել տեխնիկական բնույթի, այդուհանդերձ հաղթահարման ենթակա հետևյալ հիմնահարցերը.

1. Պետական կառավարման հատվածում թվային զարգացումը մինչ այժմ ընթացել է անհամաչափ (գերատեսչությունների միջև էական տարբերությունների առկայություն):
2. Պետական համակարգում թվային փոխակերպման միասնական քաղաքականության և միասնական մոտեցումների բացակայություն:
3. Մասնակի թվայնացում, երբ բազմաթիվ պետական ծառայությունների դեպքում միայն մի փուլն է առցանց հասանելի, իսկ մյուս առնչվող ծառայությունները տրամադրվում են թղթային տարբերակով:
4. Պետական ծառայությունների մատուցման համակարգերն առանձնանում են օգտագործման հարմարավետության ցածր մակարդակով, հաշվի առնված չեն համընդհանուր դիզայնի սկզբունքները, այդ թվում՝ մատչելի չեն հաշմանդամություն ունեցող օգտագործողների համար:
5. Ներկայացված ծառայությունները մեծ մասամբ հարմարեցված չեն բջջային հեռախոսակապով օգտագործման համար: Բացի այդ, ծառայություններից օգտվելու համար կիրառվում են ID քարտեր, որոնց միջոցով ստորագրելու համար պահանջվում է լրացուցիչ ընթերցող սարք (card reader):
6. Հայաստանում որոշակիորեն ներդրված է բջջային նույնականացումը, որը լայն տարածում չունի: Բացի դրանից, կառավարության

որոշման մինչև 2024թ. հունվարի 1-ը դադարեցվել է բիոմետրիկ անձնագրերի տրամադրումը, իսկ նույնականացման քարտերը տրամադրում են առանց էլեկտրոնային պահոցի (չիպերի), ասել է թե՛ առանց էլ. ստորագրության, ինչը էլ ավելի է դժվարացնում էլեկտրոնային ծառայությունների մատուցումը և անձանց առցանց նույնականացումը:

7. Հաճախ ծառայությունները հասանելի են լինում էլեկտրոնային տարբերակով, սակայն օգտագործողները նախապատվություն են տալիս ոչ էլեկտրոնային տարբերակին: Վերջինիս պատճառը ամենից հաճախ իրազեկվածության ցածր մակարդակն է:

Հայաստանի թվային փոխակերպման նպատակով ՀՀ կառավարությունը 2021-2025 թվականների ընթացքում նախատեսել է իրականացնել հետևյալ միջոցառումները.


1. Թվայնացման ինստիտուցիոնալացում,
2. Թվայնացման ներկա համակարգերի գույքագրում և թվային ցուցանիշների վերլուծություն, թիրախային ցուցանիշների սահմանում,
3. Թվայնացման ստանդարտների, ձևաչափերի և ընթացակարգերի մշակում,
4. Պետական ամպային ենթակառուցվածքային պահանջների/ստանդարտների մշակում,
5. Ազգային կիրճանվտանգության գերազանցության կենտրոնի ձևավորում,
6. Տվյալների քաղաքականության հայեցակարգի մշակում,
7. Լայնաշերտ ինտերնետի և թվային ծառայությունների հասանելիության զարգացման պլանի մշակում,
8. Տվյալների պահոցի ստեղծում,
9. Օրենսդրական դաշտի ուսումնասիրություն և փոփոխություն,
10. Թվային հմտությունների ձևավորում և այլն:

Ինչպես նկատելի է, ՀՀ թվայնացման ռազմավարությունը առաջիկա հնգամյակում հիմնականում թիրախավորել է կազմակերպչական և կառուցակարգային միջոցառումների իրականացումը: Մեր կարծիքով, **Հայաստանի տնտեսության թվայնացման ճյուղային միջոցառումների վերաբերյալ համակարգված տեսլականի բացակայությունը միջնաժամկետ հատվա-**


**ծի համար ծրագրային միջոցառումների ու ժամկետների ամրագրումը թվային փոխակերպումների հաջող ընթացքի հիմնական խոչընդոտն է լինելու:** Էական հիմնախնդիր է նաև **ռազմավարություն - պետական բյուջե թույլ կապը:** Չնայած թվայնացման ռազմավարությամբ նախանշված թիրախներին՝ դրանք իրենց բավարար ամրագրումը չեն ստանում ՀՀ պետական բյուջեի մասին ամենամյա օրենքներում: Մասնավորապես, ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի նախագծում Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի, թվայնացման և շուկայի զարգացման ծրագրի գծով նախատեսվել է 8.5 մլրդ դրամ, որի շրջանակներում իրականացվող միջոցառումներից են, օրինակ, 50 կազմակերպությունների դրամաշնորհների տրամադրումը, 15 ուսանողների՝ Բարձր տեխնոլոգիական ոլորտում գործող ձեռներեցների համար արտասահմանում անցկացվելիք աքսելերացիոն վերապատրաստման միջոցառումներին մասնակցությունը և այլն: Ակնհայտ է, որ շահառուների նման նեղ կազմի պայմաններում ռազմավարության կենսագործումը խնդրահարույց է դառնում: 2023 թվականի առաջին եռամսյակի դրությամբ թվայնացման ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների գերակշիռ մասը չի իրականացվել կամ իրականացվել է մասամբ:

Վերջին տարիներին աշխարհի բոլոր երկրները այս կամ այն չափով պետական կառավարման ոլորտում ներդնում են էլեկտրոնային կառավարման սկզբունք, որի նպատակն է թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով գործընթացների արդյունավետության բարձրացումը՝ մասնավորաբար նվազագույնի հասցնելով պետական ծառայողների և քաղաքացիների ֆիզիկական շփումները: Ակնհայտ է, որ այս գործընթացները ոչ միայն տեխնոլոգիական բնույթ են կրում և պայմանավորված են այս կամ այն երկրում թվային տեխնոլոգիաների զարգացման աստիճանով, այլ նաև այդ տեխնոլոգիաների միջոցով նոր կանոնակարգերի և նույնիսկ բիզնես սովորույթների և մարդկանց վարքագծի փոփոխման հնարավորություններով:

Էլեկտրոնային կառավարման ազդեցությունը ինստիտուտների վրա բազմավեկտոր է, և այդ ցուցանիշի բարելավումը կարող է դրական ազդեցություն ունենալ պետական կառավարման տարբեր ոլորտների վրա:



**Գծապատկեր 3. Էլեկտրոնային կառավարման ինդեքսի և պեղական կառավարման արդյունավետությունը կոռուպցիայի զսպման տեսանկյունից չափող ինդեքսի փոխկապվածությունը**



**Գծապատկեր 4. Էլեկտրոնային կառավարման ինդեքսի և կոռուպցիայի ընկալման ինդեքսի փոխկապակցվածությունը**

Թվայնացման ազդեցության դիլեման պետական կառավարման բարեփոխման համատեքստում: Պետական կառավարման բարեփոխման վերաբերյալ դիսկուրսի հիմնական գաղափարը հանգում է պետական կառավարման կառուցվածքում և գործընթացներում կոնֆիգուրացիաների փոփոխմանը՝ արդյունավետության բարձրացման, պետական քաղաքականությունների արդյունքաբերության մակարդակի աճի նպատակով: Գիտական բանավեճն առ այն, թե կառավարման որ պարադիգմն է առավել համապատասխանում պետության առջև ծառայած ժամանակակից մարտահրավերներին, և թե որ ուղղությամբ պետք է իրականացվեն բարեփոխումները, ծավալվում է անվերջ: Այդ բարեփոխումների նպատակը պետք է լինի սոսկ պաշտոնապես առաջադրված նպատակների կենսագործումը, թե այն պետք է ունակ լինի գեներացնել նոր գաղափարներ և ինովացիոն, դինամիկ կառավարման ճանապարհով ապահովի պետական շահերի ինստիտուցիոնալ պաշտպա-


նությունը՝ անկախ քաղաքական էլիտաների ցանկություններից: Վերը նշված հիմնահարցերը պետք է հասցեագրվեն պետական հատվածի բարեփոխման նոր փուլի մեկնարկից առաջ, հատկապես ՀՀ կառավարության կողմից առաջարկված՝ հանրային կառավարման բարեփոխումների մինչև 2030 թվականը ռազմավարության համատեքստում:

Վերլուծվել են պետական կառավարման տարբեր պարադիգմները՝ արևմտաեվրոպական, Ասիայի և Իսրայելի ու Հայաստանի դիսկուրսում: Վեր են հանվել մարտահրավերներն ու առաջնահերթությունները, որոնք որոշիչ նշանակություն ունեն ՀՀ պետական կառավարման բազային պարադիգմի ընտրության համար, վերլուծվել է թվային փոխակերպման դերը պետական կառավարման մեջ: Արձանագրվել է, որ անհրաժեշտ է ընտրություն կատարել ազգային անվտանգության և բարեկեցության միջև թվային փոխակերպումների ուղղությամբ բարեփոխումներն իրականացնելիս:



## 1.2. Թվային փոխակերպումներ. թվայնացման ազդեցությունը տնտեսության որոշ ոլորտների վրա

Թվայնացման գործընթացների մակարդակը տնտեսության տարբեր ոլորտներում կարող է էականորեն տարբերվել: Այդ տարբերությունները հիմնականում բացատրվում են առանձին ճյուղերում նոր տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններով և տնտեսության ոլորտներում գործընթացների կազմակերպման ինստիտուցիոնալ առանձնահատկություններով:



<sup>1</sup>Based on a set of metrics to assess digitization of assets (8 metrics), usage (11 metrics), and labor (8 metrics).

<sup>2</sup>Information and communications technology.

Source: AppBrain; Bluewolf; Computer Economics; eMarketer; Gartner; IDC Research; LiveChat; US Bureau of Economic Analysis; US Bureau of Labor Statistics; US Census Bureau; McKinsey Global Institute analysis

### Գծապատկեր 5. McKinsey Global Institute Տնտեսության ճյուղերի թվայնացման մակարդակի ինդեքսը 2018 թվականի դրությամբ

Բերված է McKinsey Global Institute-ի<sup>2</sup> համաշխարհային տնտեսության ճյուղերի թվայնացման մակարդակը: Գնահատականները կատարվել են տնտեսության ճյուղերի 3 հիմնական ցուցանիշներով՝ *ակտիվներ, տեխնոլոգիաների օգտագործում և աշխատուժի ներգրավվածություն*: Կարելի է նկատել, որ մինչև Covid-19-ի տարածումը համաշխարհային տնտեսության ոլորտներում թվային տեխնոլոգիաները առավել շատ են օգտագործվել ինֆորմացիոն և հեռահաղորդակցության ոլորտում, ինչը բնական է: Առավել կարևոր է, որ առաջատարների մեջ են *ֆինանսական ծառայությունների և առևտրի ոլորտները*, իսկ ամենացածր ցուցանիշները արձանագրվել են *շինարարության և գյուղատնտեսության* ոլորտներում:

Թվային տեխնոլոգիաների ներթափանցման աստիճանը տնտեսության առանձին ճյուղերում տարբերվում է նաև ըստ երկրների: Բացի այդ, տնտեսության տարբեր ճյուղերում թվային տեխնոլոգիաների ներթափանցման աստիճանը էականորեն փոխվել է պանդեմիայի տարածումից հետո, երբ տարբեր ոլորտներում *սկսվեցին ինտենսիվ կիրառվել օնլայն մեթոդները*՝ հիմնված տարաբնույթ թվային տեխնոլոգիաների վրա:

Թվային տեխնոլոգիաների ներթափանցման բնականոն գործընթացը պանդեմիայի պատճառով ստացավ արագընթաց զարգացման իմպուլս: Պանդեմիայի ազդեցության հետևանքները համաշխարհային տնտեսության վրա դեռ շատ վերլուծությունների առարկա կլինեն: Սակայն հիմա արդեն պարզ է, որ հետևանքներից մեկը կլինի *օնլայն տեխնոլոգիաների կիրառված զարգացումը* և ներթափանցումը տնտեսության տարբեր ոլորտներ: Այս գործընթացները արդեն բերել են որոշակի ինստիտուցիոնալ և կառուցվածքային փոփոխությունների ոչ միայն առանձին ոլորտներում, այլ նաև համաշխարհային տնտեսությունում: Համաշխարհային տնտեսությունում ընթացող այս գործընթացներն ունեն իրենց ազդեցությունը առանձին երկրների վրա ընդհանրապես և այդ երկրների առանձին ճյուղերի վրա մասնավորապես:

Հայաստանը նույնպես զերծ չմնաց այս գործընթացներից: Մասնավորապես, մեր կարծիքով, նշանակալի ազդեցության ենթարկվեցին *կրթության, առողջապահության, մանրածախ առևտրի և ֆինանսների ոլորտները*:

---

<sup>2</sup> Davies Jack, (2018). Smart Contract Operating Project Networks: Using integrated functionality for improving workflow, transparency, and easier collaboration. 10.13140/RG.2.2.31763.17440.

Համավարակի պատճառով և արդյունքում որոշակիորեն արագացան թվայնացման տեմպերը նաև պետական կառավարման համակարգում: Ինչպես, օրինակ, e-request.am կայքը, որի համաձայն քաղաքացիների և պետական մարմինների միջև էլեկտրոնային եղանակով փաստաթղթաշրջանառությունը չափվում է հարյուր հազարներով:


Եթե վերադառնանք McKinsey Global Institute-ի հետազոտությանը, կտեսնենք, որ թվայնացման մակարդակով մանրածախ առևտրի և ֆինանսների ոլորտները համաշխարհային տնտեսությունում թվայնացման գործընթացների մակարդակով գրավում են առաջատար դիրքեր, իսկ կրթության և առողջապահության ոլորտները միջին դիրք են զբաղեցնում: Կարող ենք ենթադրել, որ պանդեմիայից առաջ Հայաստանում դիտվել է նույն պատկերը: Ինչպես արդեն նշել ենք, վերջին 4-5 տարիներին կտրուկ փոփոխություններ են տեղի ունեցել, և անհրաժեշտություն կա նոր գնահատումներ անելու:

Թվայնացման մակարդակն ըստ տնտեսության ճյուղերի բավականին բարդ խնդիր է և պահանջում է որոշակի մասնագիտացված հարցումների անցկացում: Մենք նախատեսում ենք հետազոտության հաջորդ փուլերում իրականացնել այդպիսի հարցումներ: Այս փուլում օգտագործելով Google trends գործիքը՝ փորձում ենք ցույց տալ, որ *Հայաստանում վերը նշված ոլորտներում իսկապես տեղի են ունեցել օնլայն տեխնոլոգիաների կիրառման հետ կապված զգալի փոփոխություններ:*

Google trends գործիքի միջոցով կարելի տեսնել այս կամ այն բովանդակության որոնումների վիճակագրությունը համացանցում՝ ըստ երկրների: Պետք է նշել, որ Google trends-ը տալիս է ոչ թե որոնումների քանակը, այլ որոշակի ժամանակահատվածում որոնումների քանակի փոփոխությունները՝ ցույց տալով այդ ժամանակահատվածի համար որոնումների քանակի մաքսիմալ արժեքը որպես 100%, իսկ հետագույն ժամանակահատվածի մյուս կետերում մաքսիմալ ցուցանիշի նկատմամբ հարաբերական արժեքները: Հասկանալի է նաև, որ այս գործիքի միջոցով հնարավոր չէ չափել թվային տեխնոլոգիաների վրա հիմնված գործիքների օգտագործման մակարդակը տարբեր ոլորտներում անմիջականորեն: Փոխարենը կարելի է օգտագործել որոնումների որոշակի բովանդակություններ, որոնք անուղղակիորեն կարող են գաղափար տալ հետազոտվող գործընթացների մասին: Այսպիսի մոտեցումը հաճախ անվանում են նաև պրոքսի փոփոխականների

մոտեցում: Բոլոր դիտարկումները կանենք վերջին հինգ տարիների համար (2017թ. հունվար – 2022թ. հունվար), ինչը թույլ կտա տեսնել պանդեմիայի ազդեցության հետևանքները, եթե այդպիսիք կան:


Հաջորդիվ պատկերված է Zoom և Google classroom օնլայն կրթական համակարգերի որոնումը Հայաստանում և ամբողջ աշխարհում վերջին 5 տարիների ընթացքում: Այս հարթակները հիմնական միջոցներ են, որոնք օգտագործվում են կրթական հաստատություններում օնլայն գործընթացները կազմակերպելու համար:



**Գծապատկեր 6. Zoom և Google classroom օնլայն կրթական համակարգերի որոնումը Հայաստանում և ամբողջ աշխարհում վերջին 5 տարիների ընթացքում (աղբյուր՝ Google Trends)**

Կարելի տեսնել, թե ինչպիսի կտրուկ աճ է ունեցել այս հարթակների որոնումը համացանցում և հետևաբար օգտագործումը թե՛ աշխարհում և թե՛ Հայաստանում: Կարելի է նկատել, որ այս աճը շատ ավելի կտրուկ է եղել Հայաստանում, քան միջինում ամբողջ աշխարհում: Նկարից կարելի է նաև հասկանալ, որ Հայաստանում Zoom հարթակը շատ ավելի հաճախ է օգտագործվում, քան Google classroom-ը: Այս ամենը վկայում է այն մասին, որ պանդեմիայով պայմանավորված փոփոխությունները կրթության ոլորտում ունեցել են նշանակալի ազդեցություն, և որ այդ ազդեցությունը ունեցել է որոշակի առանձնահատկություններ ՀՀ-ում:


Հաջորդիվ բերված են մի շարք օնլայն առևտրային հարթակների որոնման արդյունքները Հայաստանում և ամբողջ աշխարհում վերջին 5 տարիների ընթացքում:



**Գծապատկեր 7. Մի շարք օնլայն առևտրային հարթակների որոնման արդյունքները Հայաստանում և ամբողջ աշխարհում վերջին 5 տարիների ընթացքում**

Կարելի է տեսնել, որ առևտրային հարթակների հետ կապված որոնումների քանակի փոփոխությունները չեն կարող վկայել պանդեմիայի ազդեցության մասին: Միևնույն ժամանակ, սա չի նշանակում, որ այդպիսի ազդեցություն չի եղել: Որոնումների քանակի ավելացումը կարող է վկայել նոր օգտատերերի մասին: Եթե պոտենցիալ օգտատերերի մեծ մասը արդեն իսկ օգտագործում էր այդ հարթակները մինչև պանդեմիայի սկիզբը, ապա նմանատիպ վերլուծությունը չի կարող բացահայտել այդ օգտատերերի վարքի փոփոխությունը պանդեմիայի ժամանակ, մասնավորապես՝ գործարքների քանակի և ծավալների փոփոխությունը: Այնուհանդերձ, կարելի է պնդել, որ նոր օգտատերերի կտրուկ ավելացում չի դիտարկվել ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Միակ բացառությունը Հայաստանում Wildberries առևտրային համակարգն է, որի օգտատերերի աճը ամենայն հավանականությամբ բացատրվում է ոչ միայն պանդեմիայի ազդեցությամբ, այլ տվյալ ընկերության կողմից վարվող շուկաները ընդլայնելու արդյունավետ քաղաքականությամբ:

Հաջորդիվ պատկերված է eHealth և Armed հարթակի որոնման քանակները Հայաստանում և ամբողջ աշխարհում վերջին 5 տարիների ընթացքում:



**Գծապատկեր 8. eHealth և Armed հարթակի որոնման քանակները Հայաստանում և ամբողջ աշխարհում վերջին 5 տարիների ընթացքում**

Կարող ենք տեսնել, որ առողջապահության ոլորտում էլ տեղի են ունեցել թվայնացման գործիքների որոնումների կտրուկ աճ, ինչպես Հայաստանում, այնպես էլ ամբողջ աշխարհում: Հատկանշական է, որ այդ փոփոխությունները առողջապահության ոլորտում տեղի են ունեցել ոչ թե պանդեմիայի հենց սկզբից, այլ որոշակի ուշացումով: Վերլուծությունը ցույց է տալիս, որ թվայնացման գործընթացները ունեն որոշակի ոլորտային առանձնահատկություններ, որոնք տարբերվում են նաև ըստ երկրների:

## 2 . ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԹՎԱՅԻՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

### 2.1. Պետության կայացածության տնտեսական և քաղաքական ասպեկտները

Պետության կայացածությունը դիտարկվում է որպես երկրի կարողություն, որն առավելագույնի է հասցնում իր զարգացվածությունն ու կայունությունը, իրականացնում է իր տարածքների փաստացի վերահսկողությունը և պաշտպանում է իր բնակչությանը ագրեսորներից, ինչպես նաև դիմակայում է տարաբնույթ ճգնաժամերին<sup>3</sup>: Այսինքն՝ պետության կայացածությունն իշխանության կարողությունն է բավարարել պետության կենսական նշանակության կարիքները՝ գոյատևում, քաղաքացիների պաշտպանություն ներքին և արտաքին սպառնալիքներից, տնտեսական զարգացում և կայունություն, արդյունավետ կառավարում, տարածքային ամբողջականության ապահովում, ինքնիշխանություն և գաղափարախոսության ձևավորում:

Իշխանության կարողությունների թվարկված այս լայն սպեկտրին է թերևս պայմանավորում այն, որ մի խումբ հետազոտողներ պետության կայացածությունը դիտարկում են որպես կառավարության կարողությունների ընդհանրական ձևակերպում՝ ընդգծելով, որ պետության կայացածությունն ունի բազմաթիվ ասպեկտներ, որոնք հիմնականում առնչվում են կառավարման տարբեր ինստիտուտներին վերապահված գործառույթներին<sup>4</sup>:

Որոշ հետազոտողներ պետության կայացածության հիմքում դնում են երկրի բնակչության՝ պետության հետ իրենց ասոցացնելու աստիճանը: Այս դեպքում առավել առաջնային են դառնում երկրի բնակչության՝ իրեն որպես պետության քաղաքացի ընկալելը և գոյություն ունեցող պետական կարգին հավատարմությունը<sup>5</sup>:

<sup>3</sup> USAID & Payson Graduate Program in Global Development. *A Glossary on Violent Conflict*. March 2000, p. 69.

<sup>4</sup> Chuaire, María et al. *State Capacity and the Quality of Policies: Revisiting the Relationship between Openness and the Size of Government*. Inter-American Development Bank, 2014, p. 11.

<sup>5</sup> Куманичкин Павел, «Состоятельность современного государства: новые подходы к оценке», *Среднерусский вестник общественных наук*, том 13, N2, 2018, с. 118.

Առանձին վերլուծություններում պետության կայացածությունը կապակցում են վերջինիս արտադրողական կարողությունների հետ և այն գնահատում են հասարակության կողմից ակնկալվող արդյունքներին հասնելու կարողությամբ<sup>6</sup>, ինչպես նաև նրանով, թե որքանով են արդյունավետ աշխատում բյուրոկրատական գործընթացները<sup>7</sup>:

Ստացվում է, որ պետության կայացածության շուրջ հետազոտական աշխատանքներում ընդգծվում է երկու ուղղություն, որոնք առնչվում են երկրի տնտեսական ու քաղաքական կարողություններին: Այլ կերպ՝ պետության կայացածությունը տեսաբանները հակված են որոշել՝ ելնելով երկրի (ի դեմս իշխանության) կարողությունից իրեն պատվիրակված տնտեսական ու քաղաքական գործառույթների իրականացման տեսանկյունից:

Պետության կայացածությունը կարելի է գնահատել առաջադրված նպատակներին հասնելու արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման աստիճանով: Առաջին հայացքից պարզ թվացող այս բանաձևը բավականին խուփեթ է պարունակում ուստի և անհրաժեշտություն՝ բացահայտելու հիմնական գործոնները, որոնք պայմանավորում են պետության կայացածությունը սոցիալ-տնտեսական, ներքաղաքական, արտաքին քաղաքականության ոլորտներում: Խնդիրներն էլ ավելի են բարդանում, երբ փորձում ենք անդրադառնալ նաև այդ գործոնների ներքին կապերին: Ընդ որում, միջգործոնային կապերը պետք է դիտարկել ոչ միայն ժամանակի որոշակի պահի դրությամբ, այլև հաշվի առնելով դրանց զարգացման դինամիկական ժամանակի ընթացքում<sup>8</sup>:

Տնտեսական գործառույթների տեսանկյունից հիշատակման է արժանի այն մոտեցումը, համաձայն որի՝ պետության՝ տնտեսական գործընթացներին միջամտության անհրաժեշտությունը հիմնավորվում է շուկայի ձախողմամբ, երբ շուկայական կարգավորիչ գործիքակազմը չի կարողանում հաղթահարել մրցակցության սահմանափակման, տեղեկատվության անկատա-

---

<sup>6</sup> Boardman Craig, *Assessing Governance: The Importance of Evaluating Policy Outcomes in National Mission Areas*, 2014, p. 522.

<sup>7</sup> Fukuyama Francis, *What Is Governance?*, 2013, p. 6.

<sup>8</sup> Խաչատրյան Կառլեն, Սահմանադրականության մակարդակը որպես պետության կայացածության գրավական, «*Քանրեթ Երևանի համալսարանի*» գիտական հանդես (սոցիոլոգիա, քննադատականություն), N 3(24), 2017, էջ 20:



րության, արտաքին էֆեկտների և հանրային բարիքների թողարկման խնդիրները<sup>9</sup>:

Մարկ Դինշելոն պետության կայացածության և տնտեսական զարգացման փոխկապվածությանն առնչվող վերլուծությունների հղումներ ունեցող հեղինակներից է, ով պետության կայացածությունը մեկնաբանում է որպես իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության միջոցով դրված նպատակներին հասնելու կարողություն: Միևնույն ժամանակ նա առանձնացնում է այն ուղիները, որոնցով պետության կայացածությունը նպաստում է տնտեսական աճին՝

- Խաղի կանոնների հաստատում՝ առնվազն ներքին օրենսդրության սահմանում և կարգուկանոնի հաստատում, մասնավոր սեփականության իրավունքի պաշտպանություն, ռազմական պաշտպանություն արտաքին ոտնձգություններից:
- Շուկայական փոխգործակցության ապահովում՝ ազատ և մրցակցային շուկայական հարաբերությունների խթանմամբ:
- Ենթակառուցվածքների զարգացում (հատկապես՝ տրանսպորտային)՝ ապրանքների և ծառայությունների նվազագույն ծախսերով տեղափոխման հնարավորության ապահովում:
- Կրթության հասանելիության ապահովում՝ որակյալ մարդկային կապիտալի ձևավորման համար:
- Սոցիալական բազմաբնույթ ծրագրերի իրականացում՝ բնակարանային ապահովում, առողջապահություն, կենսաթոշակային ապահովում և սոցիալական օժանդակության այլ միջոցառումներ:

Հեղինակը պնդում է, որ արդյունավետ են այն պետությունները, որոնք ունակ են պաշտպանելու սեփականության իրավունքը, կարգավորելու շուկաները և լուծելու իրավական խնդիրները (վեճերը): Երկրի կայացածության և երկարաժամկետ տնտեսական զարգացման միջև առկա կապի ուսումնասիրման համատեքստում հեղինակը որպես երկրի կայացածության գնահատական դիտարկում է բնակչության մեկ շնչի հաշվով կառավարության եկամուտները<sup>10</sup>: Ստացվում է, որ երկրի կայացածությունը նկարագրելու համար Դինշելոն փոխարինաբար օգտագործում է երկու եզր՝ *արդյունավետ պե-*

<sup>9</sup> Якобсон Лев, Государственный сектор экономики, Аспект Пресс, М., 2000, сс. 17-23.

<sup>10</sup> Dinucco Mark and Gabriel Katz, State Capacity and Long-run Economic Performance, *The Economic Journal*, 126(590), 2016, p. 201.

տություն և պետության կայացածություն: Իր աշխատանքներում հիմնականում ուսումնասիրելով եվրոպական երկրների փորձը՝ նա հանգում է մի քանի կարևոր եզրակացության<sup>11</sup>.

- Արդյունավետ պետությունները երկարատև պատմական զարգացման արդյունք են, հետևաբար կարևոր են քաղաքական վերափոխումները, որոնք հասարակությանը թույլ կտան բարձրաձայնել իրենց խնդիրները, իսկ պետությանն էլ կօժտեն հարկադանձումը կատարելու առավել արդյունավետ լծակներով:
- Աշխարհաքաղաքական մրցակցությունը կարևոր է այն իմաստով, որ քաղաքական խմբերը կարող են ընդդիմանալ վերափոխումներին, երբ իրենց քաղաքական ու տնտեսական շահերը վտանգվում են, ուստի էլիտան պետք է հստակ դրդապատճառներ ունենա աջակցելու այդ վերափոխումներին:
- Ֆիսկալ կենտրոնացումն ու միջամտության սահմանափակ գործիքակազմի կիրառումը բարձրացնում են երկրի հարկահավաքման կարողությունը, և պետության ավելի բարձր կայացածությունը դրական տնտեսական ազդեցություն է ունենում վարչական ենթակառուցվածքների ստեղծման վրա:

Ինչ վերաբերվում է պետության կայացածության քաղաքական գործառույթին, ապա հայտնի տեսաբան Բ. Հենդրիքսն առանձնացնում է պետության կայացածության 3 հիմնական բաղադրիչ՝

- ռազմական՝ երկրի կարողությունն է ուժի կիրառմամբ հաղթահարել իշխանության թե՛ ներքին, թե՛ արտաքին սպառնալիքները,
- բյուրոկրատական կամ վարչարարական՝ երկրի բյուրոկրատական համակարգի պրոֆեսիոնալիզմի, սեփականության իրավունքի պաշտպանության կարողության, ներդրողների շրջանում վստահության, ինչպես նաև հարկերի հավաքման կարողության հանրագումարն է,
- քաղաքական՝ որոշվում է քաղաքական ինստիտուտների (ինչպես ժողովրդավարական, այնպես էլ ոչ ժողովրդավարական) որակի մակարդակով<sup>12</sup>:

---

<sup>11</sup> Dincecco Mark, The Rise of Effective States in Europe, *Journal of Economic History*, vol. 75, N 3, 2015, pp. 912-914.

Մեկ այլ հայտնի տեսաբան Ա. Ուոլդերը քաղաքական համակարգի գոյատևումն ու գործունեությունը կապում է պետության կարողության չորս հիմնական դրսևորման հետ՝

- էքստենսիվ՝ քաղաքականություն մշակողների կողմից որպես «ազգային շահ» դիտարկվող ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հավաքագրման կարողություն,
- վերահսկողական՝ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ուղղորդման կարողություն,
- լեգիտիմացման՝ հանրային վերահսկողության և կոնսենսուսի հաստատման միջոցով իշխելու կարողություն,
- հարկադրական՝ ուժի կիրառման միջոցով իշխելու կարողություն<sup>13</sup>:

Ուոլդերի դասակարգման էքստենսիվ և Հենդրիքսի դասակարգման վարչարարական բաղադրիչները բնույթով իրար մոտ են: Տնտեսագիտական գրականության մեջ երկրի այս կարողությանը անվանվում է ֆիսկալ կարողություն, որը մեկնաբանվում է որպես եկամուտը և եկամտաստեղծ գործունեությունը հարկելու պետության ունակություն:

Պետության կայացածության թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական առումների վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանք հավասարապես կարևոր են, և ինտեգրալային ցուցանիշը պետք է ներառի ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական բաղադրիչները բնութագրող ցուցիչներ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ *երկրի քաղաքական ինստիտուտները կանխորոշում են երկրի տնտեսական ինստիտուտների կառուցվածքը, ինչն էլ երկրի կայացածության նախապայման է հանդիսանում*:

Պետության կայացածության էությունն արտացոլվում է երեք չափանիշների միասնության մեջ. պետական ինստիտուտների կայունությունը պետության կայացածության կառուցվածքային չափանիշ է, պետական կառավարման արդյունավետությունը՝ գործառութային չափանիշ, իսկ պետական իշխանության օրինականությունը՝ սոցիալ-մշակութային<sup>14</sup>:

<sup>12</sup> Hendrix Cullen, Measuring state capacity: theoretical and empirical implications for the study of civil conflict, *Journal of peace research*, Thousand Oaks, vol. 47, N 3, 2010, pp. 274-277.

<sup>13</sup> Walder Andrew, *The Waning of the Communist State: Economic Origins of Political Decline in China and Hungary*, The Regents of the University of California, 1995, pp. 89-93.

<sup>14</sup> Խաչատրյան Կառլեն, Պետության կայացածության և պետական կառավարման որակի փոխկապվածության խնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդես (տնտեսագիտություն), N 3(33), 2020, էջ 27:

## 2.2. Պետական կառավարման համակարգի թվայնացման գործընթացը

Երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առանցքային ծրագրերի արդյունավետ իրականացումն անքակտելիորեն կապված է կառավարչական, սոցիալական և բիզնես գործընթացներում թվային տեխնոլոգիաների ներդրման հետ: Թվային տնտեսությանն անցումը, լինելով բոլոր երկրների համար քաղաքականության կարևոր առաջնահերթություն, հատկապես կարևոր է զարգացող երկրների համար: Թվային տնտեսությունը վերջիններիս համար ծնում է և՛ լուրջ մարտահրավերներ, և՛ մեծ հնարավորություններ:

Ներկայումս պետական կառավարման ոլորտում թվային փոխակերպումներն ուղղված են «Էլեկտրոնային կառավարությունից» դեպի «թվային կառավարություն» անցումն ապահովելուն: «Էլեկտրոնային կառավարության» պարագայում տեխնոլոգիաները կիրառվում են պետական կառավարման մարմինների կատարած գործողություններն ավտոմատացնելու, դրանց աջակցելու նպատակով, մինչդեռ «թվային կառավարությունում» այդ տեխնոլոգիաները կիրառվում են պետական կառավարման համակարգի արդյունքայնությունն ապահովելու նպատակով: Այս դեպքում հնարավոր է դառնում լիարժեք ֆունկցիոնալ համակարգի ձևավորումը, որը բաղկացած է պետական կառավարման մարմիններից, գործարար համայնքից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, և որտեղ թվային կառավարությունը հանդես է գալիս որպես կապող օղակ՝ ապահովելով վերը թվարկված խաղացողների փոխգործակցությունը<sup>15</sup>: Ստացվում է, որ պետությանը վերապահվում է միասնական թվային էկոհամակարգի միջոցով քաղաքացիների և կազմակերպությունների փոխգործակցությունն ապահովողի և կազմակերպչի դեր: Կառավարությունների կողմից թվային տեխնոլոգիաներն առավելապես կիրառվում են մատուցվող ծառայությունները, ինչպես նաև քաղաքացիների և պետական ինստիտուտների շփումը էլեկտրոնային եղանակով կազմակերպելու համար: Մինչդեռ թվային գործիքակազմն առավել լայն հնարավորություններ է ընձեռում, և դրանց ամբողջական օգտագործման պարագայում պետությունն էլ ավելի մեծ օգուտներ կարող է ունենալ: Այ-

<sup>15</sup> OECD. *Recommendation of the Council on Digital Government Strategies*. OECD Publishing, Paris, 2014, p. 6.

սինքն՝ կարող ենք պնդել, որ դեռևս լիարժեք չի օգտագործվում թվային տեխնոլոգիաների ներդրման ողջ ներուժը՝ կառավարումն առավել արդյունավետ դարձնելու համար: Ընդ որում, այս խնդիրը հավասարապես արդիական է թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրների համար: Մասնավորապես, թվային տեխնոլոգիաների լիարժեք գործադրմամբ հնարավոր է էապես բարձրացնել խնդիրների ախտորոշման, պլանավորման, մշտադիտարկման, արդյունքների գնահատման և որոշումների ճշգրտման փուլերի արդյունավետությունը: Կարելի է եզրակացնել, որ պետությունը դեռևս չի հասել թվայնացման այն աստիճանի, երբ թվայնացման և թվային էլեկտրոնային շտեմարանները կբերեն տվյալահեն քաղաքականության մշակմանը:

Պետական կառավարման թվայնացման նախագծերի իրականացման հիմնական նպատակը աշխատանքային և արտադրական գործընթացների ռացիոնալացումն ու ինտեգրումն է, տվյալների և տեղեկատվության արդյունավետ կառավարումը, պետական առցանց ծառայությունների արդյունավետ մատուցումը, ինչպես նաև մարդկանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնման համար նոր ուղիների ներդրումը<sup>16</sup>: Սակայն պետք է ընդունենք նաև, որ աշխարհում դեռևս գոյություն չունի թվայնացման չափանիշների, չափորոշիչների միասնական ընդունված մոտեցում:

Պետության և առհասարակ հասարակության տեսանկյունից տեղի ունեցող և սպասվող փոփոխություններն այնքան մասշտաբային են, որ որոշ հետազոտողներ թվայնացումը դիտարկում են որպես պետական կառավարման նոր մոտեցումների, նոր հայեցակարգերի շարժիչ ուժը<sup>17</sup>: Հիմնական գործընթացների և գործողությունների թվայնացման վրա հիմնված պետական կառավարման վերափոխումների արդյունքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում քաղաքացիների՝ որոշումների վրա ազդելու առավել լայն գործիքակազմի ներդրմանը, ինչպես նաև պետական կառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայություններից բավարար-

---

<sup>16</sup> United Nations. *United Nations e-Government Survey 2014: E-Government for the Future We Want*. New York: UN Publishing Section, 2014, p. 196.

<sup>17</sup> Margetts Hellen and Patrick Dunleavy, The second wave of digital-era governance: a quasi-paradigm for government on the Web, *Philosophical Transactions of the Royal Society*, vol. 371, No. 1987, 2013, pp. 6-7.

վածության մակարդակի էական բարձրացմանը<sup>18</sup>: Որոշ վերլուծաբաններ թվայնացման օգուտների թվարկման ժամանակ առավել մեծ ուշադրություն են դարձնում կազմակերպական կառուցվածքի պարզեցման և ռեսուրսների առավել խնայողաբար օգտագործման հարցերին<sup>19</sup>:

Ըստ այդմ՝ յուրաքանչյուր երկիր տարբեր նպատակներ է սահմանում պետական կառավարման համակարգում թվային գործիքների կիրառման համար և յուրովի է կարողանում իրագործել այդ նպատակները: Որոշ երկրներ իրապես հաջողում են այդ ճանապարհին, իսկ որոշներն էլ դանդաղ տեմպերով են առաջ շարժվում: Տարբեր երկրներում էլեկտրոնային կառավարության հայեցակարգի ներդրման բազմաթիվ փորձերի արդյունքների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ դրանցից քչերն են հասել այն նպատակին, որի համար մշակվել էին: Պետական կառավարման թվայնացման հաջողությունները համեմատելու համար որոշակի ցուցանիշների մշակման անհրաժեշտություն է առաջանում, որի հիման վրա էլ հնարավոր է դառնում ստեղծել երկրների թվայնացման մակարդակի վարկանիշներ:

Վարկանշման առումով ամեն տարի հաշվարկվում են էլեկտրոնային մասնակցության ցուցիչը, էլեկտրոնային կառավարության և թվային տնտեսության պատրաստվածության վարկանիշը, Համաշխարհային բանկի կողմից մշակվել են պետական կառավարման ցուցանիշները, ՏՀԶԿ-ի կողմից հաշվարկվում է համացանցի միջոցով պետական մարմիններին դիմող քաղաքացիների մասնաբաժինը: Որպես կանոն, նմանատիպ ցուցանիշներն օգտագործվում են ոչ միայն պետությունների միջև առկա տարբերություններն ամրագրելու և համապատասխան վարկանիշներ ձևավորելու համար, այլև գնահատելու այս կամ այն երկրի կողմից էլեկտրոնային կառավարություն զարգացնելու ջանքերը: ՄԱԿ-ի էլեկտրոնային կառավարման ցուցիչի առումով 2020 և 2022 թվականների տվյալներով մասնակցային կառավարման (էլեկտրոնային ժողովրդավարության) առումով Հայաստանը առաջատար երկրների շարքում է:

---

<sup>18</sup> Bannister Frank and Regina Connolly, ICT, public values and transformative government: A framework and programme for research, *Government Information Quarterly*, vol. 31, No. 1, 2014, p. 120.

<sup>19</sup> O'Reilly Tim, Government as a Platform, *Innovations: Technology, Governance, Globalization*, vol. 6, No. 1, 2011, p. 16.

Չնայած էլեկտրոնային կառավարության համեմատական վերլուծության և թվային եղանակով ծառայությունների մատուցման հիման վրա երկրների դասակարգման կարևորությունը՝ փորձագետների շրջանում միասնական մոտեցում չկա դրանցից առավել ընդունելի մեթոդի կամ լավագույն փորձի առումով: Մասնավորապես, որոշ փորձագետներ մատնանշում են, որ բոլոր տեսակի ցուցիչներն ու դրանց հիման վրա ձևավորվող վարկանիշներն ունեն մի մեծ թերություն՝ հաշվի չեն առնում ազգային առանձնահատկությունները<sup>20</sup>: Բացի այդ, հիմնականում բացակայում է տեղեկատվությունը քաղաքացիների կողմից էլեկտրոնային կառավարության մատուցած ծառայություններից փաստացի օգտվելու և դրանց նկատմամբ առկա իրական պահանջարկի վերաբերյալ:

Հետազոտողների կարծիքով ինտեգրալային ցուցիչները հաճախ ոչ ճիշտ են մեկնաբանվում օգտագործողների կողմից, քանի որ մի կողմից անհասկանալի է, թե կոնկրետ ինչ են դրանք չափում, մյուս կողմից՝ լրացուցիչ ինչ խնդիրներ կան դրանց գեներացման գործընթացի թափանցիկության առնչությամբ: Բացի այդ, վտանգ կա, որ պետությունները, նպատակ ունենալով ավելի լավ դիրք գրավելու այս կամ այն վարկանիշում, ձգտում են բարելավելու կոնկրետ ցուցանիշ, այլ ոչ թե հաշվի առնելու հասարակության պահանջներն ու ընկալումները էլեկտրոնային կառավարությունից<sup>21</sup>:

Հարկ ենք համարում շեշտել, որ պետական կառավարման թվայնացումը չի կարող ինքնըստինքյան երաշխավորել դրա արդյունավետությունը: Գաղտնիք չէ, որ գերատեսչական թվայնացումը հանգեցնում է մեծաքանակ, ֆունկցիոնալ առումով միմյանց կրկնող տեղեկատվական համակարգերի ստեղծման: Հատկապես զարգացող երկրներում *թվային տեխնոլոգիաների կիրառման արդյունավետությունը ցածր է այն պայմանով, որ մեծ մասամբ ոչ թե ամբողջական գործընթացներն են թվայնացվում, այլ դրանց առանձին բաղադրիչներ, և արդյունքում ստացվում է, որ էլեկտրոնային եղանակով իրականացվում են լոկ որոշ գործառույթներ*: Վերջին 15 տարիների ընթացքում աշխարհում բազմաթիվ հետազոտություններ, վերլուծություններ են

---

<sup>20</sup> Machova Renáta and Martin Lněnička, Reframing E-Government Development Indices with Respect to New Trends in ICT, *Review of Economic Perspectives. Narodohospodářský Obzor*, vol. 15, No 4, 2015, p. 386.

<sup>21</sup> Siskos Eleftherios et al., Multicriteria Decision Support For Global E-Government Evaluation, *Omega*, No 46, p. 53.

կատարվել՝ գնահատելու համար էլեկտրոնային կառավարման արդյունավետությունն ու բացահայտելու դրա ընձեռած հնարավորությունները: Ընդ որում, նմանատիպ հետազոտություններ իրականացվում են ինչպես պետական կամ միջազգային կառույցների, այնպես էլ ակադեմիական համայնքի և անկախ մասնավոր ընկերությունների կողմից:

Հատկանշական է, որ միջազգային կազմակերպություններից ամենից շատ վերլուծությունները կատարել է ՄԱԿ-ը: 2001 թվականից սկսած՝ էլեկտրոնային կառավարությանը նվիրված տասնյակ ուսումնասիրություններ կատարելով՝ ՄԱԿ-ը եզրահանգում է, որ *կայուն և կենսունակ հասարակություն կերտելու ճանապարհին էլեկտրոնային կառավարությունների ձևավորումն ու դրանց հեղափոխությունները կարևոր դեր են խաղում այլընտրանք չունի*<sup>22</sup>:

Պետական կառավարման թվայնացման արդյունքը հիմնականում ասոցացվում է դրա որակի բարձրացման և ծախսերի նվազման հետ: Հետազոտությունները հիմնականում վերաբերում են թվայնացման որակի հետ կապված հարցերին, իսկ ծախսերի վերլուծության և այդ բաղադրիչով արդյունավետության գնահատման մեթոդաբանություն դեռևս մշակված չէ: Պետական կառավարման արդյունավետության վերլուծությունը պահանջում է գնահատել մի կողմից պետական ծառայողների և նրանց աշխատանքի արտադրողականության կապը, մյուս կողմից՝ պետական կառավարման համար հատկացվող ֆինանսական միջոցների և նոր տեխնոլոգիաների ներդրման հետևանքով ծախսերի տնտեսման կապը: Այս հարցերի անորոշությունը հանգեցնում է ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման, երկրի սոցիալ-տնտեսական զարգացման պոտենցիալի ոչ լիարժեք օգտագործման, ինչպես նաև հասարակության կողմից պետական ինստիտուտների նկատմամբ ունեցած վստահության նվազման:

**Վերը բերված վերլուծությունը պետության կայացածության, նրա տնտեսական և քաղաքական հիմնահարցերի վերաբերյալ թույլ է տալիս եզրահանգել, որ՝**

- Ներկայումս պետական կառավարման ոլորտում թվային փոխակերպումներն ուղղված են «էլեկտրոնային կառավարությունից» դեպի «թվային կառավարություն» անցումն ապահովելուն: «էլեկտրոնային

---

<sup>22</sup> United Nations. *United Nations e-Government Survey 2018*. New York: UN Publishing Section, 2018, pp. 193-194.



կառավարության» պարագայում տեխնոլոգիաները կիրառվում են պետական կառավարման մարմինների կատարած գործողություններն ավտոմատացնելու, դրանց աջակցելու նպատակով, մինչդեռ «թվային կառավարությունում» այդ տեխնոլոգիաները կիրառվում են պետական կառավարման համակարգի արդյունքայնությունն ապահովելու նպատակով: Լիարժեք ֆունկցիոնալ համակարգի ձևավորումը, որը բաղկացած է պետական կառավարման մարմիններից, գործարար համայնքից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից, և որտեղ թվային կառավարությունը հանդես է գալիս որպես կապող օղակ, ապահովում է վերը թվարկված խաղացողների փոխգործակցությունը: Պետությանը վերապահվում է միասնական թվային էկոհամակարգի միջոցով քաղաքացիների և կազմակերպությունների փոխգործակցությունն ապահովողի և կազմակերպչի դեր:

- Չնայած էլեկտրոնային կառավարության համեմատական վերլուծության և թվային եղանակով ծառայությունների մատուցման հիման վրա երկրների դասակարգման կարևորությանը՝ փորձագետների շրջանում միասնական մոտեցում չկա դրանցից առավել ընդունելի մեթոդի կամ լավագույն փորձի առումով:
- Ներկայումս ամբողջ աշխարհում տեղի ունեցող թվային փոխակերպումները լայնորեն ներդրվում են նաև պետական կառավարման համակարգում՝ նպատակ ունենալով ամբողջական ինտեգրված համակարգերի միջոցով ապահովել մատուցվող պետական ծառայությունների որակը և դրանցից քաղաքացիների բավարարվածության աստիճանը: Թվայնացումը բարձրացնում է պետական համակարգի աշխատանքի արդյունավետությունը՝ նպաստելով առավել արդյունավետ սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր իրագործելուն: Ուստի կարելի է պնդել, որ պետության կայացածության մակարդակի գնահատման ժամանակ անհրաժեշտ է պատշաճ ուշադրություն դարձնել երկրի թվայնացման, պետական համակարգում թվային տեխնոլոգիաների ներդրման տարաբնույթ ցուցանիշներին: Կարելի է պնդել, որ պետության կայացածության մակարդակի վրա ուղղակի ազդեցություն ունեն երկրի թվայնացման, պետական համակարգում թվային տեխնոլոգիաների ներդրման գործոնները:

Տնտեսության թվայնացումը հետ է մնում և չի բավարարում արդի պահանջներին: Բացի դրանից, կառավարման համակարգի և տնտեսության թվայնացման արդյունավետության համար կարևոր նշանակություն ունի հասարակության թվայնացումը, հասարակության տարբեր շերտերում թվային գիտելիքների և հմտությունների կատարելագործումը, որը, ցավոք սրտի, գործնականում անտեսվում է:

### 3. ՀՀ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ. ԹՎԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### 3.1. Թվային սահմանադրականության հարացույցը

Ավանդաբար, սահմանադրականությունը բնորոշվում է որպես սահմանադրական նորմերի իրացվածության մակարդակ իրական կյանքում: Սահմանադրությունները կարգավորում են հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները, որոնցից առանցքայիններից է տնտեսական ոլորտը: Սահմանադրությունն ամրագրում է այն սահմաններն ու կանոնները, որոնց շրջանակում պետք է ծավալվեն տնտեսական գործակալների միջև տնտեսական հարաբերությունները, ինչպես նաև իրականացվի պետության կողմից վարվող տնտեսական քաղաքականությունը: Այդ սահմանների պահպանմամբ է երաշխավորվելու քաղաքացիների սոցիալ-տնտեսական շահը՝ համընդհանուր բարեկեցությունը և սոցիալական արդարությունը:

**Թվային սահմանադրականության**<sup>23</sup> հարացույցի ձևավորումը պայմանավորված է թվայնացման գործընթացների արդյունքում հանրային իշխանությունից տարբերվող քվադր- հանրային իշխանության առաջացմամբ, որը կրում է վերագգային բնույթ և պատկանում թվային տեխնոլոգիաներին տիրապետողներին: Նման պայմաններում խնդիր է առաջանում սահման դնելու այդ թվային իշխանության նկատմամբ՝ պաշտպանելու համար մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական:

Հայաստանի թվայնացման ռազմավարությունը նախատեսել է Ազգային կիբեռանվտանգության գերազանցության կենտրոն, որը պետք է ապահովի հետևյալ արդյունքները.

1. Պետական և մասնավոր հատվածին կիբեռանվտանգության խորհրդատվական ծառայությունների մատուցում և աջակցում
2. Կիբեռանվտանգության ոլորտում որակյալ աշխատուժի պատրաստում

---

<sup>23</sup> Giovanni De Gregorio, The rise of digital constitutionalism in the European Union, Oxford University Press and New York University School of Law, 2021.

3. Կիբեռանվտանգության ստանդարտների, միջազգային փորձի վերլուծություն և պարբերական հաշվետվությունների մշակում
4. Կիբեռանվտանգության գրագիտության բարձրացման և գիտելիքների զարգացման միտված ուղեցույցների մշակում՝ հանրային և մասնավոր հատվածի համար
5. Կիբեռանվտանգության ստանդարտների պարբերական վերանայում և չափանիշների հաստատում
6. Ստանդարտների կիրառելիության ստուգում և համակարգերի սերտիֆիկացում
7. Կիբեռանվտանգության, արհեստական բանականության հետազոտական նախագծերի իրականացում և «ԴԵՄՈ» լաբորատորիաների ստեղծում
8. Ինկուբացիոն /աքսելերացիոն ծրագրերի տրամադրում
9. Կիբեռանվտանգության ոլորտում ստարտափերի աջակցում և խթանում

Այնուհանդերձ, Հայաստանի կիբեռանվտանգության ճարտարապետությունը շարունակում է մնալ խոցելի, ինչը հատկապես պայմանավորված է ազգային օրենսդրությունում և գործնական կառուցակարգերում **Կրիտիկական տեղեկատվական ենթակառուցվածքների** սահմանման, դրանց գատորոշման չափանիշների և ռեգիստրի բացակայությամբ: Անհրաժեշտ է մշակել վերջիններս՝ առաջնորդվելով ԵՄ կիբեռանվտանգության գործակալության ստանդարտներով<sup>24</sup>:

Հարկավոր է մշակել Կիբեռտիրոջություն արտակարգ իրավիճակներին արձագանքման պլան, ինչպես նաև պարբերաբար իրականացնել համապատասխան սիմուլյացիոն վարժանքներ՝ նմանատիպ սթրեսային իրավիճակներում պետության և հանրության արձագանքման կարողությունները մեծացնելու և Հայաստանի թվային անխափանությունը երաշխավորելու համար:

Թվային սահմանադրականության գումարելիներից հաջորդը *թվային սոցիալական պետությունն է*:

Տնտեսական հարաբերություններում ունեցած իրենց դերակատարմամբ պետությունները բաժանվում են երկու լայն խմբի՝ սոցիալական և ազատա-

---

<sup>24</sup> National Cyber Security Strategies, Practical Guide on Development and Execution, EUCA, 2012.

կան պետություններ: Չնայած երկու դեպքում էլ տնտեսական կարգը հիմնված է շուկայական տնտեսական հարաբերությունների վրա, այնուհանդերձ, **սոցիալական պետությունները** ստանձնում են տնտեսական հարաբերություններում անխուսափելիորեն առաջացող «սոցիալական անհարթությունները» (աղքատությունը, եկամուտների բևեռացումը, գործազրկությունը և այլն) նպատակային պետական քաղաքականությունների միջոցով մեղմելու պարտականություններ, այդ թվում՝ սոցիալական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական ապահովագրության պոզիտիվ պետական քաղաքականությունների վարման ճանապարհով:

Հայաստանի Հանրապետությունը Սահմանադրության 1-ին անփոփոխելի հոդվածով իրեն հռչակել է սոցիալական պետություն: Այս հիմնարար սկզբունքն իր հետագա որոշակիացումն է ստացել Սահմանադրության 12-րդ հոդվածում, որտեղ, որպես ՀՀ տնտեսական կարգի հիմք, ամրագրվել է սոցիալական շուկայական տնտեսության սկզբունքը: Այս սկզբունքը պատմականորեն ձևավորվել է Եվրոպական տարածքում, ուր գերակշռողը սոցիալական բնույթով պետություններն են: Մասնավորապես, գործնականում այն առաջին անգամ կիրառվել է 1949 թվականին Գերմանիայում՝ Կոնրադ Ադենաուերի Կառավարության կողմից, և հենց այդ հայեցակարգի վրա հիմնված պետական քաղաքականությամբ է տեղի ունեցել ավերակների վերածված գերմանական տնտեսության հետպատերազմյան վերածնունդը, արձանագրվել տնտեսական պատմության մեջ առավել հայտնի երեք «տնտեսական հրաշքներից» մեկը:

Եվրոպական միությունը, *Լիսաբոնյան համաձայնագրի* շրջանակներում (որը ոչ պաշտոնապես կոչվում է նաև Եվրոպական միության Սահմանադրություն), Միության ողջ տարածքի համար որդեգրել է սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը (Հոդվ. 2, մաս 3):

Սոցիալական շուկայական տնտեսության հայեցակարգը դիրքավորվում է երկու այլընտրանքային ծայրահեղ մոտեցումների միջև՝ շուկայական մեխանիզմի գերազնահատված և պետության թերազնահատված կարգավորիչ դերով ուղեկցվող *ազատական շուկայական տնտեսության* (անզրուսքսոնական մոդել, որին առավելապես հարում են ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Կանադայի, Ավստրալիայի, Իռլանդիայի, Նոր Զելանդիայի տնտեսական կարգերը) և հանրային սեփականության գերակայությամբ ու պլանային

տնտեսության տարրերով բնութագրվող *սոցիալիստական շուկայական փնտեսության* (Չինաստանի տնտեսական կարգն է)՝ հանդիսանալով սոցիալական պետություններին ամենաբնորոշ տնտեսակարգը<sup>25</sup>:

**Թվային սոցիալական պետությունները** սահմանվում են որպես պետություններ, որոնք ունեն թվային տվյալներով և տեխնոլոգիաներով առաջնորդվող սոցիալական պաշտպանության և օգնության համակարգեր, որոնք օգտագործվում են ավտոմատացման, կանխատեսման, նույնականացման, բացահայտման, թիրախավորման և պատասխանատվության ենթարկման նպատակներով<sup>26</sup>:

Թվային սոցիալական պետությունում կարևոր նշանակություն է ձեռք բերում թվային սոցիալական արդարության գաղափարը, որն արտացոլվում է թվային գործիքներից օգտվելու գործընթացում ներառականության մակարդակով: Թվային գրագիտության ցածր մակարդակը հասարակության որոշակի շերտերին զրկում է թվայնացման օգուտներից օգտվելու հնարավորությունից, որն ինքնին սոցիալական բևեռացվածության խորացման ազդակ է թվային հասարակարգում: Նույնպիսի խնդիր է համացանցին հասանելիության սահմանափակ մակարդակը: Որպես կանոն, հասարակության աղքատ շերտերին է բնորոշ թվային տնտեսությանը սահմանափակ հասանելիությունը: Մյուս կողմից, այդ սահմանափակ հասանելիությունն էլ ավելի է խորացնում անջրպետը աղքատների և ոչ աղքատների միջև: Սոցիալական անարդարության նշված թվային անջրպետը սոցիալական պետությունները պետք է հաղթահարեն ներառականությանը միտված նպատակաուղղված սոցիալական քաղաքականության միջոցով:

Այսպիսով, մարդու սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանությունը թվային սոցիալական պետությունում ստանում է նոր իմաստ, որը մարտահրավեր է ժամանակակից սոցիալական պետությունների համար:

---

<sup>25</sup> Marktanner M., Addressing the Marketing Problem of the Social Market Economy, Berlin 60 Years of Social Market Economy - Formation, Development and Perspectives of a Peacemaking Formula, 2010, pp. 170-188.

<sup>26</sup> Report of the Special rapporteur on extreme poverty and human rights, A/74/48037, UN, 2019.

### **3.2. Ինստիտուցիոնալ միջավայրի զարգացման միտումները թվայնացման համատեքստում**

Վերջին տասնամյակներին տեղեկատվական անհամաչափության, պետության՝ արագ փոփոխվող իրողություններին դժվար հարմարվելու և այլ խնդրահարույց հանգամանքների արդյունքում հասարակական կյանքում դրսևորվում են տարաբնույթ սոցիալ-տնտեսական խնդիրներ: Մինչդեռ էնդոգեն և էկզոգեն ծագում ունեցող տարբեր երևույթներ ստիպում են տնտեսություններին անցնել լուրջ վերափոխումների միջով և անհրաժեշտ բարելավումներին զուգահեռ ներդնել նաև նոր՝ թվային ինստիտուտներ:

Ինստիտուցիոնալ մոտեցումը թույլ է տալիս միևնույն դիրքերից ուսումնասիրել հակադիր հատկություններով օժտված տնտեսական երևույթները և գործընթացները՝ տալով հնարավորություն տեսնելու դրանց ընդհանուր բնությունը և մեկից մյուսին անցնելու պայմանները և իրավիճակները: Դրա կիրառումը նպաստում է իրական տնտեսական կյանքին վերաբերող գործնական հետազոտությունների բարելավմանը, տարբեր սոցիալ-տնտեսական երևույթների համար այն թույլ է տալիս բացահայտել դիտարկվող հարաբերությունների մասնակիցների յուրահատուկ նորմերը, հետևել դրանց էվոլյուցիային և հաշվի առնել նորմերի փոփոխման անհրաժեշտ ուղղությունները ռեֆորմների ժամանակ<sup>27</sup>:

Առանց համապատասխան միջավայրի ձևավորման հնարավոր չէ անցումը թվային տնտեսությանը, իսկ այդ միջավայրը ձևավորվում է արդեն առկա տարատեսակ ռեսուրսների և ինստիտուտների ու տնտեսական սուբյեկտների՝ այդ պահին առկա փոխազդեցության համակարգի ազդեցությամբ: Հենց այդ փոխազդեցության գործընթացի ժամանակ է ի հայտ գալիս հասարակության կենսագործունեության թվայնացմանը խոչընդոտող որոշակի ինստիտուցիոնալ նորմերի անկատարությունը, ակներև է դառնում զանազան արգելակող երևույթների բացասական ազդեցությունը<sup>28</sup>:

<sup>27</sup> Управление персоналом и человеческий капитал современной России, коллективная монография, под ред. Гелиха О.Я., Соломина В.П., Тульчинского Г.Л., ООО «Книжный Дом», Санкт-Петербург, 2011, 416 с., сс. 64-65.

<sup>28</sup> Санникова Т.Д., Институциональные и ресурсные ограничения на пути решения задачи перехода к цифровой экономике, Вопросы инновационной экономики, т. 9, № 3, июль-сентябрь, 2019, сс. 633-634.

Ինստիտուտների միջոցով հաճախ հնարավոր է դառնում լուծել հասարակության առանձին անդամների համար անլուծելի խնդիրները, ինչը վերածում է դրանց ինտելեկտուալ համակարգերի, որոնք նպատակներին հասնելու ստուգված ճանապարհներ են սահմանում: Ինստիտուցիոնալ միջավայրը ձևավորում է որոշումների ընդունման սահմանափակող բնույթի հասարակական շրջանակներ, որոնց ներսում առաջանում է անորոշության իջեցված մակարդակով և գործողությունների կանխատեսելի հետևանքներով տիրույթ՝ կայունացնող տնտեսվարման միջավայրը և ավելի հուսալի դարձնող տնտեսական գործունեության ակնկալելի արդյունքների ստացումը: Այդ միջավայրը ստեղծում է անձանց գործունեությունը հստակ հունով տանող խթանների համակարգ. բացասական խթաններն ուղղված են վարքի մի շարք դրսևորումների ճնշմանը, իսկ դրական խթաններն ապահովում են սուբյեկտներին գործառնական ծախքերի նվազմամբ և աշխատանքի արդյունավետության բարձրացմամբ<sup>29</sup>:

Այդպիսով, ինստիտուցիոնալ միջավայրը տալիս է սոցիալ-տնտեսական համակարգի զարգացման ուղղությունը, վերջինիս արդյունավետ գործառնման կարևոր պայմանն է՝ հաստատող սուբյեկտների միջև կայուն փոխազդեցություն<sup>30</sup>:

Ինստիտուտների ստեղծումը պահանջում է խորը գիտակցում այն ամենի, թե ինչն է հանգեցնում հաջող փոխակերպումների, որոնք են դրանց նպաստող գործոնները, նաև հասարակության պահանջմունքները և նախասիրությունները: Թվային հասարակության պայմաններում ինստիտուցիոնալ միջավայրի զարգացումը կարևոր է նրանով, որ թվային տեխնոլոգիաների ներդրմամբ թելադրվող փոփոխությունները ձևափոխում են արդյունաբերական հասարակության օրոք առաջացած նորմերը և խաղի կանոնները: Սոցիալ-տնտեսական փոխազդեցությունների տեղափոխումն ինտերնետային միջավայր, սոցիալական ցանցերի, բլոկչեյնի, թվային պլատֆորմների ի հայտ գալը պահանջում են նոր սկզբունքների մշակում: Շատ երկրներում

---

<sup>29</sup> Управление персоналом и человеческий капитал современной России, коллективная монография, под ред. Гелиха О.Я., Соломина В.П., Тульчинского Г.Л., ООО «Книжный Дом», Санкт-Петербург, 2011, 416 с., сс. 65-66.

<sup>30</sup> Дигилина О.Б., Тесленко И.Б., Савельев И.И., Формирование институциональной среды цифровой экономики в России, Вестник Академии, №4 (57), декабрь, 2018, Московская академия предпринимательства, Москва, сс. 75.



պետական մակարդակով փորձում են իրագործել ինստիտուցիոնալ միջավայրի վերակազմավորում՝ պայմանավորված տարբեր գործոններով՝ ներառյալ գլոբալ ցանցային աշխարհը, անձանց աճող սպասումները, նոր տեխնոլոգիաները, և բարդ խնդիրներով, որոնց բախվում են ընկերությունները, երկրները և հասարակությունը:

Ինստիտուցիոնալ միջավայրում թվայնացման ազդեցությամբ տեղի ունեցող երևույթների, միջավայրի հիմնական բաղադրիչների ձևափոխման կամ ինստիտուցիոնալ նոր միավորների առաջացման հանգամանքների պարզորոշումը ենթադրում է հետևյալ խնդիրների լուծումը.

- մանրամասն ներկայացնել տնտեսության թվայնացմամբ պայմանավորված հիմնական ինստիտուցիոնալ իրողությունները, առանձին ուշադրություն դարձնել պլատֆորմներին և դրանց շահառուների գործունեությանը,
- դիտարկել գործառնական ծախքերի հայտնի տեսակների ձևափոխումը՝ թվային միտումներով պայմանավորված, և նոր՝ թվային ծախքերը,
- համակարգել ինստիտուցիոնալ ծուղակները, տալ դրանց համալիր դասակարգումը,
- քննարկել պետական կառավարման վրա ունեցած ազդեցությունը, թվային կառավարման սկզբունքները և տարրերը, հնարավոր խնդիրները:

Ինստիտուցիոնալ միջավայրը թվայնացման կոնտեքստում և թվային տնտեսության ինստիտուտները մասնագիտական գրականության շրջանակներում դիտարկվել են թվային իրողությունների սկզբնավորումից ի վեր, սակայն միջավայրի վերափոխման տեսանկյունից առավելապես վերաբերել են առանձին բաղադրիչներին: Երբեմն իրականացվել են նաև մի քանի բաղադրիչների կամ գրեթե ողջ միջավայրի վերաբերող հետազոտություններ: Նշված օբյեկտները եղել են առավելապես արտասահմանյան հետազոտողների ուշադրության կենտրոնում:

#### *Թվային սպառման և արտադրության հրապրայ հարցերը*

Տնտեսության վրա թվայնացման ունեցած ազդեցության չափումը և մակրոտնտեսական վիճակագրությունում թվային տնտեսության իրողությունների հաշվառումը մասնագետների ուսումնասիրությունների կարևոր

առարկաներից են: Համախառն ներքին արդյունքում չեն արտացոլվում անվճար սպառման մշակույթը (ներառյալ՝ ֆայլերի անօրինական ներբեռնումը), թվային ապրանքների և ծառայությունների արտադրությունը, նախկինում շատ տարածված ֆիզիկապես շոշափելի ապրանքների փոխարեն թվային փոխարինիչների կիրառությունն ու դրանցով վերոնշյալ առարկաներից ստացվող ծառայությունների սպառման մակարդակի բարձրացումը և այլն<sup>31</sup>:

Բարիքների համատեղ օգտագործումը նույնպես որոշակի ռիսկեր է ստեղծում, օրինակ՝ օտար սեփականության ոչ պատշաճ օգտագործման ռիսկը գործարքի մասնակիցների պարտավորությունների իրավաբանական ձևակերպման բացակայության դեպքում, հարկային մուտքերի նվազման և ստվերային տնտեսության ընդլայնման ռիսկերը, անհատական բարեկեցության մակարդակի՝ առանց արտադրության ծավալների պարտադիր աճի ապահովման բարձրանալու հանգամանքը: Սեփականություն հանդիսացող բարիքների քանակը չի աճում, ընդլայնվում են ժամանակավոր օգտագործման հնարավորությունները՝ բարեկեցության մակարդակի աճի տպավորություն ստեղծելով, մինչդեռ արտադրության ծավալները և վերականգնման կարողությունները կարող են նվազել, իսկ օգտագործվող բարիքները՝ արագացված կերպով մաշվել<sup>32</sup>: Սա ի ցույց է դնում թվային տնտեսության՝ մակրոտնտեսական հաշվառման գործընթացում համալիր ներկայացման աշխատանքների և դրանց շրջանակներում միջազգային գործընկերների հետ գործակցության կարիքը: Նշված իրողություններից բխում է նաև համատեղ սպառման ոլորտում պետական հսկողության մակարդակի բարձրացման և ստվերային գործունեության բացառման կարևորությունը:

Թվային ապրանքներ արտադրողների համար իրենց կոնտենտի անօրինական օգտագործման դեմ պայքարի տարբերակից է ներբեռնման անհրաժեշտությունը բացառելը. ամեն ինչ իրականացվում է ամպային տեխնոլոգիաների կիրառմամբ, իսկ սպառողը ձեռք է բերում ժամանակավոր հասանելիության հնարավորություն: Ժամկետի լրանալուն հետևում է լավա-

---

<sup>31</sup> Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Մինասյան Կ., Մխիթարյան Ժ., Զաքարյան Հ., ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2020, 160 էջ, էջեր 36-42:

<sup>32</sup> Воронцовский А.В., Цифровизация экономики и ее влияние на экономическое развитие и общественное благосостояние, Вестник Санкт-Петербургского университета, т. 36, №2, Экономика, 2020, сс. 210, 213.

գույն դեպքում սահմանափակ հասանելիություն, բացառված չեն նաև արտադրողի կողմից հնարավոր խափանումներն անգամ մինչև լրանալը և դրա հետևանքով ի հայտ եկող կորուստները<sup>33</sup>: Էական է մշակել արդյունավետ մեխանիզմներ ընկերությունների՝ թվային արտադրության անվան տակ իրականացվող կամայականությունները բացառելու, կորուստների նվազեցման նպատակով թվային միջավայրում սպառողների գործունեության արդյունքների պահպանման և հասանելիության ապահովման համար:

*Թվայնացման միտումներն աշխատանքի շուկայում*

Վիրտուալացումը և ինտելեկտուալացումը հանգեցնում են աշխատանքի վարձման համակարգից աշխատուժի դուրս գալու պայմանների ստեղծման, քանի որ արտադրության միջոցները շատ դեպքերում կարող են սահմանափակվել անհրաժեշտ ինտելեկտուալ աշխատանքի անմիջական կատարողի սեփականություն հանդիսացող սարքավորումներով (ֆրիլանսի կամ այլ դեպքերում)<sup>34</sup>: Սա նշանակում է ֆորմալ զբաղվածության անկում, և այն կարող է ծնել սոցիալական բնույթի խնդիրներ: Բժշկական ապահովագրությունը, կենսաթոշակային համակարգը, բռնուսների համակարգերը և աշխատողների իրավունքների պաշտպանության մի շարք մեխանիզմներ կարող են հոդս ցնդել, ինչի արդյունքում աշխատողները ստիպված կլինեն նվազեցնել իրենց սպառումը՝ հոգուտ նշված սոցիալական բաղադրիչների համար խնայելու: Հնարավոր ռիսկերից են նաև ցածր վարձատրությունը և աշխատաժամանակի վերահսկողության բացակայությունը, հատկապես պլատֆորմների կիրառության դեպքում: Սոցիալական պաշտպանության ինստիտուտները քաղաքական և տնտեսական լիովին այլ պայմանների ծնունդն են, և ներկա իրողություններին դրանց հարմարեցման համար կարող է պահանջվել աշխատանքային հարաբերությունների նոր մոդել: Մինչդեռ աշխատաշուկայի առկա ինստիտուտներն արգելակում են մի շարք միտումների համատարած դառնալը և նոր պարադիգմի ներդրվելը՝ ստեղծելով խզում տնտեսության ներկայիս կազմակերպման և աշխատանքի շուկայի վերա-

<sup>33</sup> Śledziwska K., Włoch R., The Economics of Digital Transformation: The Disruption of Markets, Production, Consumption and Work, 2021, pp. 153-155.

<sup>34</sup> Василенко Н.В., Трансформация и освобождение труда в условиях новой экономики, Инновационная экономика и промышленная политика региона (ЭКОПРОМ-2016): труды международной научно-практической конференции 22-24 сентября 2016 года, под ред. д-ра экон. наук, проф. Бабкина А.В., Издательство Политехнического университета, Санкт-Петербург, 2016, 671с., с. 37.

փոխման միջև<sup>35</sup>: Բացի այդ, պլատֆորմների կապող գործառույթը կարող է նվազեցնել աշխատաշուկայում վերաբաշխման արդյունավետությունը, եթե այն թուլացնում է աշխատողի դիրքերը, խթանում ցածր որակավորման գործերում ներգրավվելը:

Պլատֆորմների միջնորդական գործառույթը կարող է աշխատողների համար բարձրացնել գործառնական ծախքերը, եթե նրանք աշխատանք փնտրելու և սպասելու վրա պետք է երկար ժամանակ ծախսեն: Նվազագույն աշխատավարձի անալոգիայով կարգավորումների բացակայության դեպքում պլատֆորմները կարող են գրեթե չունենալ խթաններ՝ աշխատանք փնտրելն արդյունավետ դարձնող ալգորիթմների գծով ներդրումներ անելու համար: Դրանք կարող են նաև չունենալ աշխատողների և պատվիրատուների միջև վեճերի լուծման արդյունավետ մեխանիզմներ, և շուկայի ծախսողումների հետ կապված ռիսկերը կարող են փոխանցվել աշխատողներին, եթե պատվիրատուներն աշխատողների արդյունքներից բավարարված չեն և դրա արդյունքում չեն ցանկանում վճարել վերջիններին<sup>36</sup>:

Այդպիսով, թվայնացման պայմաններում աշխատաշուկայի ինքնակազմակերպման ներկա միտումները հակասում են սոցիալական պաշտպանության և բարեկեցության համար ներդրվող ջանքերին: Վստահության ինստիտուտը չվերահսկվող թվային միջավայրում դեռևս չի հաջողում, ինչը հնարավոր վերափոխումների և ռիսկերի կոնտեքստում հիմնավորում է կարգավորիչների միջամտության և ոլորտի մեխանիզմների կայացման անհրաժեշտությունը:

*Դիտարկումներ թվայնացման ծուղակների և գործառնական ծախքերի վերաբերյալ*

Թվային տնտեսության պայմաններում ստեղծվում են խնդիրներ՝ կապված մտավոր սեփականության սպեցիֆիկացիայի հետ, և դժվար է իրագործել իրավունքների լիարժեք պաշտպանություն. առկա են թվային օբյեկտներ, որոնք սեփականության իրավունքի օբյեկտներ չեն, գերակշռում են ոչ

---

<sup>35</sup> Śledziwska K., Włoch R., The Economics of Digital Transformation: The Disruption of Markets, Production, Consumption, and Work, 2021, pp. 124-125, 127, 129, Садовая Е.С., Цифровая экономика и новая парадигма рынка труда, Мировая экономика и международные отношения, т. 62, № 12, 2018, сс. 40, 42.

<sup>36</sup> Drahokoupil J., Piasna A., Work in the Platform Economy: Beyond Lower Transaction Costs, Intereconomics: Review of European Economic Policy, Volume 52, Number 6 (November/December), 2017, pp. 335-336, 338.

Ֆորմալ նորմեր, որոնց շնորհիվ հնարավոր է լինում օգտվել սահմանափակ հասանելիությամբ կոնտենտից, կարող են ստեղծվել դժվարություններ արհեստական բանականության շնորհիվ ստեղծվող արդյունքների՝ վերոնշյալ կոնտեքստում դասակարգման և պաշտպանության հետ: Այս իրավիճակում կարևոր է նշված ռիսկերի չեզոքացմանը միտված կարգավորումների մշակումը և կիրարկումը, որպեսզի թվային միջավայրում տեղի ունեցող սպառումը հակասություններ չունենա սպառման օբյեկտների սեփականատերերի հետ, ինչպես նաև չառաջանան դժվարություններ լիովին այլ մեթոդներով ստեղծվող արդյունքների արտադրության և իրացման մասով:

Լուրջ խնդիր է թվային տեխնոլոգիաների ստեղծվելու ու ներդրվելու արագության և դրանց նորմատիվ կարգավորման միջև բացահայտ խզումը, որը դրսևորվում է երկու ձևով՝ իբրև թվային զարգացման ինստիտուցիոնալ միջավայրի տարասեռություն և իբրև թվային միջավայրը կարգավորող օրենքների կիրարկումը հսկելու արդյունավետ մեխանիզմների բացակայություն: Եթե անգամ տեխնոլոգիական առաջընթացից նորմատիվ իրավական կարգավորման հետ մնալը հնարավորինս նվազեցվի, առկա են այդ տեխնոլոգիաների օգնությամբ պատժից խուսանավելու հնարավորություններ: Թվայնացման գործընթացների արգելակման հիմնական պատճառներից է նաև թվային միջավայրում սպառման և անվտանգության անհրաժեշտ հմտությունների բացակայությունը բնակչության զգալի մասում, ինչի արդյունքում խզվում է կապը թվայնացմանը միտված նախաձեռնությունների և թվային մշակույթի առկա վիճակի միջև: Զուգահեռաբար առկա է բնակչության որոշակի հատված, որը թվայնացման և հարակից վերափոխումների հանդեպ զգուշավոր է՝ անանուն լինելու և անպատճելիության զգացողությամբ, հեռախոսազանգային և ինտերնետային խարդախություններով, բանկային հաշիվներին և քարտային տվյալներին անօրինական հասանելիությամբ, ուրիշների տվյալները վնասակար ծրագրային ապահովմամբ խլելով և ապա հետ տրամադրելու դիմաց ֆինանսական փոխհատուցում պահանջելով և այլ ռիսկերով պայմանավորված:

Թվայնացման գործընթացները ծնում են նաև նոր տեսակի գործառնական ծախքեր: Թվայնացմանը դիմադրելու ծախքերը *ex ante* գործառնական ծախքեր են, որոնք առաջանում են, քանի որ տնտեսական գործակալները, շատ հաճախ արժեքային ընկալումներից ելնելով, պատրաստ չեն դիմելու

թվային լուծումներին (օրինակ՝ պլատֆորմներին, եթե առկա է ցանկություն պաշտպանելու անձնական տվյալները): Սրանք բնորոշ են օֆֆլայնից օնլայնին անցմանը: Արդյունքում նման սկզբունքներով առաջնորդվող կամայական գործակալը կրում է փոխազդեցության լրացուցիչ ծախքեր, հատկապես այն դեպքում, երբ ինստիտուցիոնալ ենթակառուցվածքը դրդում է նման փոխազդեցության: Ժամանակակից լուծումներն օգնում են թվայնացմանը դիմադրելու խնդրի հարթման գործում, եթե այդ լուծումներն օգնում են պաշտպանվել այլ կողմերի թշնամական գործողություններից:

Թվային դիմադրության ծախքերը *ex post* ծախքեր են՝ ծագող համապատասխան լուծումների կիրառությունից հետո և պայմանավորված դրանցից ծագող ձախողումներով, և ենթադրում են տնտեսական գործակալների դիմադրություն և կոնֆլիկտայնություն թվային միջավայրի ներսում, օրինակ՝ երբ թվային պլատֆորմն ի վիճակի չէ արդյունավետ կորրեկցիաների գոյություն ունեցող կամ կրկին ծագող փոխազդեցությունները դա օգտագործողների հետ կամ ստեղծելու գործառնությունների իրականացման հավասար պայմաններ: Թվային դիմադրությունն արդյունքն է թվային ենթակառուցվածքների ոչ ֆորմալ նորմերի և ֆորմալ ալգորիթմների մերձեցման, և այդ մերձեցումից կարող է առաջանալ լրացուցիչ կոնֆլիկտայնություն: Մասնավորապես, եթե կիրառվում են արհեստական բանականության ալգորիթմներ պլատֆորմների օգտագործողների պահանջմունքները կանխագալու և այդ հիմքով թիրախային առաջարկություններ անելու համար, կարող է ծագել լրացուցիչ թվային դիմադրություն: Համապատասխան գործիքակազմի կիրառությամբ անձի վերաբերյալ կարելի է ստանալ ավելի շատ ինֆորմացիա, քան անձն իր մասին կարող է տեղյակ լինել, ինչի արդյունքում վերջինս կարող է դիմադրել՝ դիցուք տեղեկատվությունը դիտավորյալ կերպով խեղաթյուրելու եղանակով: Արդյունքում վստահության հատուկ մեխանիզմների ձևավորումը դառնում է ավելի քան անհրաժեշտ<sup>37</sup>:

Մասնագետների պատրաստման և թվային տնտեսությունում վերջիններիս հանդեպ պահանջվածության միջև կառուցվածքային-կոմպետեն-

---

<sup>37</sup> Рыжкова М.В., Чиков М.В., Институциональная природа цифровых платформ, Вестник Бурятского государственного университета. Экономика и менеджмент, № 4, 2019, сс. 75–76, Рыжкова М.В., Чиков М.В., Транзакционные эффекты развития блокчейн-технологий, Вестник Бурятского государственного университета. Экономика и менеджмент, № 4, 2020, сс. 129-130.

տային անհավասարակշռության ծուղակը ծագում է թվային տնտեսության կառուցման թիրախային ուղղության և կրթության ինստիտուտի միջև անհամաձայնեցվածության հետևանքով: Սրա չեզոքացման կարևոր օրինակ է տեղեկատվական տեխնոլոգիաների և լայնորեն տարածված նորամուծությունների կիրառումը կրթական գործընթացում, սակայն դասավանդող անձնակազմի պակասը, ծերացումը և չհամալրվելը կամ համալրվելը մանկավարժական ուղղվածությամբ «վերջին հայտով» դիմող անձանցով լրջորեն վնաս են հասցնում և խանգարում այս նպատակի իրագործմանը<sup>38</sup>:

Համակողմանի բնույթի տեղեկատվության ստացման և իրականության վերաբերյալ ճշգրիտ պատկերացումների ձևավորման առումով հայտնի խնդիրներ են «արձագանքման խցիկը» և «ֆիլտրման փոչիկը»: Դրանք իր ցույց են դնում դիտարկվող սուբյեկտի՝ տեղեկատվության ստացման տեսանկյունից մասնատված և մեկուսացված լսարաններում գտնվելու հանգամանքը, իսկ թերտեղեկացման և կեղծ տեղեկատվության մեծ ծավալների կուտակման պարագայում կարող են անգամ լուրջ ազդեցություն ունենալ հանրային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների վրա: Տվյալ զարգացումը մատնանշում է այդ ծուղակներից տուժած անձանց ինֆորմացիոն մեկուսացմամբ պայմանավորված թվացյալ լռության վրա կենտրոնանալու անհրաժեշտությունը, քանի որ մեծ է հավանականությունը, որ հասարակությունն իրականում գործ ունի թափ առնող աղմուկի շրջապտույտի հետ, որը խիստ փոքրաթիվ շահառուների կողմից կարող է օգտագործվել հասարակական կյանքի անդորրի խախտման, ձևավորված նորների քայքայման, սեփական շահերի իրացման, հանրային շահերը վտանգող դիվիդենտների ստացման և նմանատիպ այլ նպատակներով<sup>39</sup>:

Նշված իրողությունները թվային իրականության միտումների ազդեցությամբ դառնում են ավելի վտանգավոր: Սոցիալական ցանցերի, ինտերնետային տարբեր հանրույթների և այլ մեխանիզմների ազդեցությամբ վերը բերված խնդիրները, որոնք առաջ հանդիպում էին միայն իրական կյանքում,

---

<sup>38</sup> Санникова Т.Д., Институциональные и ресурсные ограничения на пути решения задачи перехода к цифровой экономике, Вопросы инновационной экономики, т. 9, № 3, июль-сентябрь, 2019, сс. 635-639.

<sup>39</sup> Möller J., Filter Bubbles and Digital Echo Chambers. The Routledge Companion to Media Disinformation and Populism, edited by Howard Tumber and Silvio Waisbord, Routledge, London, 2021, pp. 92-94, 97.

տեղափոխվում են վիրտուալ տարածություն և բազմապատկվում: Այնուամենայնիվ, հաղորդակցման և կրթական ժամանակակից հնարավորությունների շնորհիվ անձանց համար զգալիորեն մեծացել են գիտական և այլ բնույթի տեղեկատվության ստացման և համեմատման աղբյուրները: Սա նշանակում է, որ առկա կարծիքներին և տեսակետներին հակասող մտքերի հետ հաղորդակցությունն ավելի քիչ է սահմանափակված, թեև սեփական ցանկությամբ և հոգեբանական գործոններով պայմանավորված նշված ծուղակները դրսևորվում են անգամ այդպիսի լայն հնարավորություններին հասանելիության պայմաններում: Այս բացասական իրողությունների ազդեցության նվազեցման նպատակով պետք է հրատապ իրականացնել տեղեկատվության ծագման և ստացման միջոցների հսկողության, կեղծ տեղեկատվության բացառման և հասարակության տարբեր խմբերի՝ իրականությունից բխող պատկերացումների և գիտելիքների ձևավորման աշխատանքներ:

Պետական կառավարման թվային վերափոխումը սոսկ առանձին գործընթացների ավտոմատացում և օպտիմալացում չէ. այն կոչված է փոխելու պետական կառավարման և վերջինիս գործընթացների բովանդակությունը, համապատասխան գործառույթները: Ընդ որում, դա պետք է նպաստի պետական կառավարման որակի բարձրացմանը, պետական միջամտության հիմնավոր լինելուն, արդյունքայնության մակարդակի և արդյունավետության բարձրացմանը, բիզնեսի և բնակիչների գործունեության պայմանների բարելավմանը<sup>40</sup>:

Ուժեղ ինստիտուտները ստեղծում են խթաններ աշխատելու հանուն հանրային բարիքի, և թվային տեխնոլոգիաները հասարակության համար բարենպաստ մղումների հետ համադրվելիս կարող են շատ արդյունավետ լինել պահանջվող արդյունքները բարելավելու տեսանկյունից: Այնուամենայնիվ, սակավաթիվ անձանց դեպքում թվային ռեֆորմները կա՛մ սահմանափակում են հասարակության հաշվին ստացվող օգուտը, կա՛մ ապահովում են հասարակության լրացուցիչ հսկողություն: Թույլ կամ ոչ հաշվետու ինստիտուտների և թվային տեխնոլոգիաների անհամապատասխանությունը հանգեցնում է վերոնշյալ խմբերի հսկողության աճի և կառավարման վերա-

---

<sup>40</sup> Добролюбова Е.И., Южаков В.Н., Ефремов А.А., Ключкова Е.Н., Талапина Э.В., Старцев Я.Ю., Цифровое будущее государственного управления по результатам. Издательский дом «Дело» РАНХиГС, Москва, 2019, 114 с., сс. 21, 70-71, 76, 104, 106.



փոխման նախագծերի ուղղությամբ հանրային սուղ միջոցների վատնման երկակի ռիսկերի ձևավորմանը<sup>41</sup>:

Թվային տնտեսության ինստիտուցիոնալ միջավայրի կառուցմամբ հետաքրքրված երկրները պետք է հասկանան, որ առանց թվային տնտեսության ձևավորման գործընթացում պետական ակտիվ միջամտության և թվայնացման արդյունքների անընդհատ մոնիթորինգի դրված նպատակներին հասնելու հաջողությունը լուրջ կասկածի տակ է դրվում: Թվային կառավարմանն անցնելու ճանապարհին առաջացող մարտահրավերները հաղթահարելու համար էական է հստակ տեսլականի ձևավորումը, որին հաջորդող քայլերը պետք է լինեն կանոնակարգված և միտված իրական փոփոխությունների իրագործմանը: Շահառուների հետ հարաբերվելու ավանդական եղանակները սակավ ծավալով, բայց պետք է շարունակեն գործել թվային լուծումներին զուգահեռ: Այս ամենին գումարվում է նաև տարբեր ոլորտներին վերաբերող տվյալների շտեմարանների կարիքը, քանի որ դրանք կնպաստեն պետական կառավարման բարելավմանը և կլինեն օգտակար հանրությանը հաշվետու լինելու գործում, նաև ակադեմիական շրջանակների կողմից իրականացվող հետազոտությունների համար:

Երբ պլատֆորմը շուկայում զգալի դիրքեր է զբաղեցնում, այն օգտագործողների համար հաճախ դժվարանում են վերջինիս ծառայություններից հրաժարվելը և այլընտրանքներին անցնելը: Պլատֆորմները խթանում են ներդնել ջանքեր և ժամանակ՝ նպաստելով մի լուծումից մյուսին անցնելու ծախքերի ավելի արագ բարձրանալուն, եթե օգտագործողի տվյալները կապված են մի ամբողջ էկոհամակարգի հետ՝ տալով պլատֆորմներին շուկայում խոշոր մասնաբաժին, անգամ մոնոպոլ դիրք: Ցանցային ընկերությունները գլոբալիզացիայի պայմաններում վերածվում են մասնագիտացված միջնորդների, որոնք, դառնալով մոնոպոլիստներ և ազատվելով ավելի փոքր մրցակիցներից, ցանկացած կազմակերպության և անհատի ստիպում են կա՛մ կիրառել գլոբալ մոնոպոլացված շուկայի առաջարկածը, կա՛մ դուրս մնալ միջազգային շուկաներից:

Ցանցային մոնոպոլիաները նաև վերցնում են իրենց հսկողության ներքո և միավորում իրենց գործունեությանն առնչվող, բայց առանձին բիզնես-

---

<sup>41</sup> World Development Report 2016: Digital Dividends. The World Bank, Washington, DC, USA, 2016, p. 152.

ները՝ ապահովելով արտադրության տեղեկատվական և գործառնական ծախքերի նվազեցում: Նման մոնոպոլացումն արգելակում է արդյունավետության ընդհանուր աճը և ծնում է առանձին շուկաների զարգացման խնդիրներ: Նշվածը հիմնավորվում է խոշոր թվային ընկերությունների հավելվածների՝ «ուժով» առաջմղման, փոքր և միջին ձեռնարկությունների շրջանում իրենց գործընկերների աշխատանքի պայմանների փոփոխման և ավելի թույլ մրցակիցների չեզոքացմանը հանգեցնող այլ մեթոդների կիրառմամբ:

Պլատֆորմներում կուտակվող տվյալները զգալի հնարավորություններ են ստեղծում օգտագործողների վերաբերյալ պատկերացում ստանալու, վերջիններիս համապատասխան պրոդուկտները ներկայացնելու և յուրաքանչյուրի համար առանձնահատուկ գնագոյացում իրականացնելու համար: Լրացուցիչ մասնակիցների ներգրավման համար առաջարկվում են անգամ անվճար ապրանքներ և ծառայություններ, որոնց վրա կատարվող ծախսերը սուբսիդավորվում են ներդրողների, գովազդատուների կամ այլ շահառուների հաշվին: Նման մոտեցումները դժվար կիրառելի են ավանդական շուկաներում, որտեղ ծախսերից ցածր գները չեն կարող լինել շուկան մաքրող գներ, իսկ մրցակցության տեսանկյունից կարող են դիտարկվել իբրև անօրինական դեմպինգի դրսևորումներ:

Այնուամենայնիվ, անվճար ծառայություններից օգտվելով՝ մասնակիցները տալիս են իրենց համաձայնությունը փոխանցելու անձնական և վարքագծային տվյալներ, որոնց մշակումից ստացվող արդյունքները մոնետիզացիայի են ենթարկվում՝ ապահովելով գովազդատուներին հասանելիություն պոտենցիալ հաճախորդներին:

Տվյալների խոշոր ծավալներին հասանելիությանը զուգահեռ շուկայական ուժի պահպանման և հզորացման նպատակով էական ուշադրություն է դարձվում անհրաժեշտ ալգորիթմների մշակմանը և կիրառմանը: Արդյունքում արհեստական բանականությանը վերաբերող հետազոտություններով համալսարանների և հետազոտական ինստիտուտների հետ մեկտեղ աչքի են ընկնում նաև մասնավոր կազմակերպությունները: Մասնավորապես, 2016 թվականի սկզբից մինչև 2021 թվականի հունվարի վերջ իրականացվել է այս սեգմենտում ակտիվ սթարտափների հետ միավորման և դրանց ձեռքբերման 308 գործարք՝ 28.4 միլիարդ ԱՄՆ դոլար ընդհանուր արժողությամբ: Ձեռք բերող ընկերությունների առաջատար հնգյակը բացառապես

ԱՄՆ-ից է (Apple, Google, Microsoft, Facebook, Amazon), թեև առաջին տասնյակում են նաև տեխնոհսկաներ Չինաստանից (Baidu և Tencent Holdings):

Ջուզահեռաբար տեղի է ունենում տաղանդների և հմտություններ ունեցողների՝ սահմանափակ թվով վայրերում կուտակում. արհեստական բանականությամբ զբաղվող հետազոտողների 59%-ն աշխատում է ԱՄՆ-ում, 11%-ը՝ Չինաստանում: Հետազոտողների ծագման առումով առաջատարները դարձյալ Չինաստանը (29%) և ԱՄՆ-ն (20%) են, որոնց հաջորդում են եվրոպական երկրները, Հնդկաստանը, Իրանը, Իսրայելը և այլք:

Խոշոր տեխնոլոգիական ընկերությունները ստեղծում են արտահոսք ակադեմիական ոլորտից և պետական կառավարման համակարգից. որակյալ մասնագետների պահանջը և մասնավոր ոլորտի առաջատարների համար աշխատելու առավել նախընտրելի լինելը հանգեցնում են հաշվողական կարողությունների անհավասար բաշխմանը, ինչը խորը ուսուցման ժամանակաշրջանում լուրջ խնդիր է դառնում այլ շահառուների համար: Նման իրավիճակի երկարաժամկետ հետևանքներն են հետազոտական արդյունքների և դրանց կիրառման բազմազանության անկումը, գլոբալ թվային ընկերությունների՝ ակադեմիական և պետական սեկտորների համեմատ մեկ քայլ առաջ լինելը, անհրաժեշտ կարգավորումների՝ ոլորտի զարգացումներից զգալի հետ մնալը: Մինչդեռ մասնավորի ձեռքբերումներն օգտագործվում են առաջին հերթին կոմերցիոն նպատակներով, իսկ առանց կարգավորումների մեծանում են անձանց տվյալների անթույլատրելի օգտագործման, նրանց անվտանգության խաթարման և անտեղի վերահսկման ռիսկերը:

Վերոնշյալ խնդիրներն ահազանգում են ոլորտի բացթողի վիճակի և բացասական հետևանքների ռիսկի մասին: Կարգավորման և խաղի կանոններ սահմանող մարմինները պետք է հետևեն, թե ինչպես են ընկերությունները ստանում և կիրառում օգտագործողների տվյալները: Գերիշխող կամ մոնոպոլ դիրքը, միջավայրի թվային բնույթով պայմանավորված, տրամադրում է սեփական շահերի առաջնական ճկունություն, ինչը հիմք է ընկերությունների գործողությունների զսպման նոր մեխանիզմների ձևավորման համար: Այն դեպքերում, երբ պետությունները ցանկանում են դառնալ ոլորտի գիտական կողմի առաջատարներից, անհրաժեշտ է իրականացնել զգալի ներդրումներ՝ մասնագետներին իրենց մոտ պահելու և կամ դեպի իրենց ձգելու, նաև ենթակառուցվածքների կայացման և առաջատար երկրների համեմատ գրավիչ դառնալու համար:

## **4. ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՈՎ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՂ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՆՈՐՄԵՐԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

### **4.1. Թվային փոխակերպման տնտեսամաթեմատիկական մոդելավորումը**

Վերջին տարիներին աշխարհի բոլոր երկրները այս կամ այն չափով պետական կառավարման ոլորտում ներդնում են էլեկտրոնային կառավարման սկզբունք, որի նպատակն է թվային տեխնոլոգիաների կիրառման միջոցով գործընթացների արդյունավետության բարձրացումը՝ մասնավորաբար նվազագույնի հասցնելով պետական ծառայողների և քաղաքացիների ֆիզիկական շփումները: Ակնհայտ է, որ այս գործընթացները ոչ միայն տեխնոլոգիական բնույթ են կրում և պայմանավորված են այս կամ այն երկրում թվային տեխնոլոգիաների զարգացման աստիճանով, այլ նաև տնտեսական հարաբերությունների կատարելագործման նոր կանոնակարգերի և նույնիսկ բիզնես սովորույթների, մարդկանց վարքագծի փոփոխման հնարավորություններով:

Պետական կառավարման ոլորտի թվայնացման գործընթացների հաջողության երաշխիքը գոյություն ունեցող ինստիտուտների որակը և հասարակությունում ընդունված վարքագծային նորմերի բարելավումն է: Կառավարությունների թվային վերափոխումը չի կարելի դիտարկել սուս որպես տեխնոլոգիական զարգացման գործընթաց: Այդ վերափոխումները ենթադրում են նոր գործընթացներ պետություն-բիզնես, պետություն-քաղաքացի հարաբերություններում: Պետական կառավարման համակարգի թվային վերափոխման հաջողությունը պայմանավորված է նաև կիրառվող տեխնիկական լուծումների որակից, կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումների ճիշտ հաշվարկված ծրագրերից, որոնք պետք է հաշվի առնեն այս կամ այն երկրում պետական կառավարման համակարգի առանձնահատկությունները և գոյություն ունեցող վարքագծային սովորույթները:

Էլեկտրոնային կառավարման սկզբունքների ներդրման գործընթացները ունեն բավականին երկար պատմություն, կուտակվել են որոշակի քանակությամբ տվյալներ և բավականին մեծ ծավալով հետազոտություններ են

իրականացվում այս ոլորտում: Այդ ամենի վկայություն է մի շարք օրինաչափություններ, որոնք բերված են GovTech Dataset-ից (<https://www.worldbank.org/en/programs/govtech/gtmi>):

Տվյալների այդ բազայում համեմատված են մի շարք ցուցանիշներ, որոնցից մենք կդիտարկենք հետևյալները՝

1. UN eGov Development Index (2020) (<https://publicadministration.un.org/egovkb/en-us/data-center>), որը չափում է երկրների էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման մակարդակը՝ համեմատելով այդ գործընթացի բոլոր հնարավոր գործոնները:
2. WGI Government Effectiveness (2019) (<https://info.worldbank.org/governance/wgi/>)՝ Համաշխարհային բանկի պետական կառավարման արդյունավետությունը չափող ինդեքս:
3. WGI Control of corruption (2019) (<https://info.worldbank.org/governance/wgi/>)՝ պետական կառավարման արդյունավետությունը կոռուպցիայի զսպման տեսանկյունից չափող ինդեքս:
4. Corruption Perception Index (2019) (<https://www.transparency.org/en/cpi/2020/index/dnk>)՝ կոռուպցիայի ընկալման ինդեքս:

Ստորև բերված նկարում պատկերված է էլեկտրոնային կառավարման ինդեքսի և պետական կառավարման ինդեքսի փոխկապվածությունը 198 երկրների ընտրանքի համար: Կարելի է տեսնել, որ գոյություն ունի բավականին հստակ պարաբոլիկ կապ: Համաձայն մոդելի՝ էլեկտրոնային կառավարման համակարգը բնութագրող ինդեքսի բարելավումը 0.1-ով բերում է կառավարման ինդեքսի շուրջ 0.36-ով աճի: Հայաստանի համար դա նշանակում է, որ եթե էլեկտրոնային կառավարման ինդեքսը մեծանա 0.1-ով, ըստ մոդելի կանխատեսման՝ կառավարման արդյունավետության ինդեքսը -0.07-ից կբարձրանա 0.29-ի:



Երկու բանաձևից էլ տեսնում ենք, որ կրկնվում է օրինաչափությունը, ինչը վկայում է այն մասին, որ էլեկտրոնային կառավարման ազդեցությունը ինստիտուտների վրա բազմակողմանի է, և այդ ցուցանիշի բարելավումը կարող է դրական ազդեցություն ունենալ պետական կառավարման տարբեր ոլորտների վրա:

#### **4.2. «ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում» թեմայի շրջանակներում իրականացված հարցման արդյունքների ամփոփում**

Երևանի պետական համալսարանի Սահմանադրական տնտեսագիտության գիտալերլուծական կենտրոնը «Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն» հիմնադրամի հետ համատեղ 2022 թվականի առաջին եռամսյակում «ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում» ծրագրի շրջանակներում Երևանում և ՀՀ մարզերում կազմակերպել էր «Թվայնացման գործընթացները ՀՀ-ում» թեմայով հարցում (այսուհետ՝ Հարցում): Հարցման նպատակն է բացահայտել ՀՀ-ում թվային տեխնոլոգիաների տարածման և զարգացման միտումները, մասնավորաբար՝ որքանո՞վ են տարածված թվային գործիքները, որքանո՞վ են փոփոխվել ժամանակի ընթացքում, ինչպիսի՞ տեխնիկական խնդիրներ են առաջանում թվային գործիքները կիրառելիս, և ո՞ր հարթակն է ավելի արդյունավետ տնտեսության համար՝ online, թե offline: Հարցումը կազմակերպվել է 2 փուլով և ընդգրկում է *առողջապահության, առևտրի, կրթության և ֆինանսական ծառայությունների ոլորտները*: Առաջին փուլին մասնակցել են ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի թվով 135 ներկայացուցիչներ՝ հանդես գալով որպես փորձագիտական խմբի անդամներ: Երկրորդ փուլին մասնակցել են հասարակության 20-75 տարեկան 500 անդամներ, այդ թվում՝ *առողջապահության, առևտրի, կրթության և ֆինանսական ծառայությունների ոլորտների մասնագետներ*:

## **Փուլ 1-ին**

### **Փորձագիտական հարցում**

Բարձր տեխնոլոգիաների զարգացումը որոշիչ դեր ունի պետության մրցունակության, անվտանգության և կենսամակարդակի բարձրացման գործում: Այն պետությունները, որոնք ստեղծում և զարգացնում են բարձր տեխնոլոգիաները, փոփոխություններ են գրանցում մրցակցային դաշտում և առաջատար դիրքեր զբաղեցնում միջազգային ասպարեզներում: ՀՀ-ում թվային կառավարման ոլորտում մինչ այժմ իրականացված մի շարք հաջող նախաձեռնություններ ամուր հիմքեր են ստեղծել երկրի հետագա թվային փոխակերպման համար, ինչպես, օրինակ, էլեկտրոնային կառավարման ներդրման գործընթացը, որը սկսվել է դեռևս 90-ական թվականներից: 2008 թվականին ընդունվել է Գործողությունների ծրագիր՝ ուղղված էլեկտրոնային կառավարման համակարգի զարգացմանը: Արդյունքում իրականացվել են մի շարք նախաձեռնություններ, որոնցից էլեկտրոնային կառավարման գործիքների համակարգը ([www.e-gov.am](http://www.e-gov.am))՝ ավելի քան 20 առցանց ծառայություններով: Հարթակը համախմբում է անշարժ գույքի ([www.e-cadastre.am](http://www.e-cadastre.am)), պետական վճարումների ([www.e-payments.am](http://www.e-payments.am)), կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման ([www.e-register.am](http://www.e-register.am)), հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման ([file-online.taxservice.am](http://file-online.taxservice.am)) էլեկտրոնային համակարգերը, էլեկտրոնային հարցումների միասնական հարթակը ([www.e-request.am](http://www.e-request.am)) և այլն: Հարկ է նշել նաև, որ թվային տնտեսությունը սպասարկող ճյուղերը, ինչպիսիք են էլեկտրոնային վճարումների համակարգերը, փոստային ենթակառուցվածքները, թվային բանկային ծառայությունները և էլեկտրոնային առևտրին առնչվող ծառայությունները, զարգանում են, սակայն մրցունակության մակարդակով դեռևս զիջում են համաշխարհային և տարածաշրջանային համատեքստում:

Առաջին փուլի ընթացքում հարցումն իրականացվել է ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի հետ: Հարցաթերթը պարունակում է թվով 48 հարց, որոնք ընդգրկում են տնտեսության 4 ոլորտներ՝ առողջապահություն, առևտուր, կրթություն և ֆինանսական ծառայություններ:

*Առևտրին* վերաբերող հարցերն ընդգրկում են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հասարակության շրջանում ապրանքների և ծառայությունների



էլեկտրոնային առևտրի տարածվածությունը, վաճառքի և գնման հաճախականությունը, տեղական և արտասահմանյան օնլայն հարթակների կիրառման հիմնախնդիրները: *Առողջապահության* ոլորտի հարցերը մեծ մասամբ վերաբերում են էլեկտրոնային առողջապահության միասնական հարթակի գործառույթներին և բնակչության շրջանում օնլայն խորհրդատվությունների հաճախականությանը: *Կրթության* ոլորտին վերաբերող հարցերի նպատակն է եղել պարզել, թե թվային ո՞ր հարթակից են առավել հաճախ օգտվում կրթական հաստատությունները, և որո՞նք են հեռավար ուսուցման առավելություններն ու թերությունները: *Ֆինանսական ծառայությունների* ոլորտում իրականացված հարցումը նպատակ է ունեցել պարզելու, թե ինչո՞վ է պայմանավորված ֆինանսական ինստիտուտների արդյունավետությունը, և արդյո՞ք թվայնացման գործիքների տարածման մակարդակն ազդում է ֆինանսական կայունության վրա:

### **Առևտրի ոլորտ**

Առկա թվային ծառայությունների օգտագործման ցածր աստիճանը հաճախ պայմանավորված է թվային գործիքների օգտագործման անհարմարությամբ, ինչպես նաև առկա լուծումների վերաբերյալ հանրային իրազեկման պակասով:

***Հասարակության շրջանում ինտերնետի, հեղևաբար նաև թվային տեխնոլոգիաների օգտագործման մակարդակը բավականին բարձր է:*** Հայաստանի բնակչության 96%-ն ունի ինտերնետի հասանելիություն տանը, իսկ ամրակցված ինտերնետ կապից օգտվում է բնակչության 68%-ը: Ընդ որում, այս ցուցանիշը շատ ավելի բարձր է քաղաքային բնակավայրերում (76%)՝ ի համեմատություն գյուղական բնակավայրերի (60%): Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ Հայաստանի բնակչությունը ինտերնետը հիմնականում օգտագործում է զվարճության կամ պարզագույն հաղորդակցության նպատակներով՝ ներառյալ զանգեր (90%), սոցիալական ցանցեր (68%), հաղորդագրություններ (60%), երաժշտություն (54%) և առցանց նորություններ (53%)<sup>42</sup>:


Լինելով թվային տնտեսության հիմնական բաղկացուցիչ՝ էլեկտրոնային առևտրի կայացումն ու զարգացումն ունի անմիջական ազդեցություն ամ-

---

<sup>42</sup> Հայաստան, SCS-ի օգտագործումը տնային տնտեսություններում և անհատների կողմից, հարցում, Համաշխարհային բանկ, 2020:

բողջ գործընթացի վրա: Վերջինս հնարավորություն է տալիս ընդլայնելու ընկերությունների վաճառքի ուղիներն ու ապահովելու ապրանքաշրջանառության նկատմամբ ամբողջական վերահսկողություն: Փորձագիտական խմբի հետ անցկացված հարցման արդյունքների համաձայն 39%-ը չի օգտվում էլեկտրոնային առևտրից գնվող ապրանքի գնի, որակի և շփման անհնարինության հետ կապված խնդիրների պատճառով: Իսկ հարցվողների 61%-ի կարծիքով էլեկտրոնային առևտուրը առավել արդյունավետ է ապրանքների բազմազանության, մատչելիության և ժամանակի խնայողության համար: Փորձագիտական խմբի թվով 135 անդամների 78%-ը սկսել է օգտվել օնլայն առևտրից (թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան) դեռևս COVID-19-ից առաջ, ընդ որում, տեղական հարթակներից *գերակշիռ մաս են կազմել* տաքսիների օնլայն պատվիրումը (25.4%), սննդի պատվիրումը (19%), տոմսերի պատվիրումը (17.5%) և հագուստի պատվիրումը (12.7%), իսկ առևտրի արտասահմանյան հարթակներից կարելի է առանձնացնել Wildberries (29%), ebay (25%), Amazon (19.5%), AliExpress (12.7%): Այն հարցին, թե *կատարված գնումների ո՞ր մասն է կազմում էլեկտրոնային առևտուրը, ստացվել է հետևյալ պատկերը.*

**Նկար 1. Էլեկտրոնային առևտրի մեջ կատարված գնումների մասնաբաժինը (%)<sup>43</sup>**



<sup>43</sup> Այս և հաջորդիվ նկարներն արտահանված են questionpro.com կայքէջից, որի միջոցով իրականացվել է հարցումը, և որտեղ ներկայացված են հարցման արդյունքները:

### **Առողջապահության ոլորտ**


Հարցման մաս կազմող հաջորդ ոլորտն առողջապահությունն է, որտեղ ընթացող բարեփոխումներին զուգահեռ դեռևս կան բացթողումներ: Պետք է փաստել, որ հատկապես համաճարակով պայմանավորված մեր կյանքն օֆֆլայնից սահուն անցում կատարեց օնլայնի, և բացառություն չէ նաև առողջապահության համակարգը: Նախկինում վստահություն չներշնչող օնլայն դիմումներն ու հայտերը այսօր դարձել են մեր կյանքի անբաժանելի մասնիկը, և հասարակությունն արդեն ադապտացվում է այդ օրակարգին: Թվայնացման գործընթացի կարևորագույն օրինակ է [www.armed.am](http://www.armed.am) համակարգի ներդրումը<sup>44</sup>, որը հնարավորություն է տալիս դիմելու և գրանցվելու առողջապահական ծառայությունների համար, ստանալու տեղեկատվություն տարբեր բուժիաստատություններում առկա ծառայությունների հասանելիության մասին, հերթագրելու այցելությունները, կատարելու բժշկական հաստատությունների, բժիշկների, ծառայության որոնում, բժշկական էլեկտրոնային քարտերի (անկետաների) վարում, դիտում, տեղեկանքների արտահանում և այլն: Նմանատիպ համալիր հարթակների մշակումը և գործարկումը անհրաժեշտ է իրականացնել այլ գերատեսչությունների հետ համաձայնեցված և հետագա գործառույթային ընդլայնումը պլանավորելով, որպեսզի նույն համակարգը օգտագործվի այլ գերատեսչությունների կողմից՝ առանձին մոդուլի կամ գործառույթի ավելացմամբ՝ խուսափելով յուրաքանչյուր ծառայության համար առանձին հարթակ ստեղծելուց:

Առողջապահության ոլորտին վերաբերող հարցերը նպատակ են ունեցել ռեսպոնդենտների շրջանում պարզելու՝ արդյո՞ք օգտվում են թվայնացման համակարգից, որքանո՞վ են իրազեկ էլեկտրոնային առողջապահության միասնական հարթակի գործառույթներից և ինչպե՞ս են գնահատում այն: Հարցման արդյունքների համաձայն՝ 44.74%-ը չի օգտվում ՀՀ էլեկտրոնային առողջապահության միասնական համակարգից՝ *անձնական տեղեկատվության պահպանման հիմնախնդրից* ելնելով: Իսկ փորձագիտական խմբի մյուս անդամների կարծիքով էլեկտրոնային հարթակը նպաստում է *ժամանակի խնայողությանը և թույլ է տալիս օգտվել տարատեսակ ծառայություններից*:

---

<sup>44</sup> Տե՛ս էլեկտրոնային հղումը՝ Health - Log In ([armed.am](http://armed.am)):

**Նկար 2. Առողջապահության ոլորտում ներդրված էլեկտրոնային հարթակից օգտվելու շարժառիթները (%)**



Միաժամանակ պետք է փաստել, որ էլեկտրոնային առողջապահության միասնական համակարգից օգտվող 55.26%-ից միայն 33.33%-ն է օնլայն գրանցվել բժշկի մոտ և ստացել խորհրդատվություն:

Հարցման վերջին մասը վերաբերում է էլեկտրոնային առողջապահության միասնական հարթակի գործառույթներին, որոնցից փորձագիտական խմբի անդամներն առանձնացրել էին հետևյալները.

- ✓ բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացիների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովում,
- ✓ քաղաքացիների ժամանակի և ծախսերի կրճատում, կրկնակի բուժումների, հետազոտությունների, նշանակումների, ինչպես նաև բժշկական սխալների քանակի նվազում,
- ✓ արդիական տեղեկատվության հասանելիության շնորհիվ պետության առողջապահական ծախսերի կրճատում,
- ✓ բուժժառայությունների որակի բարձրացում,
- ✓ առողջապահության ոլորտի թափանցիկության ապահովում,
- ✓ ճշգրիտ տվյալների ձևավորում,
- ✓ ձեռագիր դեղատոմսերի էլեկտրոնայինով փոխարինում, ինչը թույլ կտա վերահսկել նշանակումների ճշգրտությունը, նվազեցնել սխալ դեղատոմսերի նշանակման հետ կապված ռիսկերը:


Պետք է ընդգծել, որ առողջապահության ոլորտում կառավարման արդյունավետությունն ու մատուցվող ծառայությունների որակը բարձրացնելու

համար կարևորվում են օրենսդրական դաշտի և ինստիտուցիոնալ համակարգի բարեփոխումները, թվային տեխնոլոգիաների ներդրումը, առողջապահական ծառայությունների ֆինանսական հասանելիությունը և այլն:

### **Կրթության ոլորտ**


Գաղտնիք չէ, որ թվային տեխնոլոգիաների առօրյա օգտագործումը բարելավում է հանրային կյանքի բազմաթիվ ոլորտներ, որից անմասն չէ կրթությունը: Նորարարական կրթական տեխնոլոգիաների ներդրումը, դպրոցական կրթական ծրագրի վերանայմանն ու ուսուցիչների վերապատրաստմանն ուղղված ծրագրերը ազդարարում են թվայնացման գործընթացի սկիզբը: Հարցման այս մասը փորձել է վեր հանել այն գործոնները, որոնք ազդում են կամ կարող են ազդել կրթական համակարգերում թվայնացման գործիքների կիրառման վրա: Ըստ արդյունքների՝ ուսուցման նպատակով թվային միջավայրից օգտվում է հարցվողների 82.35%-ը՝ նշելով, որ օնլայն տարբերակն առավել հասանելի է, նպաստում է ժամանակի խնայողությանը և հնարավորություն է տալիս միաժամանակ օգտվելու մի քանի ծառայություններից: Վերոնշյալ թվային միջավայրերից փորձագիտական խումբն առավել հաճախ կիրառելի է համարել Zoom-ը (31.25%), Մուդլը (29.69%), Google classroom-ը (15.62%) և Microsoft Teams-ը (14.06%), իսկ տեղեկատվության փոխանակման տեսակներից՝ էլեկտրոնային փոստերը (46.51%), չատերը (23.26%), կայքերը (18.6%) և վիդեո/աուդիո կոնֆերանսները (4.65%): Հարցումը նպատակ է ունեցել բացահայտելու նաև, թե որո՞նք են հեռավար ուսուցման առավելությունները, և, միաժամանակ, ինչպիսի՞ խնդիրներ են առաջանում օնլայն դասապրոցեսի ընթացքում:

**Նկար 3. Հեռավար ուսուցման առավելությունները (%)**




Ինչպես ցույց է տրված նկարում, հեռավար ուսուցման առավելություններից փորձագիտական խումբն առանձնացրել է աշխարհագրական սահմանների բացառումը և տարածքային խոչընդոտների բացակայությունը (37,5%), ինչը հնարավորություն է տալիս սովորողին անկախ գտնվելու վայրից մասնակցելու դասապրոցեսին և ստանալու կրթություն: Ոչ պակաս կարևոր է աշխատանքային ճկունության գործոնը, ինչը թույլ է տալիս օնլայն հարթակում կիրառել նորագույն տարատեսակ տեխնոլոգիաներ՝ միաժամանակ օգտվելով մի քանի ծառայություններից:

**Նկար 4. Հեռավար ուսուցման թերությունները**



Հարցման արդյունքների համաձայն սահմանափակ շփումը դասավանդողի և սովորողի միջև (33,33%) համարվել է առավել կարևոր թերություն: Սրա մասին է փաստում COVID-19 համաճարակի ժամանակ երկրում տիրող բազմապիսի սահմանափակումները, ինչը ազդում էր կրթության որակի վրա:

**Նկար 5. Էլեկտրոնային կրթության գործունեության արդյունավետության գնահատումը (1-5 բալային սանդղակով)**



Ըստ ֆոկուս խմբի՝ էլեկտրոնային կրթությունը նպաստում է մի շարք գործոնների, որոնց թվում են գիտելիքի հասանելիությունը, ճկուն համագործակցությունը, ռեսուրսների խնայողությունը, տարբեր աշխարհագրական դիրքերում գտնվելու պայմաններում գիտելիքի ստացման հնարավորությունը և ժամանակի արդյունավետ կառավարումը (Տե՛ս նկար 5): Ինչպես երևում է նկարում, ռեսպոնդենտների կողմից էլեկտրոնային կրթության գործունեությանը տրված գնահատականը ընդամենը հատել է միջին շեմը: Սա նշանակում է, որ *օնլայն տարբերակով ցածր է կրթության արդյունավետությունը*, այդ իսկ պատճառով հարցվողների գերակշիռ մասը *նախապատվությունը տվել է դասանցկացման օֆֆլայն տարբերակին՝* բացառելով նույնիսկ հիբրիդայինը:

Հարցման երկրորդ մասը վերաբերում է առցանց ակադեմիական կրթությանը և օնլայն գրականության հասանելիությանը: Գաղտնիք չէ, որ ներկայիս հասարակությունը նախապատվությունը տալիս է օնլայն գրականությանը՝ հիմնավորելով, որ այն առավել հարմար և հեշտ է կիրառվում և հասանելի է ամենուրեք: Ժամանակակից մարտահրավերները պահանջում են կրթական ընթացակարգերի օպտիմալացում և ուսուցման գործընթացի կազմակերպում՝ առավելագույն արտադրողականությամբ և ավելի քիչ ֆինանսական ռեսուրսների օգտագործմամբ: Սա վերաբերում է նաև բուհերին. օնլայն գրականությունը հնարավորություն է տալիս ուսանողին խուսափելու ֆինանսական ծախսերից և ստանալու տեղեկատվությունն օնլայն տարբերակով: Հարցվողների 43.48%-ը բավարար գնահատական է տվել օնլայն գրականության հասանելիությանը, մինևույն ժամանակ 61%-ը ցանկություն է հայտնել վճարել օնլայն գրականություն ձեռք բերելու համար:

**Ֆինանսական ծառայությունների ոլորտ**

Տնտեսության մեջ թվային տեխնոլոգիաների կիրառումը թույլ է տալիս բարձրացնել պետական կառավարման արդյունավետությունը, կրճատել ծախսերը, արագացնել գործընթացների իրականացումը, մեծացնել գործընթացների վերահսկելիությունը, ինչպես նաև նվազեցնել կոռուպցիոն ռիսկերը: Ֆինանսական ծառայությունների ոլորտում թվայնացման գործընթացները այդուհանդերձ պահանջում են համակարգային լուծում՝ միևնույն ժամանակ նպաստելով տնտեսության զարգացմանը:

Ֆինանսական ծառայությունների կիրառությունը ռեսպոնդենտների շրջանում կազմում է 68.9%, ովքեր մեծ մասամբ օգտվում են *հերթերի կառավարման համակարգից, կոմունալ վճարումներից, ավանդների ձևակերպումներից և բյուջե փոխանցումներից*: Ստորև աղյուսակը ցույց է տալիս, թե ֆինանսական ծառայությունների ոլորտում ինչպիսին է վերաբերմունքը թվային գործիքների և տեխնոլոգիաների ներդրման առումով:

**Աղյուսակ 1. Ֆինանսական ծառայությունների ոլորտում թվային տեխնոլոգիաների ներդրման գնահատումը**


<b>Ֆինանսական ծառայությունների ոլորտում</b>				
	<b>Համաձայն եմ</b>	<b>Ավելի շատ համաձայն եմ</b>	<b>Ավելի շատ համաձայն չեմ</b>	<b>Համաձայն չեմ</b>
Թվայնացման գործիքների կիրառումը բարձրացնում է ֆինանսական ինստիտուտների արդյունավետությունը	+			
Թվայնացման գործիքները թույլ են տալիս բանկային ծառայություններն ավելի հասանելի դարձնել	+			
Թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս ֆինանսական ինստիտուտներին հավաքագրել և մշակել մեծ քանակությամբ տվյալներ		+		
Թվային տեխնոլոգիաները ֆինանսական շուկաները կարգավորող մարմիններին օգնում են			+	



մշակել տեղեկատվություն և ստեղծել կարգավորման նոր գործիքներ				
--	--	--	--	--

Աղյուսակից պարզ է դառնում, որ տնտեսության մեջ թվային տեխնոլոգիաների ներդրման ազդեցությունը բավականին մեծ է. ֆինանսական ինստիտուտների գործունեության արդյունավետությունը մեծապես կախված է այժմյան թվային գործիքներից: Դրանցից անմասն չեն նաև բանկային ծառայությունների հասանելիությունը, որոնց կիրառելիությունը մեծ թափ ստացավ հատկապես օնլայն տեխնոլոգիաների ներդրումից հետո: Այդուհանդերձ, փորձագիտական խմբի կարծիքով թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս ֆինանսական ինստիտուտներին հավաքագրել և մշակել մեծ քանակությամբ տվյալներ, ինչը հետագայում հետազոտություններ կատարելու համար բավականին մեծ և կարևոր ռեսուրս է: Չնայած ամենին՝ հարցման արդյունքների համաձայն տվյալների հավաքագրման և մշակման հետ կապված դեռևս կան խնդիրներ: Ստորև բերված նկարում պատկերված է, թե հարցման տվյալների համաձայն թվայնացման ո՞ր գործիքների կիրարկումն է մեծապես ազդում տնտեսության ֆինանսական կայունության ապահովման վրա:

**Նկար 6. Թվայնացման գործիքների ազդեցությունը ֆինանսական կայունության ապահովման վրա (%)**




Ամփոփելով արդյունքները՝ պետք է ընդգծել, որ թվային գործիքների կիրառման ազդեցությունը ֆինանսական շուկաների և հասարակության վրա բավականին մեծ է: Այն՝

- հնարավորություն է ընձեռում նույնիսկ ամենափոքր կազմակերպություններին գործունեություն ծավալել տարբեր շուկաներում՝ անկախ դրանց գտնվելու վայրից,
- բարձրացնում է կազմակերպության մրցակցային հնարավորությունները,
- հնարավորություն է տալիս ստանալու առավելագույն տեղեկատվություն հաճախորդի պահանջմունքների մասին ու մշակելու դրանց համապատասխան ապրանքներ ու մատուցելու ծառայություններ,
- կազմակերպություններին թույլ է տալիս ավելի ճկուն բիզնես վարել և օպերատիվ արձագանքել արտաքին միջավայրի արագ փոփոխվող պայմաններին,
- հնարավորություն է ընձեռում դյուրին դարձնելու պատվերի ընդունման, մշակման և վճարման գործընթացը,
- տալիս է ընտրության լայն հնարավորություն, անհատական մոտեցում հաճախորդին, ժամանակի և հավելյալ ծախսերի խնայում,
- ապահովում է վճարման համակարգի բազմազանություն:

Հարցումը նպատակ է ունեցել պարզելու նաև, թե թվային տնտեսության ո՞ր ոլորտներն են առավել զարգացած ՀՀ-ում: Ստացվել է հետևյալ պատկերը.

**Նկար 7. Թվային տնտեսության ոլորտային զարգացումները ՀՀ-ում (%)**



Ամփոփելով հարցման արդյունքները՝ կարող ենք փաստել, որ էլեկտրոնային առևտուրը՝

- խթանում է ապրանքների և ծառայությունների արտահանումը,

- օժանդակում է փոքր և միջին կազմակերպություններին մշակելու և ներդնելու ժամանակակից տեխնոլոգիաներ,
- աջակցում է արտաքին շուկաներում հայկական արտադրանքի ճանաչմանը,
- ապահովում է ֆինանսական գործարքների իրականացման անվտանգ ու ապահով համակարգ,
- նպաստում է արագ և արդյունավետ ծառայությունների մատուցմանը,
- նպաստում է ծառայությունների մատուցման ժամանակ ծախսերի կրճատմանը,
- հնարավորություն է տալիս օգտվելու մասշտաբի էֆեկտից:

Միաժամանակ, պետք է նշել նաև որոշ կարևորագույն խոչընդոտներ, որոնք ազդում են էլեկտրոնային առևտրի արդյունավետ գործունեության վրա, ինչպես, օրինակ, *անվստահությունը վճարման նոր համակարգերի հանդեպ, վճարման քարտերի ոչ համադարձ լինելը և ինֆորմացիայի պակասը էլեկտրոնային առևտրի մշակույթի վերաբերյալ:*

Ամփոփելով միտքը՝ նշենք, որ առկա թվային ծառայությունների օգտագործման ցածր մակարդակը հաճախ պայմանավորված է թվային գործիքների օգտագործման անհարմարությամբ:

## **Փուլ 2-րդ**

### **Հարցում հասարակության շրջանում**

«ՀՀ պետական կառավարման ինստիտուցիոնալացման հեռանկարները տնտեսության թվայնացման համատեքստում» խորագրով հարցման 2-րդ փուլին մասնակցել են հասարակության 20-75 տարեկան 500 անդամներ, այդ թվում՝ առողջապահության, առևտրի, կրթության և ֆինանսական ծառայությունների ոլորտների մասնագետներ: Հարցաթերթը պարունակում է թվով 40 հարց, որոնք ընդգրկում են տնտեսության 4 ոլորտներ՝ առողջապահություն, առևտուր, կրթություն և ֆինանսական ծառայություններ:


### **Առևտրի ոլորտ**

Մրցունակ լինելու ու ժամանակին համահունչ քայլելու կարևոր գրավականն արդի ժամանակներում դարձել է թվայնացումը: Առևտրի ոլորտում

այն բավականին լայն տարածում է գտել, ինչի մասին են վկայում գերժամանակակից տեխնոլոգիաների ներդրումն ու կիրառումը, որոնք նպաստում են բիզնեսի զարգացմանը և ընդլայնմանը:

Հարցման առաջին մասը վերաբերում է սպառողների կողմից արտասահմանյան և տեղական էլեկտրոնային առևտրի հարթակներից օգտվելու հաճախականությանը և ծավալներին: Հարցման արդյունքների համաձայն *Ժամանակի խնայումը և ապրանքների գների մատչելիությունը* թույլ է տալիս սպառողներին մշտապես օգտվել առևտրի օնլայն հարթակից, իսկ չօգտվելու կարևորագույն պատճառներից են ապրանքի հետ շփման անհնարինությունը, առաքման ժամկետի հետ կապված դժվարությունները, ինչպես նաև ապրանքի որակի հետ կապված խնդիրները: Ինչպես փորձագիտական խմբի, այնպես էլ հասարակությանն ուղղված հարցման արդյունքների համաձայն *օնլայն առևտուրը տարածված է եղել դեռևս COVID-19-ից առաջ*: Ամենահաճախ օգտագործվող արտասահմանյան օնլայն հարթակը Wildberries-ն (30%) է, Amazon-ը (25%) և ebay-ը (15%), իսկ տեղական օնլայն հարթակներից ռեսպոնդենտների գերակշիռ մասն օգտվում է առցանց խաղերից, սննդի պատվիրումից, տաքսիներից: Այն հարցին, թե *կատարված գնումների ո՞ր մասն է կազմում էլեկտրոնային առևտուրը, հասարակության շրջանում անցկացված հարցման արդյունքներից ստացվել է հետևյալ պատկերը*:

**Նկար 8. Էլեկտրոնային առևտրի մեջ կատարված գնումների մասնաբաժինը (%)**



Համեմատելով փորձագիտական խմբին ուղղված հարցման արդյունքները՝ կարող ենք փաստել, որ գրեթե համանման տվյալներ ենք ստացել. եր-

կու դեպքում էլ հագուստի, կոշիկի, սննդի և էլեկտրոնիկայի օնլայն առևտուրը գերակշիռ դիրք է զբաղեցրել:

### **Առողջապահության ոլորտ**

Բնակչության առողջության պահպանման ու բարելավման նպատակով իրականացվող կանխարգելիչ միջոցառումները ցանկացած երկրի առողջապահական համակարգի առաջնահերթ ու կարևորագույն խնդիրներից են: Առողջապահության համակարգի խնդիրների արդյունավետ լուծումը պայմանավորված է թվայնացման գործիքների գործադրմամբ, որոնք, ինչպես վկայում են հետազոտության արդյունքները, բավականին դրական ազդեցություն ունեն համակարգի հանդեպ վստահության և հաճախ կիրառության վրա: Հարցվածների 68.75%-ը դեռևս COVID-19-ից առաջ օգտվել է էլեկտրոնային առողջապահության օնլայն համակարգից: Ստորև առանձնացված են այն կարևոր գործառնությունները, որոնք իրականացվում են էլեկտրոնային առողջապահության միասնական հարթակի կողմից թվայնացման գործիքների կիրառմամբ.

- ձեռագիր դեղատոմսերի էլեկտրոնայինով փոխարինում, ինչը թույլ կտա վերահսկել նշանակումների ճշգրտությունը, նվազեցնել սխալ դեղատոմսերի նշանակման հետ կապված ռիսկերը,
- քաղաքացիների ժամանակի և ծախսերի կրճատում, կրկնակի բուժումների, հետազոտությունների, նշանակումների, ինչպես նաև բժշկական սխալների քանակի նվազում,
- առողջապահության ոլորտի թափանցիկության ապահովում,
- արդիական տեղեկատվության հասանելիության շնորհիվ պետության առողջապահական ծախսերի կրճատում:


Զուգահեռներ տանելով՝ հավելենք, որ կան դեպքեր, երբ ռեսպոնդենտները տեխնիկական միջոցների, ինտերնետի խափանման ժամանակ առաջացող անհարմարությունների պատճառով չեն կիրառում օնլայն հարթակ՝ համարելով այն նաև խարդախության միջավայր: Ունենք նույն պատկերը բժշկի մոտ օնլայն գրանցվելու և օնլայն խորհրդատվություն ստանալու հետ կապված. հասարակության 78%-ը չի օգտվում վերոնշյալ ծառայություններից:

### **Կրթության ոլորտ**

Կրթության ոլորտում թվայնացման գործիքների ներդրումը և տարածումը ակնառու դարձավ հատկապես COVID-19-ի ժամանակ, երբ հասարակու-


թյան լայն զանգված կրթական ծառայությունները սկսեց ստանալ և կամ մատուցել օնլայն հարթակի միջոցով: Ցանկացած նորամուծություն իր հետ բերում է նաև դժվարություններ, որից անմասն չէր նաև այս ոլորտում թվայնացման գործիքների կիրառումը: Հարցումը նպատակ է ունեցել բացահայտելու այն թերությունները, որոնք ի հայտ են եկել օնլայն հարթակի կիրառման ժամանակ, և միաժամանակ մատնանշելու այն առավելությունները, որոնցով կրթական օնլայն հարթակը տարբերվում է օֆֆլայն հարթակից: Հարցման արդյունքների համաձայն թվային միջավայրից օգտվում է 75%-ը՝ նշելով, որ այն *թույլ է տալիս խնայել ժամանակը և ապահովում է հասանելիությունը*: Առավել հաճախ կիրառվող թվային միջավայրերից են Zoom-ը (28.3%), Google classroom-ը (20%) և Moodle-ը (20%), իսկ տեղեկատվական փոխանակման տեսակներից՝ էլեկտրոնային չատերը (35%), փոստերը (30%) և վիդեո ու աուդիո կոնֆերանսները (16%): Ստորև բերված նկարներում, ըստ հարցման արդյունքների, ցույց են տրված հեռավար ուսուցման առավելություններն ու թերությունները:

**Նկար 9. Հեռավար ուսուցման առավելությունները (%)**



Ինչպես երևում է նկարում, ուսուցման հեռավար տարբերակը նպատակահարմար է ծախսերի կրճատման, նորագույն տեխնոլոգիաների կիրառման առումով: *Եթե փորձագիտական խմբի կարծիքով օնլայն տարբերակն ավելի գերադասելի էր աշխարհագրական սահմանների բացառման և տարածքային խոչընդոտների բացակայության համար, ապա այս դեպքում կարևոր է համարվել կրթության վայրը և ժամանակը ինքնուրույն ընտրելու հնարավորությունը*:

**Նկար 10. Հեռավար ուսուցման թերությունները**




Պետք է փաստել նաև, որ, բացի օժանդակող գործառույթից, կրթական համակարգում օնլայն դասապրոցեսն ուղեկցվել է բազմաթիվ դժվարություններով: *Հատկանշական է, որ թե՛ փորձագիտական խմբում, թե՛ հասարակության մյուս հատվածում անցկացված հարցման համաձայն օնլայն հարթակը սահմանափակել է շփումը աշակերտի/ուսանողի և ուսուցչի/դասախոսի միջև, ինչը ժամանակի ընթացքում կհանգեցնի կրթության որակի վատթարացմանը:* Կրթական ոլորտում հարցման վերջին մասը վերաբերում էր օնլայն գրականության հասանելիությանը: Նշենք, որ հարցվողների 75%-ը պատրաստ է վճարել օնլայն տեղեկատվության համար՝ համարելով այն կրթության փոխանցման *արդյունավետ և քիչ ծախսատար միջոց:*

**Ֆինանսական ծառայությունների ոլորտ**

Թվայնացումը զարգանում է սրընթաց կերպով և ներթափանցում է տնտեսության գրեթե բոլոր ոլորտները: Մասնավորաբար, ֆինանսական հատվածում թվայնացման գործիքների ներդրումը մեծապես նպաստել է այդ ոլորտում ամենատարբեր գործընթացների արագ իրականացմանը և ծառայությունների բազմազան մատուցմանը: Հասարակության շրջանում հարցման նպատակն է եղել պարզելը, թե ո՞ր հատվածն է ընդհանրապես կիրառում թվային գործիքները, ինչպիսի՞ն է ընկալումը ֆինանսական հատվածում թվայնացման ներդրման վերաբերյալ, և արդյո՞ք կա վստահություն օնլայն գործիքների կիրառման ժամանակ: Ըստ հարցման արդյունքների՝ հասարակության 70.37%-ը օգտվում է ֆինանսական ծառայությունների էլեկտրոնային հարթակից՝ նշելով, որ թվայնացման գործիքները թույլ են տալիս բանկային ծառայություններն ավելի հասանելի դարձնել: Թվայնացման գործիքներից առավել հաճախ կիրառվողներն են մոբայլ բանկինգը

(21.88%), դեբետային և կրեդիտային քարտերը (20.31%), թվային փոխանցումները (12.5%):

**Նկար 11. Առավել հաճախ կիրառվող թվայնացման գործիքներ**



Ավելացնենք նաև, որ թվային տեխնոլոգիաների առավելությունն այն է, որ թույլ են տալիս ֆինանսական ինստիտուտներին հավաքագրել և մշակել մեծ քանակությամբ տվյալներ՝ միաժամանակ օգնելով ֆինանսական շուկաները կարգավորող մարմիններին մշակել տեղեկատվություն և ստեղծել կարգավորման նոր գործիքներ:

Թվային տեխնոլոգիաների կիրառումը մեծ ազդեցություն ունի ֆինանսական շուկաների և հասարակության վրա: Ստորև բերված նկարում ցույց է տրված այդ ազդեցությունը տնտեսության վրա:

**Նկար 12. Թվային տեխնոլոգիաների կիրառման ազդեցության գնահատումը ֆինանսական շուկաների և հասարակության վրա (1-5 բալային սանդղակով)**

Question	Count	Score	1	2	3	4	5
Ստացվում է ռիսկեր	21	3.38	[Progress bar]				
Նպաստում է տեխնոլոգիան հասանելիությանը	21	4.48	[Progress bar]				
Նպաստում է ֆինանսական ինստիտուտների կարգավորմանը	21	3.86	[Progress bar]				
Նպաստում է բանկային ծառայությունների հասանելիությանը	21	4.48	[Progress bar]				
Նպաստում է արագ և հուսալի գործարքների կատարմանը	20	4.35	[Progress bar]				
<b>Average</b>		<b>4.11</b>					

Ավելացնենք նաև, որ թվային հարթակների վերոնշյալ օղակների շարքին կարելի է դասել նաև խելացի լուծումների միջոցով տնտեսության մասնավոր հատվածի արդիականացումը և մրցունակության բարձրացումը: Ներկայումս արդեն իսկ ընթացքի մեջ է առկա տվյալների բազաների միջև



փոխգործելիության հարթակի ստեղծման գործընթացը, որը կնպաստի համակարգերի միջև տվյալների փոխանակմանը և մեծ թվով պետական ծառայությունների թվայնացմանը:

Հարցման արդյունքներից պարզ դարձավ, որ թե՛ փորձագիտական խումբը, թե՛ հասարակությունն այն կարծիքին են, որ թվայնացման գործընթացներն առավել արագ են ընթանում հատկապես առևտրի ոլորտում: Պարզվեց, որ հետազոտվող բոլոր ոլորտներում թվայնացման գործիքների կիրառումը լայն տարածում է գտել մինչև COVID-19-ը, սակայն նոր թափ է ստացել համաճարակի ընթացքում և դրանից հետո, մասնավորաբար՝ կրթության ոլորտը: Կարևոր եզրահանգումն այն է, որ երկուստեք հարցման արդյունքների համաձայն կրթության և առողջապահության ոլորտի հետ առնչվող հարցերի և առաջարկությունների դեպքում կարծիքները համընկնում են, ինչը չենք կարող ասել ֆինանսական ծառայությունների ոլորտում թվային տեխնոլոգիաների ներդրման գնահատման մասին:

Ամփոփ պատկեր ստանալու համար հետազոտության միջոլորտային բնույթը, ինչպես ցույց տվեցին արդյունքները, պայմանավորված էր վերջիններիս ինտենսիվ զարգացումով:

**5. ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՆՈՐՄԵՐԻ ԵՎ ԻՆՍՏԻՏՈՒՏՆԵՐԻ  
ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԵՐԻ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՈԼՈՐՏՆԵՐԻ**

**5.1. Կրթության ոլորտի թվայնացման արդի վիճակն ու զարգացման  
միտումները ՀՀ-ում**

Կրթության թվայնացումն ուսումնական ու կառավարական բնույթի թվային տեսքով տեղեկատվության մատուցումն է, մշակումն ու պահպանումը, որը կրթական գործունեության արդյունավետության (որակի) էական բարձրացման երաշխիքի է վերաճում: 2021 թվականի փետրվարի 11-ի N 183-Լ որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է «Հայաստանի թվայնացման ռազմավարություն 2021-2025» փաստաթուղթը, որով նախանշվում է մինչև 2025 թվականը երկրում թվայնացման գործընթացների համատեքստում իրականացվելիք հիմնական ուղղություններն ու ծրագրերը: Ռազմավարության մի առանձին բաժին նվիրված է կրթությանը՝ թվային հմտությունների ձևավորմանը: Պետությունը փաստում է, որ թվայնացումն անհնար է հաջողել առանց հասարակության բոլոր տարիքային խմբերի շրջանում թվային հմտությունների զարգացման, ինչը կապակցված է ինչպես պետական հատվածի, այնպես էլ տնտեսության արդիականացման հետ: Թվային տեխնոլոգիաների առօրյա օգտագործումը կբարձրացնի թվային հմտություններին տիրապետող քաղաքացիների կյանքի որակը: Թվային հմտությունները քաղաքացիներին թույլ կտան ավելի արդյունավետ կազմակերպել իրենց շփումը պետական գերատեսչությունների, տնտեսվարողների հետ, ինչպես նաև օգտվել թվային ծառայություններից և արտադրանքներից: Թվային հմտություններին տիրապետող աշխատուժը կմասնակցի նոր տեխնոլոգիական լուծումների ներդրմանը տնտեսությունում՝ նպաստելով ՀՆԱ-ի աճին և որակական զարգացմանը: Թվային հասարակության զարգացումը հնարավորություն կտա բարձրացնելու կիբեռանվտանգության մակարդակը երկրում իրազեկվածության և թվային գրագիտության բարձրացման արդյունքում:

Ըստ այդմ, 2021-2025թթ. Հայաստանի թվայնացման ռազմավարությունում թվային հմտությունների ձևավորման և զարգացման տեսանկյունից կարևորվում են հետևյալ միջոցառումները.

1) Բոլոր գերատեսչությունների և գործարար ոլորտի հետ համագործակցության արդյունքում իրականացնել համալիր կրթական ծրագրեր հասարակության բոլոր տարիքային և սոցիալական խմբերի համար՝ Հայաստանի թվային փոխակերպման օրակարգը իրականություն դարձնելու, ապագայի տնտեսության մարտահրավերներին և կիրեռանվտանգության զարգացող պահանջներին համապատասխանելու համար:

2) Քաղաքներում, համայնքներում և հեռավոր գյուղերում թվային հմտությունների դասընթացների կազմակերպում և թվայնացված պետական ծառայությունների իրագեկում:

3) Առանձնակի ուշադրություն դարձնել կանանց և աղջիկների թվային և տեխնիկական հմտություններն ու գիտելիքները զարգացնելու կրթական ծրագրերին:

4) Թվային հմտությունների կրթական ծրագրերի իրականացման ընթացքում գիտելիքներով և առաջադիմությամբ առավել աչքի ընկնող մասնակիցների շտեմարանի ձևավորում՝ հետագայում նրանց՝ որպես թվային պետական ծառայությունների աշխատակից ներգրավելու նպատակով:

5) Ազգային Փոստի (Հայփոստ) ենթակառուցվածքում (մասնաճյուղեր) ապահովել հանրային համակարգչի հասանելիություն և հատուկ պատրաստված աշխատակցի կողմից թվային հմտությունների խորհրդատվություն և աջակցություն պետական թվային ծառայություններից օգտվելու նպատակով:

Կրթության ոլորտի թվայնացման գործընթացում կարևոր նշանակություն ունի կրթության կառավարման տեղեկատվական համակարգի (այսուհետ ԿԿՏՀ) զարգացումը: ԿԿՏՀ-ն տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, ինչպես նաև հաշվետվությունների ստացման և հրապարակման էլեկտրոնային միասնական համակարգ է, որի միջոցով իրականացվում է Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի վարչական ռեգիստրների վարումը: ԿԿՏՀ-ում պահվող տվյալները (տեղեկությունները) համալրվում են վարչական բնույթի դիտարկումների հիման վրա<sup>45</sup>:

---

<sup>45</sup> Տե՛ս ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17.08.2021թ., N 65-Ն հրամանը - <https://www.arlis.am/documentview.aspx?docid=155309>:

ԿԿՏՀ-ում գրանցվում են Հայաստանի Հանրապետությունում նախադպրոցական, հանրակրթական, նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական, բարձրագույն մասնագիտական և հետբուհական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող բոլոր ուսումնական հաստատությունները՝ անկախ կազմակերպական իրավական ձևից և ենթակայությունից՝ վարչական ռեգիստրների ամբողջականությունը ապահովելու նպատակով: ԿԿՏՀ վարումն իրականացնում է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ ԿՏԱԿ), որը համակարգի գլխավոր ադմինիստրատորն է: Իսկ համակարգի ողջ տեղեկատվությունը պահվում է ԿՏԱԿ-ի կենտրոնական հանգույցի սերվերների վրա, որից օգտվելու հնարավորություն ունեն ԿԿՏՀ բոլոր մասնակիցները:

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի մասնակիցներն են.

- ✓ ՀՀ կրթության պետական կառավարման լիազորված մարմինը,
- ✓ ՀՀ պետական կառավարման մարմինները,
- ✓ Պետական կառավարման, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները,
- ✓ ՀՀ համայնքային, պետական և ոչ պետական ուսումնական հաստատությունները:

Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի հիմնական ենթահամակարգերն են.

- Նախադպրոցական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը,
- Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգը,
- Մասնագիտական կրթության՝ նախնական (արհեստագործական), միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների և ԲՈՒՀ-երի կառավարման տեղեկատվական համակարգը,
- Պարտադիր կրթությունից դուրս մնացած երեխաների բացահայտման էլեկտրոնային համակարգը,
- Սահմանամերձ կամ բարձրլեռնային բնակավայրերի պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ ուսուցիչների գործուղման համակարգը,

- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների տեղեկատվական համակարգը:

ԿԿՏՀ համակարգի տվյալները հավաքագրվում են ուսումնական հաստատությունների միջոցով: Տվյալների մուտքագրումը և խմբագրումն իրականացնում են ուսումնական հաստատությունները յուրաքանչյուր տարի՝ մինչև սեպտեմբերի 30-ը: Ըստ անհրաժեշտության՝ մուտքագրված տվյալների մեջ փոփոխությունը կատարվում է 5-օրյա ժամկետում:

Փաստացի ստացվում է, որ կրթության ոլորտի վարչական ռեգիստրների վարումը կատարվում է տվյալների հավաքագրման, պահպանման, մշակման, ինչպես նաև հաշվետվությունների ստացման և դրանք էլեկտրոնային միասնական համակարգում հրապարակելու միջոցով: Վերջին տարիներին ՀՀ կրթության ոլորտում թվայնացման ուղղությամբ նկատելի աշխատանք է կատարվել: Արդեն իսկ թվայնացված են սովորողների ընդունելության, հաստատությունից հաստատություն տեղափոխման, գնահատման, ուսուցիչների ատեստավորման և մի շարք այլ գործընթացներ՝ մասնակի և ամբողջական բաղադրիչներով, ինչպես նաև ավարտական վկայականների՝ ատեստատների տրամադրման գործընթացը:

**Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի ենթահամակարգերի նկարագրությունը:** 2013 թվականից Հայաստանի Հանրապետության հանրակրթական ուսումնական հաստատություններում ներդրվել և գործում էր «Դպրոցների կառավարման տեղեկատվական համակարգ» էլեկտրոնային ծրագիրը՝ <https://emis.am/schools>: Ավելի ուշ ստեղծվեց և ներդրվեց «Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգը» (ՄԿԿՏՀ)՝ ներառելով նախնական (արհեստագործական) և միջին, նաև բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության համակարգերը: Հետագայում այս երկու համակարգերը միավորվեցին, և ստեղծվեց մեկ միասնական տեղեկատվական համակարգ, որը բացառում է նույն սովորողի բազմակի հաշվառումը կրթության տարբեր մակարդակներում միաժամանակ, հնարավորություն է տալիս վերահսկելու սովորողի տեղափոխման գործընթացը մի կրթական հաստատությունից այլ կրթական հաստատություն և այլն: «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգի» (<https://emis.am>) ամբողջականացման համար նշված երկու համակարգերին 2017 թվականին միացվեց նաև Նախադպրոցական կրթության կառավարման համակարգը:

**Նախադպրոցական և մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգեր:**

Համակարգերի միջոցով ամբողջական տեղեկատվություն է հավաքվում ՀՀ-ում գործող նախադպրոցական, մասնագիտական ու հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների, ենթակառուցվածքների, հաճախող երեխաների ու սովորողների, ինչպես նաև աշխատակիցների մասին: Համակարգը հնարավորություն է տալիս ավելի արդյունավետ դարձնելու տեղեկատվության ստացման և վերլուծության գործընթացը՝ միաժամանակ ապահովելով ոլորտի ծրագրերը, ռազմավարությունները և քաղաքականությունը մշակելը հստակ և վստահելի թվային տվյալների հիման վրա:

**Տասներկուամյա կրթության ապահովման տեղեկատվական համակարգ**

Համակարգը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ՀՀ-ում գտնվող կրթությունից դուրս մնացած երեխաներին, հետևելու կրթությունից դուրս մնալու ռիսկի տակ գտնվող սովորողներին: Համակարգն ունի նաև սհազանգման գործառույթ, ինչը հնարավորություն է տալիս երեխայի կրթություն ստանալու իրավունքների պաշտպանության համար պատասխանատու պետական կառավարման մարմիններին սովորողի մասին տեղեկատվությունը արագ փոխանակելու և կանխելու երեխայի կրթությունից դուրս մնալը, ինչպես նաև օժանդակելու դուրս մնացած երեխաների կրթական իրավունքի վերականգնման գործընթացին:

**Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման և արձանագրման համակարգ**

Համակարգի միջոցով թվայնացվել են երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների գնահատման, վերագնահատման, արձանագրությունների կազմման գործընթացները: Համակարգը հնարավորություն է տալիս կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի բացահայտման պարագայում ֆիքսելու երեխային մատուցվող ծառայությունների ծավալները, տեսակները: Այս համակարգը միտված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների կրթության կազմակերպման, մատուցվող ծառայությունների տեսակի, ծա-

վալի, արդյունքների մասին տեղեկատվության հավաքագրման և վիճակագրության վարման գործընթացներն առավել արդյունավետ դարձնելուն:

**Տվյալների բազա ըստ բուհերի, դպրոցների, նախադպրոցական հաստատությունների և քոլեջների**

ԿԿՏՀ բաժինը ստեղծվել է տվյալների հիման վրա հետազոտություններ, ուսումնասիրություններ և վերլուծություններ իրականացնող, ինչպես նաև կրթական քաղաքականությամբ հետաքրքրվող հետազոտողներին և շահագրգիռ անձանց ու կազմակերպություններին լայն և բազմաշերտ տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Այստեղ կարելի է գտնել ինչպես ամփոփ տվյալներ, այնպես էլ ինքնուրույն ձևավորել նախընտրելի տվյալների բազաներ կրթության բոլոր ոլորտների վերաբերյալ: Ստեղծված են նաև վերլուծական գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս ունենալու դինամիկ շտեմարաններ տարբեր համադրությունների միջոցով:

**Աղյուսակ 2. ՀՀ կրթության ոլորտում առավել փարածված կայքերն ու դրանց նկարագիրը**

Հ/Հ	Կայք	Տեսիլնող	Կայքի նկարագրություն	Կայքի հնարավորություններ
1.	Դիմորդի կայք <a href="https://dimord.am">https://dimord.am</a>	Գնահատման և թեստավորման կենտրոն	Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից վարվող կայքը նախատեսված է դիմորդներին պաշտոնական տեղեկատվության տրամադրման համար: Կայքում ներկայացված են պետական ավարտական և միասնական քննությունների, ընդունելության կարգի, ընթացիկ գնահատումների, ազգային ստուգատեսների, միջազգային հետազոտությունների և դիմորդներին անհրաժեշտ այլ տեղեկություններ:	<ul style="list-style-type: none"> <li>✓ Ընդունելության հայտ</li> <li>✓ Հրապարակումներ</li> <li>✓ Հայտարարություն</li> </ul>
2.	Առաջին դասարան ընդունելության հայտագրման էլեկտրոնային համակարգ <a href="https://hayt.emis.am/welcome">https://hayt.emis.am/welcome</a>	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	ՀՀ պետական հանրակրթական դպրոցներում, որոնք տվյալ բնակավայրում միակը չեն, առաջին դասարանցիների ընդունելությունը կատարվում է առցանց համակարգի միջոցով: Բոլորի համար հավասար մեկնարկային պայմաններ ապահովելու նպատակով յուրաքանչյուր ծնող աշխարհի ցանկացած ծայրից իր երեխային կարող է առաջին դասարան հաճախելու համար առցանց համակարգով գրանցել պետական հանրակրթական որևէ դպրոցում: Հայտագրման համակարգի միջոցով երեխայի դպրոցի առաջին դասարանի գրանցումն իրականացվում է Հանրային ծառայության համարանիշի (ՀԾՀ) միջոցով:	<ul style="list-style-type: none"> <li>✓ Հայտագրում</li> <li>✓ Ընդունելության հայտ</li> </ul>
3.	Հեռավար էլեկտրոնային դպրոց <a href="https://e-school.am">https://e-school.am</a>	Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն	Հեռավար էլեկտրոնային դպրոցն ապահովում է աշակերտների կրթության անընդհատությունը՝ ըստ դպրոցական կրթական ծրագրի բովանդակության: Ուսուցման կազմակերպումն իրականացվում է Microsoft Teams ծրագրի միջոցով՝ էլեկտրոնային նյութերի, նախապես նկարահանված տեսադասերի տեղադրման և վեբինարների կազմակերպման միջոցով: Կայքը հնարա-	<ul style="list-style-type: none"> <li>✓ Առցանց կրթություն</li> <li>✓ Նորություններ</li> <li>✓ Ծրագրեր</li> </ul>



4.	<p>Հայկական կրթական միջավայր պաշարների շտեմարան  <a href="https://lib.armedu.am">https://lib.armedu.am</a></p>	<p>Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն</p>	<p>Պաշարների շտեմարանը էլեկտրոնային կրթական միասնական հարթակ է, որում ըստ կատեգորիաների համակարգված են շուրջ 12500 պաշարներ (դասագրքերի, ուսումնական ձեռնարկների, պարբերականների էլ. տարբերակներ, կրթական փաստաթղթեր, ուսումնամեթոդական օժանդակ և լրացուցիչ նյութեր): Շտեմարանը հնարավորություն է ընձեռում որոնելու և ուսումնասիրելու կայքում տեղադրված նյութերը, տեղեկանալու օլիմպիադաների անցկացման ժամկետների և մասնակիցների վերաբերյալ, ծանոթանալու հանրակրթության չափորոշիչներին:</p>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Առցանց շտեմարան</li> <li>✓ Նորություններ</li> <li>✓ Հրապարակումներ</li> </ul>
5.	<p>Հայկական կրթական միջավայր ֆորում  <a href="https://forum.armedu.am">https://forum.armedu.am</a></p>	<p>Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն</p>	<p>Հայկական կրթական միջավայր ֆորումն ազատ հաղորդակցման կրթական հարթակ է, որում կրթության ոլորտի բոլոր շահառուները կարող են կազմակերպել և կամ մասնակցել տարբեր քննարկումների, մասնագիտական խորհրդատվության, առցանց միջոցառումների, փորձի փոխանակման նպատակով ստեղծված թեմաների աշխատանքին (շուրջ 2400 թեմա): Կայքը հնարավորություն է ընձեռում գրանցվելու համակարգում, մասնակցելու տարբեր քննարկումների, որոնելու քննարկումներ ըստ թեմաների:</p>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Առցանց ֆորում</li> <li>✓ Նորություններ</li> <li>✓ Հրապարակումներ</li> <li>✓ Բլոգ</li> </ul>
6.	<p>Հեռավար ուսուցման էլեկտրոնային համակարգ  <a href="https://elearning.armedu.am">https://elearning.armedu.am</a></p>	<p>ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն</p>	<p>Հեռավար ուսուցման էլեկտրոնային համակարգը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից վարվող կայք է, որը հնարավորություն է ընձեռում մասնակցելու հեռավար դասընթացներին, տեղադրելու նյութեր և ուսումնասիրելու ուսուցիչների կողմից տեղադրված նյութերը:</p>	<ul style="list-style-type: none"> <li>✓ Տեղեկատվություն</li> <li>✓ Հեռավար ուսուցում</li> </ul>

### **Տնտեսագիտական կրթության թվայնացման մոտեցումների շուրջ:**

Ժամանակակից պայմաններում ողջ աշխարհում կրթության թվայնացման գործընթացները հանգեցնում են առանձին մասնագիտությունների կրթական չափորոշիչների վերանայման, աշխատաշուկայի պահանջներին դրանց առավել համապատասխանեցման, ինչպես նաև կրթական վերջնարդյունքների բարելավման: Կրթության թվայնացումը ձևավորում է գաղափարների գեներացման յուրօրինակ միջավայր, որի հիման վրա նորարարական նախագծեր են խթանվում: Այն իրենից ներկայացնում է հաղորդակցման միջոցների ամբողջություն, որի արդյունքում համապատասխան սովորողները, շրջանավարտները և այլ շահակիցները համատեղ ստեղծագործական աշխատանքի հնարավորություն են ստանում:

Հետխորհրդային տարածքում վերջին տարիներին ակտիվացել են քննարկումները տնտեսագիտական կրթության՝ տնտեսության պահանջներին էլ ավելի համապատասխանեցման խնդրի հետ կապված: Այդ նպատակով Ռուսաստանի Դաշնությունում ձևավորվել է Դաշնային ուսումնամեթոդական միավորումը, որին անդամակցում է տնտեսագիտության և կառավարման մասնագիտացումներ ունեցող ավելի քան 100 բուհ: Դաշնային ուսումնամեթոդական միավորման աշխատանքներին մասնակցում են նաև Հայաստանի, Ղազախստանի և հետխորհրդային այլ երկրների որոշ բուհեր ևս:

Կրթության ոլորտում վերջին տարիներին տեղի ունեցող գործընթացները որոշ միտումներ են մատնանշում.


- Թվայնացում և թվային գրագիտություն,
- Միկրոուսուցում, թրեյնինգներ,
- Գեյմիֆիկացում. VR և AR տեխնոլոգիաների կիրառում,
- Հարմարվողական ուսուցում՝ հիմնված ընդհանրական, այսպես կոչված փափուկ հմտությունների (soft skills) վրա,
- Դասախոսի դերի փոփոխություն:

Ժամանակակից տնտեսագիտական կրթության հիմնական առաքելությունն է թվային տնտեսության կադրային ռեսուրսի ձևավորումը՝ օժտված հետազոտական և նախագծային հմտություններով: Այս առումով կարևոր է տնտեսության և կազմակերպությունների կառավարման ոլորտում բարձր

որակավորում ունեցող մասնագետների պատրաստումը, որոնք ունեն տնտեսագիտական մտածողություն և գործնական խնդիրներ լուծելու, տարբեր ոլորտների ընկերությունների աճի հնարավոր ռազմավարություններ նախագծելու ունակություն:


Նշված նպատակներին հասնելու համար կարևոր է ոչ միայն առաջադիմական ու ուսումնական պլանների մշակումը, այլև իրատեսական կրթական վերջնարդյունքներ սահմանելն ու թե՛ դասավանդման, թե՛ գիտելիքի գնահատման մեթոդաբանության վերանայումը:

Ստորև գծապատկերում ներկայացված է կրթական ծրագրերի բաղադրիչների և որակավորման պահանջների կապը:



**Գծապատկեր 10. Կրթական ծրագրերի բաղադրիչների և որակավորման պահանջների միջև կապը**

Աշխատանքի շուկայի և կրթական համակարգի համապատասխանեցումը սխեմատիկորեն կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



**Գծապատկեր 11. Աշխատանքի շուկայի և կրթական համակարգի համապատասխանեցումը**

**Կրթության ոլորտի թվայնացման միջազգային փորձը:** Համարվում է, որ կրթության ոլորտի թվայնացման ամենից հաջողված փորձն ունեն Ֆինլանդիան, Սինգապուրը, Ճապոնիան: Ուստի և այս երկրների փորձի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել ՀՀ-ում իրականացվող ծրագրերի տեսանկյունից:

**Ֆինլանդիայի փորձը**

Դեռևս 2000-ականներին PISA վարկանիշով Ֆինլանդիան բավական բարձր դիրք էր գրավում, մինչդեռ 2015 թվականին էապես զիջել էր դիրքերը՝ հայտնվելով վարկանիշային ցուցակի քսանյակում: Այս իմաստով էլեկտրոնային դասագրքերի ներդրումը դիտարկվում էր որպես կրթության որակի բարձրացման կարևորագույն միջոց: Կրթության թվայնացումը Ֆինլանդիայում սկսվել է դեռևս 2010-ականների սկզբից, երբ սկսեցին ի հայտ գալ և արագորեն տարածում ստանալ էլեկտրոնային դասագրքերը, ինչը թե՛ դպրոցների, թե՛ ուսուցիչների, թե՛ առհասարակ հասարակության շրջանում

մի շարք հարցեր առաջացրեց: Նախ, սկսեցին ակտիվորեն քննարկել հարցը, թե արդյո՞ք կրթությունը կարող է արդյունավետ իրականացվել առանց թղթային կրիչների, ո՞րն է տեսալսողական և տեքստային նյութի ճիշտ հարաբերակցությունը, ինչպե՞ս է իրականացվելու հետադարձ կապը և այլն: Սկանդինավյան երկրները համարվում են բարձր տեխնոլոգիական երկրներ, որտեղ ինտերնետի հասանելիությունը ավելի քան 96% է<sup>46</sup>, իսկ խելացի հեռախոսներ (սմարթֆոններ) ունեն բնակչության շուրջ 98%-ը<sup>47</sup>: Հետաքրքրական է, որ թեև ֆիննական դպրոցները բավականին լավ հագեցած են տեխնիկայով և ունեն ինտերնետ հասանելիության բարձր մակարդակ, այդուհանդերձ սովորողները այդքան հաճախ չեն օգտագործում համակարգիչներն ու ինտերնետը սովորելիս, որքան սկանդինավյան մյուս երկրների սովորողները: Օրինակ, Ֆինլանդիայում միջին դասարաններում կրթական նպատակներով ինտերնետը շաբաթական գոնե մեկ անգամ օգտագործողների տեսակարար կշիռը 72% է, մինչդեռ Դանիայում այդ ցուցանիշը կազմում է 99%, իսկ ավագ դպրոցում՝ 84%, մինչդեռ Դանիայում այն 97% է կազմում<sup>48</sup>: Գրեթե նույն պատկերն է համակարգիչները կրթական նպատակներով օգտագործելու ցուցանիշի մասով: Արդյունքում 2015 թվականին Ֆինլանդիայի կրթության և մշակույթի նախարարությունը նոր ռազմավարություն մշակեց, որը կրթության ոլորտում տեխնոլոգիական թռիչք պետք է ապահովեր: Այս իմաստով ներդրվեցին մի շարք գործիքներ, որոնք պետք է նպաստեին սովորողների շրջանում անհրաժեշտ հմտությունների ձևավորմանը, կրթության որակի բարձրացմանը: Մասնավորապես, մշակվեցին հարթակներ, որոնք սովորողների շրջանում պարբերաբար որոշակի աշխատանքներ ներբեռնելու, կատարված աշխատանքների որակական հատկանիշները բարձրացնելու, ինչպես նաև որոշակի կարգապահական բաղադրիչներ է պարունակում: Ուսուցանողների համար էլ դրանք կրթության գործընթացի նկատմամբ ընթացիկ վերահսկողություն իրականացնելու, գիտելիքը գնահատելու գործիք են:

<sup>46</sup> Eurostat, *Share of households with internet access in Finland from 2007 to 2020 [Graph]*. Statista, 2021, May 5, <https://www.statista.com/statistics/377766/household-internet-access-in-finland/>.

<sup>47</sup> Clausnitzer J., *Mobile phone usage in Finland – Statistics and facts*. 2021. <https://www.statista.com/topics/7760/mobile-phone-usage-in-finland/#dossierKeyfigures>.

<sup>48</sup> European Commission. (2019). *2nd survey of schools: ICT in education. Objective 1: Benchmark progress in ICT in schools. Final report*. Publications Office in the European Union.

### ***Էստոնիայի փորձը***

Էստոնիայում կրթության թվայնացումը սկսվել է դեռևս 1990-ականներին: Այդ գործընթացում ակտիվ դերակատարում են ունեցել ոչ միայն պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, այլև մասնավոր հատվածը՝ բիզնես համայնքը, ներդրողները և, իհարկե, կրթական հաստատությունները: Պետական մարմիններն ուշադրություն են դարձնում կրթական հաստատությունների տեխնիկական հագեցվածությանը, ուսումնական հաստատությունները պարբերաբար վերապատրաստում են ուսուցիչներին և դասախոսներին, որպեսզի վերջիններս կարողանան նորագույն տեխնոլոգիաները, նորարարական մեթոդները կիրառել կրթական գործընթացում, իսկ տարբեր մասնավոր ընկերություններ համատեղ դրամաշնորհային ծրագրեր են իրականացնում, ինչը թույլ է տալիս ուսումնական հաստատություններին մի կողմից թարմացնել ուսումնական ծրագրերը, մյուս կողմից՝ սարքավորումները:

Հատկանշական է, որ էստոնական կրթական համակարգում ուսուցչին ու դասախոսին մեծ ազատություն է տրված վերանայելու ուսումնական ծրագրերը, վերափոխելու դրանք՝ հիմք ընդունելով իրենց նախկին փորձը: Իսկ կրթական համակարգի շահառուները ակտիվորեն օգտագործում են էլեկտրոնային ուսումնական նյութեր, տեխնոլոգիական և նորարարական դասընթացներ են ուսումնասիրում, ուսուցանողների հետ հնարավորություն ունեն շփվելու հատուկ թվային հարթակներում և այլն:

### ***Սինգապուրի փորձը***

Սինգապուրի կրթության նախարարությունը 1990-ականներին կրթական համակարգի արդիականացման ուղղությամբ քայլեր մշակեց, որի նպատակն էր կյանքում կիրառական գիտելիքի փոխանցումը սովորողներին: Բոլոր կրթական ծրագրերում ներդրվեցին համակարգչագիտությանն առնչվող դասընթացներ, որոնց միջոցով սովորողներին փոխանցվում էին համակարգչի և տեխնոլոգիաների՝ տնտեսության տարբեր բնագավառներում կիրառման հմտություններ:

Սինգապուրի կրթական համակարգի առանձնահատկություններից գլխավորը, թերևս, կարելի է համարել կրթության անընդհատության գաղափարի ներդրումն ու այն, որ սովորողը պետք է հնարավորություն ունենա սովորելու ցանկացած ժամանակ և ցանկացած վայրից: Առանցքային հան-

գամանք է նաև այն, որ շեշտը դրվում է ստեղծարար մտածողության ձևավորման և կրեատիվ կրթության վրա:

Կառավարության նախաձեռնությամբ մշակվել և ներդրվել է «Ապագայի հմտություններ» (Skills Future) ծրագիրը, որի նպատակը լրացուցիչ կրթության ապահովումն ու մասնագետների շարունակական զարգացումն է: 25 տարեկանից բարձր ցանկացած անձ կարող է 500 սինգապուրյան դոլար վարկ ստանալ մասնագիտական կրթության ծրագրերին մասնակցելու համար, իսկ 40 տարեկանից բարձր քաղաքացիների կրթության ծախսը 90%-ով ֆինանսավորում է պետությունը<sup>49</sup>: Ընդ որում, հիմնական շեշտը դրվում է հատուկ հարթակների միջոցով կազմակերպվող առցանց դասընթացների վրա: Մեկ այլ կարևոր նախաձեռնություն է մեծահասակների կրթության «Նորարարական ուսուցում 2020» (Innovation Learning 2020) ծրագիրը, որի նպատակն է առցանց ուսուցման զուգորդմամբ վերապատրաստման ծրագրեր իրականացնելը: Սակայն ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մասնավոր ընկերությունների միայն մեկ քառորդն է շարունակական կրթությանն ուշադրություն դարձնում, իսկ դրանց ավելի քան 30%-ն էլ դեռևս առցանց ուսուցման բաղադրիչը չի կիրառում<sup>50</sup>:

### **Ճապոնիայի փորձը**

Կրթության ոլորտում թվային տեխնոլոգիաների ներդրման առաջին հաջողված փորձերից էր Ճապոնիայի բաց համալսարանի (the Open University of Japan) հիմնումը, որն աշխատող անձանց որակավորման բարձրացման, առցանց և դեռ առ դեմ մեթոդների համադրմամբ անհրաժեշտ գիտելիք ստանալու և հմտություններ զարգացնելու հնարավորություն է ընձեռում: Ընդ որում, դասընթացները երեկոյան ժամերին կամ ոչ աշխատանքային օրերին են իրականացվում<sup>51</sup>:

2014 թվականին ներդրվեց մասսայական, բաց դասընթացների հարթակը (JMOOC), որտեղ տեղադրված էին Ճապոնիայի 13 բուհերի դասըն-

<sup>49</sup> Lim V. et al., Massive Open and Online Courses and Open Education Resources in Singapore // Southeast Asian Ministers of Education (SEAMEO) Journal, տ. 1, 2017, pp. 1–10.

<sup>50</sup> Chen Z., Promoting innovative learning in training and adult education—a Singapore Story / Z. Chen, A. Chia, X. Bi. – DOI: 10.1080/0158037X.2020.1772224 // Studies in Continuing Education, 2020, pp. 1–12.

<sup>51</sup> Yang J., Building a Learning Society in Japan, the Republic of Korea and Singapore. / J. Yang, R. Yorozu. // UIL Publication Series on Lifelong Learning Policies and Strategies. UNESCO Institute for Lifelong Learning, №2, 2015, pp. 1–47.

թացները: 2016 թվականին հիմնվել է Կրթության կառավարման ճապոնական համակարգը (Japan Instructional Management System), որի հիմնական առաքելությունը համապատասխան ստանդարտների մշակումն է, դրանց ներդրմանը հետևելը, ինչպես նաև թվային կրթության էկոհամակարգի ձևավորմանը նպաստելը: Բավական ակտիվ աշխատանքներ են տարվում հեռավար դասընթացների և առհասարակ հեռավար կրթության համակարգի մշակման ուղղությամբ:

### ***Կրթության ոլորտի թվայնացման միջազգային փորձի կիրառման հնարավորությունները ՀՀ-ում***

Կրթության թվայնացման հաջողված փորձ իրականացրած երկրների օրինակը վկայում է, որ այս ոլորտում հաջողելու մեկ յուրահատուկ մոդել գոյություն չունի: Յուրաքանչյուր երկիր հաջողել է, քանի որ մի կողմից հաշվի է առել կրթության ոլորտում իր ունեցած ավանդույթներն ու առանձնահատկությունները, մյուս կողմից հասկացել է թվային տեխնոլոգիաների անխուսափելի զարգացումն ու դրանց ազդեցությունը հասարակական և տնտեսական հարաբերությունների տարաբնույթ ոլորտների վրա:

Հայաստանի Հանրապետությունում կրթության թվայնացման, ոլորտում տեղեկատվական տեխնոլոգիաների և նորարարական մեթոդների ներդրման և զարգացման առումով կարևոր ենք համարում իրականացնել հետևյալ քայլերը.

- ✓ կրթության թվայնացման հայեցակարգի և դրա իրագործման միջնաժամկետ ծրագրերի մշակում,
- ✓ կրթական թվային հարթակների որակի գնահատման համակարգի ներդրում և մշտադիտարկում,
- ✓ սովորողների և ուսուցանողների շրջանում թվային տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացում,
- ✓ էլեկտրոնային գործիքների, թվային հարթակների ներդրմամբ կարգապահության, ժամանակի ճիշտ կառավարման, թիմային աշխատանքի հմտությունների զարգացում,
- ✓ առցանց ուսուցման հնարավորության ընդլայնում, աշխատանքն ու ուսումը զուգակցելու հնարավորության ընձեռում,



- ✓ առցանց և դեմ առ դեմ ուսուցման օպտիմալ համադրման ապահովում,
- ✓ էլեկտրոնային կրթության բաղադրատարրերի ներդրում շարունակական կրթության, մասնագիտական վերապատրաստման ոլորտում,
- ✓ առցանց կրթության մեթոդական ուղեցույցների մշակում և դասավանդողների պատրաստվածության մակարդակի բարձրացում:

## 5.2. Թվայնացման միտումները ՀՀ առողջապահության համակարգում և զարգացման հիմնախնդիրները

Համաշխարհային տնտեսությունը երրորդ հազարամյակ մուտք գործեց չորրորդ արդյունաբերական հեղափոխության հոլովույթում, որի հիմնական տարրերիչ առանձնահատկությունը զարգացման նախորդ շրջափուլերի համեմատությամբ թվայնացման գործընթացների ակտիվ ներթափանցումն է կենսագործունեության գրեթե բոլոր, այդ թվում՝ առողջապահության ոլորտ: COVID-19 համավարակն առանձնակի կատալիզատորի դեր կատարեց առողջապահության բնագավառում թվայնացման գործընթացների արագացման համար:

Առողջապահության ոլորտում թվայնացման գործընթացներն էական նշանակություն ունեն յուրաքանչյուրի համար առողջապահական ծառայությունների մատչելիությունը, հասանելիությունը և որակը խթանելու հարցում, առողջապահական համակարգն առավել «մարդակենտրոն» դարձնելու, տվյալահեն որոշումների կայացման, առողջապահական ծառայություններից քաղաքացիների բավարարվածության աստիճանի բարձրացման և այլ հարցերում:

Էլեկտրոնային առողջապահության համակարգը Հայաստանում ներդրվել է 2017 թվականից, սակայն մինչ այժմ կիրառվել է հիմնականում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով տրամադրվող բուժօգնության դեպքերի մուտքագրման և ֆինանսավորման համար:

2020 թվականի մայիսի 6-ին ընդունվեցին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման» մասին օրենքի փոփոխությունները, որոնք ներառում են նաև էլեկտրոնային առողջապահության համակարգի վերաբերյալ կարգավորումները:

Էլեկտրոնային առողջապահությունը նորագույն տեխնոլոգիաներն օգտագործում է ցանկացած վայրում մարդու առողջությանը վերաբերող անհրաժեշտ տվյալները փոխանցելու համար՝ նպաստելով տեղեկացված բժշկական որոշումների կայացմանն ու կլինիկական սխալների ռիսկերի նվազեցմանը<sup>52</sup>:

<sup>52</sup> <https://corporate.armed.am/about-system/էլեկտրոնային-առողջապահությունը-հայաստանում>:

Էլեկտրոնային առողջապահությունը Հայաստանում ներդնելու հիմնական նպատակներն են.

- առողջապահական ծառայությունների որակի և արդյունավետության բարձրացումը,
- առողջապահության համակարգի թափանցիկության ապահովումը, ծախսերի օպտիմալ բաշխումը և արդյունավետ կառավարումը,
- ճշգրիտ վիճակագրության ապահովումը, բոլոր շահառուներին մոնիթորինգի և որոշում կայացնելու համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը:

Հայաստանում էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրման արդյունքում ակնկալվում է հասնել հետևյալ արդյունքների.

- բժշկական օգնություն և սպասարկում ստացող քաղաքացիների վերաբերյալ ամբողջական տեղեկատվության ապահովում, քաղաքացիների ժամանակի և ծախսերի կրճատում, կրկնակի բուժումների, հետազոտությունների, նշանակումների, ինչպես նաև բժշկական սխալների քանակի նվազում,
- ամբողջական, լիարժեք և արդիական տեղեկատվության հասանելիության շնորհիվ պետության առողջապահական ծախսերի կրճատում, ինչպես նաև՝ բուժօժանությունների որակի բարձրացում, առողջապահության ոլորտի թափանցիկության ապահովում, ճշգրիտ վիճակագրության ձևավորում, գործընթացների օպտիմալացում՝ անհրաժեշտ տեղեկատվությունը ճիշտ ժամանակին մասնագետների համար հասանելի դարձնելով,
- բժշկական հաստատությունների բիզնես գործընթացների օպտիմալացում և արդիականացում, ծախսերի նվազեցում, սխալների և ռիսկերի կրճատում,
- ձեռագիր դեղատոմսերի՝ էլեկտրոնայինով փոխարինում, ինչը թույլ կտա վերահսկել նշանակումների ճշգրտությունը, նպատակահարմարությունը, նվազեցնել սխալ դեղատոմսերի նշանակման հետ կապված ռիսկերը, կրճատել ժամանակի ծախսը,
- ապահովագրական ընկերությունների կողմից համակարգում առկա տեղեկատվության՝ օրենսդրությամբ սահմանված կարգով օգտա-

գործման հնարավորություն՝ ապահովագրական սակագնի առավել ճշգրիտ հաշվարկման և ընդհանուր վերահսկման համար:

Ներկայումս էլեկտրոնային առողջապահության համակարգն առցանց հասանելի է և կիրառվում է Հանրապետության 500 բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների մոտ և 6 ապահովագրական կազմակերպություններում:

**«Առողջապահության բնագավառում թվայնացման ռազմավարական նպատակադրումները: Ստանդարտացում:** Տվյալների արդյունավետ փոխանակումը ենթադրում է ստանդարտների մշակում, որոնք կապահովեն տվյալների տեսակների համապատասխանությունը տարբեր համակարգերում:

Առողջապահական էլեկտրոնային գրառումները, որոնք հավաքվում են էլեկտրոնային առողջապահության ծառայությունների կողմից, պետք է համապատասխանեն տվյալների միջազգային ստանդարտներին և առողջապահական տվյալների շտեմարաններին, որոնք մշակվել են տվյալների ստանդարտացման ազգային համատեքստում:

Ստանդարտների մշակումը պետք է ուղեկցվի հետևյալ սկզբունքներով.

I. Առողջապահական տեղեկատվական համակարգերի և ծառայությունների միջև տվյալների փոխանցման և առողջապահական բառարանների սահմանման ստանդարտներ.

II. Ոչ առողջապահական համակարգերի և ծառայությունների հետ տվյալների փոխանակման ստանդարտներ:

Առողջապահական էլեկտրոնային առկա, ինչպես նաև հետագայում ստեղծվելիք ենթակառուցվածքները պետք է մշակվեն այնպես, որ հնարավորություն ընձեռեն առողջապահական տվյալները փոխանակելու այլ՝ մասնավոր և պետական բժշկական կազմակերպությունների ներքին կառավարման համակարգերի հետ:

Տարբեր առողջապահական տեղեկատվական համակարգերի և ծառայությունների միջև բժշկական և առողջապահական տվյալների անխափան փոխանակում ապահովելու համար պետք է մշակել առողջապահական տվյալների բառարաններ (այսուհետ՝ USA), որը ներառում է էլեկտրոնային առողջության ազգային ստանդարտները, ծառայությունները և տաքսոնոմիաները:

Առողջապահական տվյալների բառարանները հնարավորինս հիմնված պետք է լինեն միջազգային ստանդարտների և տաքսոնոմիաների վրա: Այնուամենայնիվ, միջազգային ստանդարտների կիրառումը չպետք է լինի մեխանիկական ընտրության արդյունք, այլ պետք է հիմնված լինի հետևյալ սկզբունքների վրա.

- I. Ստանդարտի գործնական կիրառումը: Ստանդարտների կիրառումը պետք է լինի նպատակային: Եթե ստանդարտը սահմանում է գործընթաց կամ համակարգ, որը տվյալ պահին հնարավոր չէ կիրառել որդեգրված քաղաքականության շրջանակներում, ապա պետք է ընդունել, որ տվյալ փուլում ստանդարտը ներդնելու անհրաժեշտություն չկա:
- II. Բժշկական կազմակերպությունների պատրաստվածության մակարդակը: Ստանդարտների ներդրումը պետք է իրականացվի աստիճանաբար: Նախքան ստանդարտների մշակումը պետք է իրականացնել նախապատրաստական աշխատանքներ:

**Բնակչության համար պարտադիր էլեկտրոնային բժշկական քարտերի, էլեկտրոնային դեղատոմսերի, ուղեգրերի և անաշխատունակության թերթիկների ներդրում:**

Բժշկական հաստատություններում վարվող մատյաններն ամբողջությամբ թվայնացված չեն, և դրանք ձևավորվում են հատուկ գրքերում՝ տվյալների կրկնակի գրառման միջոցով, որն անարդյունավետ է, դժվար վերահսկելի և ոչ թափանցիկ: Բացի այդ, բնակչությանը տրամադրվող տեղեկանքները թղթային են, որը նույնպես ժամանակատար է և ոչ արդյունավետ: Անհրաժեշտ է մշակել և ներդնել ենթահամակարգ, որը հնարավորություն կտա ավտոմատ եղանակով գեներացնելու տեղեկանքները (էպիկրիզ, ամբուլատոր քարտի քաղվածք և այլն):

Համակարգում առկա բժշկական հաստատություններում վարվող հաշվառման ձևերը ենթակա են վերանայման և բարելավման, քանի որ դրանք մինչ այժմ չեն կիրառվել հաստատված տարբերակում առկա ամբողջ ծավալով մուտքագրում ապահովելու նպատակով:

Ներկայումս բացակայում են հիվանդությունների ռեգիստրները: Հիվանդությունների ռեգիստրը պացիենտների ռեգիստրի հատուկ տեսակ է, որը լայնորեն օգտագործվում է հանրային առողջապահական պրակտիկայում: Ըստ սահմանման՝ հիվանդությունների ռեգիստրը համակարգ է, որը

հավաքում, վերլուծում և տարածում է որոշակի խմբի հիվանդների առողջության հետ կապված տվյալներ: Այն ծառայում է գիտական, կլինիկական կամ հանրային առողջության (քաղաքականության) նպատակներին:

Էլեկտրոնային դեղատոմսը էլեկտրոնային եղանակով բժշկական դեղատոմսերի լրացումն է, դրա փոխանցումը և դեղորայքի իրացումը: Էլեկտրոնային դեղատոմսի համակարգի ներդրման նպատակն է բարելավել դեղերի նշանակման ճշգրտությունը, բարձրացնել հիվանդի անվտանգությունը և նվազեցնել ծախսերը, ինչպես նաև ապահովել անվտանգ, իրական ժամանակում, երկկողմանի էլեկտրոնային կապը բժշկական կազմակերպությունների և դեղատոմսերի միջև:

Էլեկտրոնային դեղատոմսի ներդրումը հնարավորություն կընձեռի լուծելու հետևյալ խնդիրները.

- I. **Նպաստել պացիենտի անվտանգության բարձրացմանը:** Համակարգը պետք է մշակվի և ներդրվի այնպես, որ ապահովի դեղատոմսերի անսխալ լրացման, հաշվառման և իրացման գործառույթները:
- II. **Աջակցել կլինիկական պրոցեսի կազմակերպմանը:** Համակարգը պետք է ունենա նախազգուշացման մեխանիզմներ, որոնք բժիշկներին թույլ են տալիս վերահսկել դեղամիջոցների անբարենպաստ ազդեցությունները, ինչպիսիք են՝ ալերգիաները, փոխազդեցությունն այլ դեղերի հետ կամ բուժման տարբեր սխեմաների կիրառումը:
- III. **Ապահովել դեղատոմսի իրացման վերահսկումը:** Էլեկտրոնային դեղատոմսի ծառայությունները կօգնեն բժիշկներին հետևել, թե արդյո՞ք պացիենտները պատշաճ իրացնում են դեղատոմսը: Այս եղանակով էլեկտրոնային դեղատոմսի ծառայությունները կարող են նաև տեղեկացնել բժիշկներին, թե որ պացիենտներն են շարունակում ստանալ դեղորայք և որոնք, հնարավոր է, արդեն դադարել են ստանալ նշանակումները բուժումից հետո:
- IV. **Բարձրացնել դեղատոմսի գործադրման արդյունավետությունը:** Էլեկտրոնային դեղատոմսի ծառայությունները պետք է մշակվեն և իրականացվեն այնպես, որ բժիշկները հնարավորություն ունենան առավել հեշտ կերպով լրացնելու դեղատոմսի անհրաժեշտ դաշտերը:

**V. Կրճատել կրկնակի հոսպիտալացման դեպքերը:** Էլեկտրոնային դեղատոմսի ծառայությունները պետք է նվազեցնեն սխալները, և դա հասանելի կլինի որոշումներ կայացնողների համար՝ ժամանակի ընթացքում գնահատելու և վերահսկելու կրկնակի հոսպիտալացման դեպքերը:

**VI. Ծախսարդյունավետության ապահովում:** Ընդհանուր առմամբ, թվայնացմանն ուղղված միջոցառումները միջնաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով կհանգեցնեն ծախսերի խնայողության, չնայած սկզբնական փուլում համակարգի ներդրման և դեղատների կողմից դրա կիրառման համար պահանջվող շահագործման ծախսերը կարող են աճել:

2019 թվականի հոկտեմբեր ամսից մշակվել և փորձնականորեն ներդրվել է էլեկտրոնային ուղեգրի ենթահամակարգը, որը հնարավորություն է տալիս պոլիկլինիկական օղակի բժշկին բուժման կամ ախտորոշման նպատակով պացիենտին տրամադրելու էլեկտրոնային ուղեգիր, որը հասանելի է լինում ընդունող բժշկական հաստատությանը: 2020 թվականի առաջին եռամսյակում ենթահամակարգը հասանելի է դարձել պոլիկլինիկական օղակի բոլոր բժշկական հաստատությունների և այդ ուղեգրերը սպասարկող հաստատությունների համար: Ներդրվել են նաև լաբորատոր որոշ հետազոտությունների համար կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տրամադրվող էլեկտրոնային ուղեգրերը: Այնուամենայնիվ, ծառայությունն ամբողջությամբ չի ներառում բոլոր լաբորատորիաներ ուղեգրումները, որոնք անհրաժեշտ է իրականացնել որպես ուղեգրման թվայնացման մաս: Էլեկտրոնային ուղեգրի ամբողջական ներդրումը պետք է ներառի բոլոր տեսակի լաբորատոր ուղեգրումների հաշվառումը պոլիկլինիկական օղակի կողմից և լաբորատորիաների կողմից տվյալների էլեկտրոնային եղանակով դրանց մուտքագրումը:

Ներկայումս անաշխատունակության թերթիկը տրամադրվում է թղթային տարբերակով, հետևաբար թերթիկների տրամադրման գործընթացի վերահսկումն արդյունավետ չէ: Ավելին, ժամանակավոր անաշխատունակության համար նպաստ տրամադրող մարմիններն ի սկզբանե իրազեկված չեն լինում անձի անաշխատունակության և վերջինիս ժամկետների մասին:

**Հեռաբժշկության զարգացում:** Հեռաբժշկությունը հնարավորություն է տալիս անցկացնելու վիդեո կամ օդափոխ հանդիպումներ պացիենտի և մասնագետի միջև՝ որպես հեռավար խորհրդատվության արդյունավետ գործիք, կապ հաստատելու մասնագետ-մասնագետ ձևաչափով: Որոշ դեպքերում բժիշկները կարող են օգտագործել հեռաբժշկությունը՝ կանխելու COVID-19-ի, գրիպի և այլ վարակիչ հիվանդությունների տարածումը: Այն նաև նվազեցնում է պացիենտների՝ բժշկական հաստատություններ այցելելու անհրաժեշտությունը: Սա հատկապես կիրառելի է հղի կանանց, տարեցների, քրոնիկ կամ իմունային անբավարարություն ունեցող հիվանդների համար: Գործիքը կարող է օգտագործվել նաև դեղատոմսերի ստացման համար պոլիկլինիկական օղակի բժշկին պացիենտի պլանային այցելությունների փոխարեն:

Համապետական հեռաբժշկության ծառայությունների իրականացումը սերտորեն կապված է երկրի S<S ենթակառուցվածքի կարգավիճակի հետ: Հեռաբժշկության ծառայությունները ներառված չեն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում՝ որպես էլեկտրոնային առողջապահության համակարգի բաղադրիչ, ինչը առաջ է բերում իրավական բարելավումների անհրաժեշտություն:

**Առողջապահական տվյալների օգտագործմամբ վերլուծական կարողությունների զարգացում:** Արդյունավետ էլեկտրոնային առողջապահական ծառայություններ իրականացնելու համար էլեկտրոնային առողջապահության համակարգի ներդրումը միայն առաջին քայլն է: Անհրաժեշտ է մեխանիզմներ ստեղծել առողջապահական համակարգում տվյալների արդյունավետ հավաքագրման և օգտագործման համար: Տվյալների արդյունավետ և հավաստի հավաքագրման համար էլեկտրոնային առողջապահության համակարգում տվյալների հավաքագրումը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.

- I. **Պացիենտակենտրոն:** Համակարգը պետք է նախագծված լինի այնպես, որ թույլ տա ստեղծել հիվանդի առողջության պատմության ամբողջական պրոֆիլը՝ հիմնված դեպքերի գրանցման ընթացքում հավաքված տվյալների վրա:
- II. **Թիրախավորված:** Տվյալների հավաքագրումը պետք է թիրախավորված լինի. այն չպետք է լինի ընդհանուր և միատեսակ համակար-



գի տարբեր խմբերի շահառուների համար և պետք է հարմարեցված լինի յուրաքանչյուր խմբի պահանջներին:

- III. **Վավերացված:** Տվյալների մուտքագրման ժամանակ համակարգը պետք է իրականացնի տվյալների վավերացում: Տեքստային ազատ մուտքագրման դաշտերը պետք է նվազագույնի հասցվեն: Դասակարգման ենթակա ցանկացած տեղեկատվություն պետք է ստանդարտացվի: Համակարգը պետք է նաև իրականացնի տվյալների վավերացում տվյալների մշակման ընթացքում (կրկնակի գրանցումների բացահայտում և այլն):
- IV. **Ստանդարտացված:** Համակարգում հավաքված տվյալները պետք է հետևեն ազգային և միջազգային ստանդարտացման պահանջներին:
- V. **Ճկուն և հարմարեցվող:** Համակարգը պետք է նախագծված լինի այնպես, որ այն հնարավորություն ընձեռի հավաքելու տվյալների փոփոխվող բազան՝ առանց ծրագրում մեծ փոփոխություններ իրականացնելու:

Միևնույն ժամանակ էլեկտրոնային առողջապահության համակարգից օգտատերերի ներկայիս գործառույթների գնահատումը (ԱՆ, ԱԱԻ, բժշկական կազմակերպություններ, բժիշկներ և այլն) վկայում է որոշումների կայացման գործընթացում համակարգում առկա տվյալների կիրառման ցածր մակարդակի մասին: Վերլուծական և հաշվետվական հնարավորությունները բարելավելու համար պետք է.

- I. հզորացնել ստանդարտ հաշվետվական հնարավորությունները,
- II. մշակել վերլուծությունների իրականացման հնարավորություններ և ներդնել նոր գործառույթներ (ցպահանջ հաշվետվություններ, տվյալների պահեստ և այլն),
- III. վերապատրաստել օգտատերերին՝ առկա տվյալներն արդյունավետորեն վերլուծելու և հասկանալու համար,
- IV. ներդնել տվյալների վերլուծության աշխարհագրական տեղեկատվական համակարգ ինտեգրված էլեկտրոնային առողջապահության համակարգում:

Հիմնականում, ամփոփ տվյալների վերլուծությունը չի պահանջում հիվանդների անձնավորված տեղեկատվություն: Այսպիսով, նպատակին հաս-

ներու համար պետք է մշակվեն և ներդրվեն ապանձնավորված տվյալների վերլուծական հնարավորություններ, որը կապահովի նաև տվյալների անվտանգությունը:

**Հիվանդությունների ռեգիստրների ձևավորում:** Հիվանդությունների ռեգիստրների ներդրման նպատակն է ապահովել մի շարք քրոնիկ հիվանդությունների դեպքերի էլեկտրոնային հաշվառումը և դրանց պատշաճ վարումը, որոնք ուղղված են այդ հիվանդությունների դեպքերը պատշաճ կերպով կառավարելուն և բժշկական ծառայությունների որակի բարձրացմանը:

Հիվանդությունների ռեգիստրները հիվանդների հաշվառման հատուկ տեսակ են, որոնք լայնորեն կիրառվում են հանրային առողջապահական պրակտիկայում: Ըստ սահմանման՝ հիվանդությունների ռեգիստրը մի համակարգ է, որը հավաքում, վերլուծում և տրամադրում է տեղեկատվություն որոշակի խմբի հիվանդների առողջության վերաբերյալ, որը ծառայում է գիտական, կլինիկական կամ հանրային առողջության (քաղաքականության մշակման) նպատակներին: Հիվանդությունների ռեգիստրները բժիշկներին հնարավորություն են ընձեռում.

- I. ապահովելու ռեգիստրում հաշվառված պացիենտների պարբերական վերահսկողությունը,
- II. ամենօրյա կլինիկական պրակտիկայում ծառայելու որպես տվյալների աղբյուր՝ ապացույցների վրա հիմնված ուղեցույցների մշակման համար,
- III. համադրելու մասնագետների փորձը և առողջության առաջնային պահպանման գործառույթները,
- IV. ժամանակ առ ժամանակ տրամադրելու հիշեցումներ բուժող բժիշկներին և պացիենտներին,
- V. բացահայտելու բուժօգնության կարիք ունեցող պացիենտներին,
- VI. ավելի դյուրին դարձնելու պացիենտների բուժօգնության անհատական պլանավորումը,
- VII. ապահովելու անհրաժեշտ տվյալներ պացիենտների և բժշկական կազմակերպությունների համար՝ բուժօգնության համակարգման նպատակով,
- VIII. վերահսկելու բժիշկների աշխատանքը:

Հիվանդությունների ռեգիստրների հիմնական գործառույթն է կոնկրետ մեկ հիվանդության համար հավաքագրվող տեղեկատվության՝ տարբեր տեսանկյուններից ներկայացումը և ժամանակին տրամադրումը, մասնավորապես.

- I. **այցերի ժամանակ** պացիենտին տրամադրել տեղեկություններ (օրինակ՝ լաբորատոր հետազոտության արդյունքներ, դեղորայքի ցուցակներ), որոշում կայացնելուն աջակցելու խորհուրդներ (սովորաբար հաշվետվություն կամ այլ վիզուալ տեղեկատվություն, որը կարող է ներառել բուժման հատուկ առաջարկներ),
- II. **այցերի միջև** բժշկական օգնության կարիք ունեցող պացիենտներին հայտնաբերելու համար,
- III. **պարբերաբար** տրամադրել պացիենտի կարգավիճակի վերաբերյալ հաշվետվություններ, որոնք տրամադրում են տվյալներ պացիենտի բուժման առաջընթացի վերաբերյալ:

**Բժշկական անձնակազմի տեղեկատվական համակարգի ձևավորում:** Հայաստանում բժշկական անձնակազմի ճկուն և արդյունավետ տեղեկատվական համակարգի կարևորությունը ևս մեկ անգամ ընդգծվեց 2020 թվականին՝ COVID-19 համաճարակի ընթացքում:

Ազգային համատեքստում բուժաշխատողների ռեգիստրը պետք է դիտարկվի որպես բժշկական մասնագետների վերաբերյալ տեղեկատվության հեղինակավոր աղբյուր, որը կարող է ապահովել ամբողջ առողջապահական անձնակազմի ճշգրիտ հաշվարկ, ովքեր ժամանակին աշխատել են կամ ներկայումս աշխատում են առողջապահության ոլորտում: Այս համակարգի հիմնական գործառույթները պետք է լինեն բժշկական անձնակազմի վերաբերյալ տեղեկատվության գրանցումը, բժիշկների շարունակական կրթությանը և որակավորմանն օժանդակությունը և համակարգի հաշվետվական և վերլուծական հնարավորությունները:

**Բժշկական կազմակերպությունների տեխնիկական հնարավորությունների հզորացում և համակարգից օգտատերերի շարունակական ուսուցումների իրականացում:** Անհրաժեշտ է մշակել և իրականացնել բժիշկների և բուժքույրերի վերապատրաստման ծրագրեր, որոնք թույլ կտան բժշկական անձնակազմին արդյունավետորեն կատարել տվյալների մուտքագրումը և ինտեգրել այս աշխատանքը որպես կլինիկական աշխատանքի

բաղկացուցիչ մաս: Բուժաշխատողները պետք է անցնեն կիրերանվտանգության վերապատրաստման դասընթացներ՝ տվյալների անվտանգությունն ապահովելու և վերջիններիս կորուստից խուսափելու համար: Բժշկական կազմակերպությունների օպերատորները, բացի տվյալների մուտքագրումից, պետք է հնարավորություն ունենան իրականացնելու նաև վերլուծություններ և վերահսկեն բժիշկների և բուժքույրերի կողմից կատարված մուտքագրումները:

**Պացիենտին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների զարգացում:** Ներկայումս պացիենտների պորտալն ապահովում է սահմանափակ թվով գործառնություններ, ներառյալ՝ այցերին հերթագրվելը, բժշկական պատմությունը և դեպքերի դիտման հնարավորությունները՝ հիմնականում պետության կողմից փոխհատուցվող դեպքերի շրջանակում մատուցված ծառայությունների մասով: Համակարգում բացակայում են բժշկական փաստաթղթերը (էպիկրիզ, դեղատոմսի պատճենը և այլն) ներբեռնելու գործառնությունները, առցանց խորհրդատվություն ստանալու հնարավորությունը, ուսումնական և խորհրդատվական տեղեկատվությունը: Այս տեսանկյունից կարևոր է զարգացնել համակարգը, որը պացիենտին հնարավորություն կընձեռի լիարժեք տեսնելու իր առողջության պատմությունը, կառավարելու այդ տվյալները, ինչպես նաև առցանց եղանակով ստանալու բժշկական փաստաթղթերը:

Վերոհիշյալ նպատակին հասնելու համար պետք է զարգացնել էլեկտրոնային առողջապահության համակարգի պացիենտների պորտալի հնարավորությունները՝ ներառելով ստորև թվարկվող ֆունկցիաները.

- I. պացիենտը պետք է կարողանա թարմացնել իր մասին տեղեկատվությունը,
- II. պացիենտը պետք է կարողանա դիտել իր նշանակումները,
- III. պացիենտին պետք է հասանելի լինի համակարգում գրանցված դեպքերի ամբողջական պատմությունը,
- IV. պացիենտին պետք է հասանելի լինեն նշանակված դեղերի ցուցակները, լաբորատոր թեստերի և այլ ախտորոշիչ հետազոտությունների արդյունքները,
- V. պացիենտը պետք է հնարավորություն ունենա պորտալի միջոցով գրանցվելու և նախաձեռնելու հեռաբժշկության այցեր,

VI. պացիենտի պորտալը պետք է հնարավորություն ընձեռի արտահանելու և տպելու պացիենտի բուժօգնության դեպքերի հետ կապված ցանկացած բժշկական փաստաթուղթ,

VII. այն պետք է պարունակի կրթական նյութեր և առողջության հետ կապված տեղեկատվություն՝ կենտրոնանալով կոնկրետ պացիենտի առանձնահատկությունների վրա:

**«Առողջապահության բնագավառում թվայնացման գործընթացների բարելավման հիմնախնդիրները:»** «Առողջապահության բնագավառում թվայնացման գործընթացների բարելավման ուղղությամբ առաջարկվում է ձեռնարկել հետևյալ քայլերը.

1. Ստանդարտացում՝ հիվանդությունների, բժշկական ծառայությունների, բժշկական պարագաների և միջոցների կատալոգիզացիա:
2. Իրավական ակտերի միջոցով ստանդարտների և կատալոգների օգտագործման պարտադրում բոլոր բժշկական հաստատություններում և դրանց ճկունության ապահովում՝ փոփոխվող միտումներին համապատասխան՝ դրանց օպերատորի նշանակման ճանապարհով:
3. Ներդրման գործընթացը պետք է ուղեկցվի նաև պատասխանատվության միջոցների կիրառությամբ (ներդրման պահանջները չպահպանելու համար):
4. Այդ կատալոգների և տեղեկատուների օգտագործման վերաբերյալ ապահովագրական ընկերությունների համար պահանջի սահմանում:
5. Բնակչության համար պարտադիր էլեկտրոնային բժշկական քարտերի ներմուծում:
6. Հանրապետության ողջ տարածքում վարակիչ հիվանդությունների տարածվածության ռեեստրների մշակում և ներդրում, այդ թվում՝ անասնաբուժական հսկողությանն առնչվող:
7. Բժշկական կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայությունների և դրանց արժեքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, այդ տեղեկատվության հիման վրա առաջարկվող գների էլեկտրոնային տեղեկատուների ստեղծում, բյուջետային միջոցների ծախսերի վերլուծություն:

8. Առողջապահության նախարարությունում վերլուծական կենտրոնի ձևավորում՝ բժշկական հաստատություններից հավաքագրվող տվյալների վերլուծության համար:
9. Բժշկական տվյալների պահպանման միասնական սերվերային կենտրոնի ստեղծում, անհատական տվյալների պահպանության հարցում գաղտնիության երաշխավորում:
10. Բժշկական տվյալների պահպանությունը միայն ՀՀ տարածքում իրականացնելու օրենսդրական պահանջի ամրագրում, կիբերանվտանգության երաշխավորում՝ համապատասխան լիցենզիոն ծրագրային ապահովման միջոցով՝ անվտանգության տեխնիկական առաջադրանքով՝ ցանկալի է մշակված հայկական ծրագրավորող կազմակերպությունների կողմից:
11. Բժշկական տվյալների պահուստային կրկնօրինակման ապահովում:
12. Բժշկական կազմակերպությունների լիցենզավորման պահանջներում միասնական էլեկտրոնային համակարգերի առկայության վերաբերյալ պահանջների սահմանում, որոնք կապահովեն միասնական փաստաթղթաշրջանառությունը բժշկական կազմակերպությունների միջև, հաճախորդների համար նվազագույն ծառայությունների հավաքածուն, այդ թվում՝ բժշկի մոտ հերթագրումը, թերապևտների հեռաբժշկության ծառայությունների մատուցումը, ախտորոշման ծառայությունների ուղեգրումը և այլն: Վերջիններիս նվազագույն պահանջները պետք է հանդիսանան լիցենզավորման պահանջ, այդ թվում՝ կատալոգների և տեղեկատուների մասով:
13. Առողջապահության նախարարության, համայնքապետարանների, բժշկական կազմակերպությունների և առողջապահական ոլորտի այլ կազմակերպությունների միջև էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության կազմակերպում՝ Հանրապետությունում առողջապահական ամբողջական պատկերի ստացման նպատակով:
14. Առանձնահատուկ պահանջների սահմանում ռազմական հոսպիտալների համար, այդ թվում՝ ռեզերվների էլեկտրոնային հաշվառման համակարգի վերաբերյալ:
15. Հաջորդող փուլերում՝ հիվանդությունների բուժման մոտեցումների ստանդարտացում՝ բժիշկների ներառականության ապահովմամբ

այդ գործընթացում՝ բուժման ստանդարտացված քարտերի լրացման ճանապարհով, որոնց հիման վրա ժամանակի ընթացքում հնարավոր կլինի մշակել հիվանդությունների բուժման սեփական պրոտոկոլներ, ինչպես նաև ապահովել առողջապահական ծառայությունների սպառողների իրավունքների պաշտպանությունը:

### 5.3. Էլեկտրոնային առևտրի ոլորտում թվայնացման նորամուծությունների ներդրման և կիրառման հնարավորությունները

**Էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման հիմնախնդիրները:** Ինտերնետային ռեսուրսները համարվում են «ինտելեկտուալ արտադրանք», որոնք կարող են դիտվել որպես նյութական և ոչ նյութական ակտիվներ:

**Աղյուսակ 3. Էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մակարդակը ԵԱՏՄ երկրներում<sup>53</sup>**

ԵԱՏՄ երկիր	Էլեկտրոնային գործարքները կարգավորող օրենք	Տվյալների գաղտնիությունը կարգավորող օրենք	Սպառողների պաշտպանությանը վերաբերող օրենքներ	Կիբեռանցավորության դեմ պայքարին վերաբերող օրենքներ
Հայաստան	+	+	-	+
Բելառուս	+	+	+	-
Ղազախստան	+	+	-	+
Ղրղզստան	+	+	Առկա է նախագիծ	+
Ռուսաստան	+	Առկա է նախագիծ	Առկա է նախագիծ	-

ՄԱԿ-ի Առևտրի և տնտեսական զարգացման համաժողովը (UNCTAD) բնորոշում է էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մակարդակն առանձին երկրներում և տարածաշրջաններում՝ ըստ հետևյալ չորս ուղղությունների՝ էլեկտրոնային գործարքները կարգավորող օրենսդրություն, տվյալների պաշտպանությունն ու գաղտնիությունը երաշխավորող օրենսդրություն, էլեկտրոնային տիրույթում սպառողների իրավունքների պաշտպանության հարցերը կարգավորող օրենսդրություն և կիբեռանվտանգության ապահովմանն ուղղված օրենսդրություն: Հատկանշական է, որ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման չորս բաղադրիչներից երկրների մեծամասնության կողմից հարաբերականորեն անտեսված են էլեկտրոնային միջավայրում սպառողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենքները: Այս առումով բացառություն չեն նաև ԵԱՏՄ անդամ

<sup>53</sup> UNCTAD, Summary of Adoption of E-Commerce Legislation Worldwide, Summary of Adoption of E-Commerce Legislation Worldwide | UNCTAD, մուտք՝ 20.09.2022, 13:50:



երկրները, որտեղ էլեկտրոնային միջավայրում սպառողների պաշտպանության խնդիրներն օրենսդրական կարգավորում են ստացել առայժմ միայն Բելառուսում, թեև Ղրղզստանում և Ռուսաստանում առկա են համապատասխան օրենքի նախագծեր: Միաժամանակ, կարող ենք նշել, որ էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման տեսանկյունից ԵԱՏՄ երկրներից համեմատաբար շահեկան վիճակում են Հայաստանը, Բելառուսը և Ղազախստանը, որտեղ վերոնշյալ չորս բաղադրիչներից առկա չէ միայն մեկը՝ էլեկտրոնային սպառողների պաշտպանության օրենքը Հայաստանում ու Ղազախստանում, և կիբեռահանցավորության դեմ պայքարի իրավական կարգավորումը՝ Բելառուսում: Ռուսաստանը զիջում է ԵԱՏՄ բոլոր երկրներին էլեկտրոնային առևտրի իրավական կարգավորման մակարդակով:

Համաշխարհային բանկի՝ այլ միջազգային կառույցների հետ համագործակցության արդյունքում ձևավորած WITS վերլուծական տվյալների բազան պարունակում է էլեկտրոնային առևտրի զարգացման համար աշխարհի երկրների հնարավորությունները բնութագրող համապարփակ ցուցիչներ, որոնք ամփոփվում են 6 հիմնական ուղղություններում<sup>54</sup>.

1. SCS ենթակառուցվածքներ և ծառայություններ,
2. վճարային լուծումներ,
3. ֆինանսավորման հասանելիություն,
4. իրավական և կարգավորող շրջանակներ,
5. լոգիստիկա և առևտրի ընթացակարգերի պարզեցում,
6. էլեկտրոնային առևտրին պատրաստվածության գնահատում և ռազմավարության ձևավորում:

Հարկ է նշել, որ թվայնացման միջոցով մատուցվող ծառայությունների արժեքը վերջին 5 տարիների ընթացքում միջինում 1.5 անգամ գերազանցում է արտահանվող SCS ծառայությունների արժեքը: Ընդ որում, եթե SCS ծառայությունների արտահանման աճը վերջին 5 տարիների ընթացքում կազմել է միջինում 10%, ապա թվայնորեն մատուցվող ծառայություններինը՝ մոտ 15-20%: Այս թվերը, անշուշտ, վկայում են ծառայությունների առևտրում թվային տեխնոլոգիաների աճող կարևորության մասին:


Սկսած 2012 թվականից՝ ՀՀ-ում դիտվում է թվային տնտեսության բազային ենթակառուցվածքի զարգացման դրական շարժընթաց: Մասնավոր-

<sup>54</sup> WITS - World Integrated Trade Solutions, <https://wits.worldbank.org/>.

րապես՝ ինտերնետ հասանելիության ծառայությունների բաժանորդների թիվը (այդ թվում՝ շարժական 3G/4G/4G+ և 2G) 2019 թվականին կազմել է 3 087 291, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 6.7%-ով: Ավելացել են լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման ծավալները, որոնց բաժանորդների թիվը (ներառյալ՝ շարժական 3G/4G/4G+) 2019 թվականին կազմել է 2 830 853, ինչը նշանակում է, որ նախորդ տարվա համեմատ գրանցվել է բաժանորդների թվի 9.4% աճ: Թեև ՀՀ բնակչության մեծ մասն ունի ինտերնետ հասանելիություն, այդուհանդերձ, Հայաստանի բնակչությունը հիմնականում համացանցն օգտագործում է զվարճության կամ պարզագույն հաղորդակցության նպատակներով՝ ներառյալ զանգեր (90%), սոցիալական ցանցեր (68%), հաղորդագրություններ (60%), երաժշտություն (54%) և առցանց նորություններ (53%): Առավել կարևոր և արժեքաստեղծ գործառնությունների համար համացանցի օգտագործման ցուցանիշները համեմատաբար ավելի ցածր են՝ սեփական բովանդակության տեղադրում համացանցում (16%), աշխատանքի փնտրում համացանցում (11%), մասնակցություն առցանց քննարկումներին (8%), ապրանքների ու ծառայությունների վաճառք (7%) կամ գնում (13%) և այլն: Համաշխարհային բանկի ուսումնասիրության համաձայն՝ չնայած էլեկտրոնային առևտրի հարթակների օգտագործման ծավալների ավելացմանը՝ ՀՀ բնակչության շատ փոքր հատվածն է (13%) ապրանքներ ու ծառայություններ գնում էլեկտրոնային եղանակով: Ավելին, էլեկտրոնային գնումների վիճակագրությունը քաղաքներում և գյուղերում տարբեր է: Երևանաբնակների 21%-ը առցանց գնումներ է կատարել վերջին 3 ամիսներին, մինչդեռ քաղաքային և գյուղական մյուս համայնքներում այս ցուցանիշը, համապատասխանաբար, կազմում է բնակչության 14 և 9%-ը<sup>55</sup>:

---

<sup>55</sup> PSRC 2021 report.pdf, մուտք՝ 22.09.22, 16:14:



**Գծապատկեր 12. ՀՀ-ում ինֆերններից օգտվող բաժանորդների թվաքանակը 2011-2021թթ. ընթացքում<sup>56</sup>**

**Էլեկտրոնային վճարային համակարգերի առանձնահատկություններն էլեկտրոնային առևտրի ապահովման գործում:** Էլեկտրոնային առևտուրը՝ որպես միջազգային առևտրի դրսևորման ձև, թեև հեշտացնում է ապրանքների ձեռքբերման գործընթացը, այնուամենայնիվ, էլեկտրոնային առևտրի օբյեկտ հանդիսացող ապրանքները ևս հատում են երկրների ֆիզիկական սահմանները և ենթակա են մաքսային ու սահմանային կառավարման ընթացակարգերի: Ավելին, քանի որ էլեկտրոնային առևտուրը հաճախ ներառում է փոքր քանակությամբ ապրանքներ, սովորաբար ընդամենը մեկ որոշակի ապրանք՝ անհատական առաքումով, լոգիստիկ գործընթացների հետ կապված՝ ի հայտ են գալիս լրացուցիչ խնդիրներ: Էլեկտրոնային առևտրով պայմանավորված սահմանային ծախսերի իջեցումը պահանջում է առևտրի ավելի արդյունավետ պայմաններ, մասնավորապես՝ առևտրի ընթացակարգերի պարզեցում, ներդաշնակեցում, ստանդարտացում և արդիականացում: Ավտոմատացման հնարավորությունը և միջսահմանային առևտրի մեջ շփման կրճատումը կարևոր են առևտրային ծախ-

<sup>56</sup> PSRC 2021 report.pdf, էջ 35:

սերն իջեցնելու և արտադրողներին շուկաներին ու արժեքային շղթաներին միացնելու համար:

Թվային տեխնոլոգիաները մեծապես ազդել են համաշխարհային տնտեսության վրա, ընդլայնել տեղեկատվական բազան, կրճատել տեղեկատվության հավաքագրման ծախսերը, նպաստել էլեկտրոնային առևտրի ձևավորմանն ու առաջընթացին, անդրադարձել հասարակության կյանքի, գործունեության, մտածելակերպի, սովորույթների, հաղորդակցման վրա, խթանել տնտեսության նորարարական զարգացումը: Զգալի փոփոխություններ են տեղի ունեցել նաև ֆինանսական ոլորտում:

Թվային տեխնոլոգիաները թույլ են տալիս վճարումներն իրականացնել տարբեր մեթոդներով՝ բանկային քարտերից կամ էլեկտրոնային դրամապանակներից ուղղակի գանձմամբ, վարկի կամ ապառիկ ծրագրի հիման վրա, կանխիկ, օնլայն բանկինգում հաշիվ-ապրանքագրերի և նույնիսկ կրիպտոակտիվներով գործարքների միջոցով: Հայտնի են մոտ 200 վճարային տարբերակներ, որոնց մեծ մասը կիրառելի է նաև Հայաստանում.

1. բանկային քարտեր՝ Visa, Mastercard, Maestro, Diners, Amex, ...,
2. կանխիկ՝ Cash on delivery, Western Union, Money Gram, Xoom, ...,
3. բանկային փոխանցումներ՝ Classic (SWIFT, SEPA, IBAN), ակնթարթային փոխանցումներ (ACH, Sofort),
4. էլեկտրոնային դրամապանակներ (e-Wallets)՝ PayPal, Payoneer, Skill, ...,
5. վճարային լուծումներ՝ Amazon Pay, Google Pay, Etsy Checout, ...,
6. կրիպտոարժույթներ՝ Bitcoin, Ethereum, altcoins, stablecoins, ...:

Վճարային համակարգերն ըստ երկրների տարբերվում են ազգային ֆինանսական կառավարման, վարկային ռիսկերի, մատակարարման ռազմավարությունների և սպառողների նախասիրությունների առումներով: Դրանք կարող են էլեկտրոնային առևտրի ոլորտում երկրների և ընկերությունների մասնակցային դերակատարումների որոշման կամ փոփոխության պատճառ հանդիսանալ: Առհասարակ, վճարահաշվարկային համակարգերի բազմազանությունն ու նրանց գործարքային տարբերությունները բարդություն են առաջացնում էլեկտրոնային առևտրի վճարման մեկ տարբերակի ընտրության հարցում: Անկանխիկ շրջանառությունը զարգացնելու և էլեկտրոնային առևտրի նախադրյալներ ձևավորելու նպատակով ՀՀ ԿԲ-ն իրականացնում

է շարունակական միջոցառումներ ֆինանսական գործարքների հուսալիությունը և թափանցիկությունը, դրանց նկատմամբ վստահությունը, կիրառման տնտեսական նպատակահարմարությունը բարձրացնելու ուղղությամբ:


2018 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է վճարահաշվարկային համակարգերի գծով համագործակցությունը Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների կենտրոնական բանկերի հետ՝ համագործակցելով Վճարային քարտերի ազգային համակարգերի, ISO 20022 ստանդարտի ներդրման, ֆինանսական հաղորդագրությունների փոխանցման և հաշվարկների իրականացման, արագ վճարումների, ֆինանսական տեխնոլոգիաների զարգացման, կիբեռանվտանգության ոլորտներում<sup>57</sup>:

2019 թվականին Կենտրոնական բանկերի Եվրասիական խորհրդի հովանու ներքո ստորագրվել է փոխըմբռնման հուշագիր դրամական փոխանցումների շուկայում թափանցիկության և սպառողների շահերի պաշտպանության մասին խորհրդատվական ցուցումների վերաբերյալ, ինչը հնարավորություն կտա խորացնելու երկրների միջև համագործակցությունն առանց բանկային հաշվի բացման դրամական փոխանցումների իրականացման ոլորտում և կբարձրացնի այդ շուկայի թափանցիկությունը<sup>58</sup>:

**Մանրաձախ առևտրով զբաղվող հայկական կայքերի վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:** Մինչ անդրադառնալը առևտրով զբաղվող կայքերին՝ հարկ է ներկայացնել հայկական բոլոր կայքերի վարկանիշային աղյուսակը: Գծապատկեր 13-ից պարզ է դառնում, որ բնակչության մեծ զանգված հետևում է ինչպես տեղեկատվական, այնպես էլ լրատվական կայքերին, այդ թվում՝ [spyur.am](http://spyur.am), [mamul.am](http://mamul.am), [zham.am](http://zham.am) և այլն: Վերոնշյալ կայքերին հաջորդում է [list.am](http://list.am)-ը, որն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների առք ու վաճառքի ամենամեծ «շուկան» ՀՀ-ում:

<sup>57</sup> Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ: Տարեկան հաշվետվություն 2019թ., Երևան:

<sup>58</sup> Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ: Տարեկան հաշվետվություն 2020թ., Երևան:



**Գծապատկեր 13. Հայկական կայքերի վարկանիշը<sup>59</sup>**

1. Անդրադառնալով մանրաձախ առևտրով զբաղվող էլեկտրոնային իրազեկման հայկական կայքերի վիճակագրությանը՝ պետք է ընդգծել, որ ուսումնասիրության օբյեկտներ են հանդիսացել List.am-ը, Avto.am-ը, Menu.am-ը և Sas.am-ը՝ հաշվի առնելով թե՛ բնակչության հատվածում վերջիններիս հաճախ օգտագործվելիությունը, թե՛ զբաղեցրած դիրքը ՀՀ շուկայում (Տե՛ս աղյուսակ 4):

**Աղյուսակ 4. Մանրաձախ առևտրով զբաղվող հայկական կայքերի վիճակագրական տվյալների ամփոփ վերլուծությունը 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ<sup>60</sup>**

	List.am	Avto.am	Menu.am	Sas.am
Զբաղեցրած դիրքն աշխարհի մակարդակով <sup>61</sup>	5870	1302373	495470	170988
Զբաղեցրած դիրքը ՀՀ-ի մակարդակով	4	NA	588	154
Ընդհանուր մուտքեր	5 900 000	42 600	96 500	266 400
1 այցի ընթացքում արված քայլերի քանակը	17.36	1	2.4	5.13
1 այցի միջին տևողությունը	11 րոպե 53 վրկ	NA	1 րոպե 55 վրկ	4 րոպե 6 վրկ

<sup>59</sup> Лучшие сайты Армении, рейтинг - каталог армянских сайтов (ranks.am), մուտք՝ 20.09.2022, 12:45:

<sup>60</sup> list.am Traffic Analytics & Market Share | Similarweb, մուտք՝ 23.09.2022, 11:20:

<sup>61</sup> Որքան ցածր է աշխարհի մակարդակով զբաղեցրած ցուցանիշը, այնքան լավ դիրքում է գտնվում տվյալ օբյեկտը:

Էլեկտրոնային իրազեկման օնլայն հարթակների շարքում առաջատար դիրք է զբաղեցնում List.am-ը: Նշենք, որ Similarweb-ի տվյալների շտեմարանի համաձայն՝ List.am-ի մրցակից կայքեր են համարվում avto.am-ը, hyurservice.com-ը, biglemon.am-ը և rates.am-ը: List.am-ից օգտվում են 18-ից բարձր բոլոր անձինք, իսկ ամենաակտիվ հետևորդներ համարվում են 25-34 տարեկանները (36.06%):

Հաջորդ գծապատկերում ներկայացված է, թե մեծ մասամբ ի՞նչ նեսուրսներից են օգտվում List.am-ի օգտատերերը՝ մուտք գործելով կայք: Դրանց թվին են դասվում նորությունները, ծրագրավորման և հեռուստատեսության հետ կապված նյութերը, էլեկտրոնիկա և ֆինանսական հատվածի որոշ բլոկներ:




**Գծապատկեր 14. List.am մուտք գործող անձանց հեղափոխությունների շրջանակը 1-5 բալային սանդղակով**

2. Avto.am-ը, ինչպես արդեն նշվեց, համարվում է List.am-ի մրցակից կայք, չնայած կայքի մուտքերի թիվն ընդամենը 42600 է: Տվյալների համաձայն՝ սույն թվականի օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կայքի այցելուների թվի նվազման միտում է գրանցվել՝ 1566962-ից հասնելով 1302373-ի<sup>62</sup>: Avto.am-ի մրցակից կայքեր են համարվում drive.ge-ն, autopapa.ge-ն և sbtjapan.com-ը: Ի տարբերություն List.am-ի կայքի մարքեթոլոգների՝ այստեղ կայքի զարգացման համար շեշտը դրվում է առաջին հերթին ֆեյսբուքյան տիրույթի և mobile advertising-ի վրա:


<sup>62</sup> avto.am Traffic Analytics & Market Share | Similarweb, մուտք՝ 10.10.2022, 11:50:

3. Առևտրով զբաղվող հայկական կայքերից հետազոտության հաջորդ օբյեկտը menu.am-ն է: Հուլիս-սեպտեմբեր ամիսների կտրվածքով կայքի այցելուների թիվը տատանվել է (համապատասխանաբար՝ 404145, 495470 և 638993), և մեծ մաս են կազմում կանայք՝ 51.38%:



**Գծապատկեր 15. Menu.am մուտք գործող անձանց տարիքային առանձնահատկությունների նկարագիրը**

Ինչպես առևտրով զբաղվող նախորդ կայքերում, այստեղ ևս կայք մուտք գործողների տարիքային շերտ մեծ մասամբ տատանվում է 25-34-ի շրջանակներում: Տվյալների համաձայն՝ կայքի մրցակիցներ են համարվում sas.am-ը, buy.am-ը և dandessert.am-ը:



**Գծապատկեր 16. Menu.am մուտք գործելու մարքեթինգային քայլերը**


Ինչպես ցույց էին տալիս հետազոտության նախորդ փուլում կատարված հարցումների արդյունքները, չնայած հասարակությունը համաճարակից հետո ապրանքների գնումը և վաճառումը օֆլայն հարթակից տեղափոխեց օնլայնի, այնուամենայնիվ, in-person գործիքը դեռ մնում է արդիական: Այսինքն՝ մարքեթիոլոգները շարունակում են գործարկել մարդկանց օֆլայն դի-



մելու, օֆլայն առաջարկներ անելու աշխատելաճը: Հետազոտության արդյունքները՝ ուղղված առևտրով զբաղվող կայքերի մարքեթինգային քայլերին, վկայում են այն մասին, որ product trade-ը մարքեթինգային քայլերի շարքում առաջինն է և միտված է մարդկանց հետ շփման օֆլայն տարբերակի:

4. Հետազոտության վերջին օբյեկտը sas.am-ն է: Ի տարբերություն իր մրցակից Menu.am-ի՝ sas.am-ը վերջին եռամսյակում հավատարիմ հաճախորդների պակաս չի ունեցել: Հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին այցելուների թիվը կազմել է համապատասխանաբար 281100, 266400 և 281600: Այցելուների 53.89%-ը եղել են կանայք, 46.11%-ը՝ տղամարդիկ:

Կարևոր է ընդգծել, որ կայքի մրցակիցներն են buy.am, dandessert.am և parma.am: Ստորև գծապատկերում ներկայացված են այն ապրանքները, որոնք օնլայն հարթակի միջոցով ամենահաճախ են պատվիրվում sas.am-ից:



**Գծապատկեր 17. Sas.am-ից հաճախ պատվիրված ապրանքների ցանկը<sup>63</sup>**

Մարքեթինգային քայլերից, ինչպես նախորդ կայքերի դեպքում էր, sas.am-ը ևս կիրառում է in-person գործիքը:

**Մանրածախ առևտրով զբաղվող արտասահմանյան կայքերի վիճակագրական տվյալների ուսումնասիրություն:** ՀՀ բնակչությունը, բացի տե-

<sup>63</sup> sas.am Traffic Analytics & Market Share | Similarweb, մուտք՝ 10.10.2022, 12:50:


դական օնլայն հարթակներից, օգտվում է նաև արտասահմանյան կայքերից՝ ապրանք կամ ծառայություն գնելու և կամ վաճառելու նպատակով: Հետազոտության համար ընտրվել են Amazon.com-ը, eBay.com-ը, Wildberries.ru-ն և AliExpress.com-ը՝ հաշվի առնելով հետազոտության նախորդ փուլում կատարված հարցման արդյունքները, որոնք փաստում են, որ վերջիններս առևտրի նպատակով հաճախ օգտագործվող կայքերն են (Տե՛ս [ՕՀաշվետվություն 2.pdf \(ysu.am\)](#)):

**Աղյուսակ 5.Մանրածախ առևտրով զբաղվող արտասահմանյան կայքերի վիճակագրական տվյալների ամփոփ վերլուծությունը 2022թ. օգոստոսի 31-ի դրությամբ<sup>64</sup>**

	<b>Amazon.com</b>	<b>eBay.com</b>	<b>AliExpress.com</b>	<b>Wildberries.ru</b>
Զբաղեցրած դիրքը աշխարհի մակարդակով	12	36	70	68
Զբաղեցրած դիրքը իր տարածաշրջանի մակարդակով	4	15	31	9
Ընդհանուր մուտքեր	2.4 միլիոն	756.2 միլիոն	415.7 միլիոն	340 միլիոն
1 այցի ընթացքում արված քայլերի քանակը	8.95	6.99	5.02	12.46
1 այցի միջին տևողությունը	7 րոպե 18 վրկ	7 րոպե 2 վրկ	6 րոպե 6 վրկ	11 րոպե 3 վրկ

1. Amazon.com կայք այցելուների թիվը հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին նվազել է՝ 2.7 բիլիոնից հասնելով 2.4 բիլիոնի: Ի տարբերություն հայկական կայքերի այցելուների՝ այստեղ մեծ մաս են կազմում տղամարդիկ՝ 59.93%: Amazon.com կայքից օգտվում են հասարակության 18-ից բարձր տարիքի անձինք, որոնց մեջ գերակշիռ մաս են կազմում 25-34 տարեկանները: Որպես առևտրի օնլայն հարթակ՝ կայքի մրցակիցներն են ebay.com-ը, walmart.com-ը և target.com-ը:


<sup>64</sup> [list.am Traffic Analytics & Market Share | Similarweb](#), մոսթը՝ 23.09.2022, 11:20:



**Գծապատկեր 18. Amazon.com-ից հաճախ պատվիրված ապրանքների ցանկը**

Ինչպես ցույց էին տվել հետազոտության 2-րդ փուլի արդյունքները, և փաստեցին similarweb.com-ի տվյալները, Amazon.com կայքից մեծ մասամբ օգտվում են համակարգչային տեխնիկա, հագուստ, կոշիկ և կենցաղային պարագաներ գնելու նպատակով:

2. eBay.com-ը ևս օնլայն առևտրի ամենատարածված հարթակներից է: Այցելուների թիվը սույն թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսներին amazon.com-ի նման նվազման միտում է ունեցել՝ 756 միլիոնից հասնելով 700 միլիոնի: Կին այցելուները կազմում են 34.31%, տղամարդիկ՝ 65.69%:




**Գծապատկեր 19. eBay.com մուտք գործող անձանց տարիքային առանձնահատկությունների նկարագիրը**

Օնլայն հարթակներում մեծ մասամբ ակտիվություն են ցուցաբերում 25-34 տարեկան անձինք:

3. Առևտրի օնլայն հաջորդ հարթակը AliExpress.com կայքն է, որի այցելուների թիվը հուլիս ամսին կազմել է 419.1 միլիոն, իսկ սեպտեմբերին՝ 415.7 միլիոն: Այցելուների 33.89%-ը կանայք են, իսկ 66.11%-ը՝ տղամարդիկ: Կայքի մրցակիցներն են alibaba.com-ը, eBay.com-ը, Amazon.com-ը և DHgate.com-ը: Մարքեթինգային գծապատկերից երևում է, որ AliExpress.com-ը համարվում է խոշոր օնլայն հարթակներից in-person գործիք կիրառողը:

4. Wildberries.ru-ն օնլայն հարթակների շարքում 4-րդ տեղն է զբաղեցնում: Ունենալով 340 միլիոն այցելու՝ այն զբաղեցնում է աշխարհի մակարդակով 68-րդ տեղը, իսկ ՌԴ-ի մակարդակով՝ 9-րդ: Հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին այցելողների թիվը համապատասխանաբար հետևյալն է՝ 308 միլիոն, 340 միլիոն և 298 միլիոն: Այցելուների 51.99%-ը կանայք են, 48.01%-ը՝ տղամարդիկ:


**ՀՀ-ի և միջազգային փորձի ուսումնասիրություն:** Ուսումնասիրելով մանրածախ առևտրի էլեկտրոնային իրազեկման հարթակի դինամիկան տարբեր երկրներում՝ կարելի է հատկապես ընդգծել List.am-ի և Amazon.com-ի գործունեությունը, քանի որ List.am-ը աշխարհի մակարդակով ՀՀ-ից մուտք գործող առաջատար կայքն է, իսկ Amazon.com-ը՝ մանրածախ առևտրով զբաղվող ամենահայտնի արտասահմանյան կայքը: Ունենալով մոտավորապես վեց միլիոն այցելու՝ List.am-ը կարողանում է ապահովել ծառայությունների որակյալ մատուցում, սակայն, ինչպես ցույց է տալիս ստորև բերված գծապատկերը, կայքից մեծ մասամբ օգտվում են ՀՀ բնակիչները, ՌԴ-ից 8 %-ն է այցելում կայք, իսկ Լեհաստանն ու Ղազախստանը՝ համապատասխանաբար՝ 1-ական %:



**Գծապատկեր 20. List.am մուտք գործող երկրների ցանկը**

Սա նշանակում է, որ կայքի գործունեությունը դեռ բարելավման կարիք ունի, ինչպես, օրինակ, լոգիստիկ խնդիրներ, օնլայն վճարման համակարգի ներդրում և այլն: Էլեկտրոնային առևտուրը հաճախ ներառում է փոքր քանակությամբ ապրանքներ, սովորաբար՝ ընդամենը մեկ որոշակի ապրանք՝ անհատական առաքումով, լոգիստիկ գործընթացների հետ կապված ի հայտ են գալիս լրացուցիչ խնդիրներ: Լոգիստիկ համակարգը ներառում է բազմաթիվ տարրեր՝ փոխադրումներ, պահեստներ, մաքսային ձևակերպումներ, տեղական փոստային համակարգ և այլն, որոնց ցածր արդյունավետությունը հանգեցնում է ծախսերի ավելացմանը: Էլեկտրոնային առևտուրը երկրի լոգիստիկ ենթակառուցվածքի զարգացման նախապայման է, իսկ ապրանքների մատակարարման լոգիստիկ ուղիների զարգացումը՝ էլեկտրոնային առևտրի աճի գրավական, քանզի էլեկտրոնային առևտրի փոքրածավալ, ցածր արժեք ունեցող ապրանքների գները բարձրանում են տրանսպորտային թույլ ենթակառուցվածքների, մենաշնորհի ծառայությունների մատուցելու և այլ գործոնների անարդյունավետությունից բխող մեծ ծախսերի պատճառով: Մրցակցելու համար համաշխարհային շուկայում օտար հարթակների հետ դեռևս բարդ է, քանի որ, բացի առևտրի ծավալների նվազումից, ՀՀ-ում դեռևս կա ինստիտուցիոնալ խնդիր օնլայն առևտրի ոլորտում: Ինչ վերաբերում է Amazon.com-ին, որն ունի 2.4 բիլիոն այցելու, ապա այս կայք մուտք գործելու անձանց գերակշիռ մասն ԱՄՆ-ից է: Սա ևս խոսում է այն մասին, որ, չնայած թվային առևտրի ծավալներն ամեն օր գրեթե աճում են, այնուամենայնիվ, ամբողջ աշխարհում այն հրահրում է թվայնացումից

բխող հարկային մարտահրավերների լուծման շուրջ քննարկումներ: Թվայնացման արագ տարածումը՝ զուգորդված առևտրային քաղաքականության ազատականացմամբ, հանգեցնում է տնտեսությունում շարունակական կառուցվածքային վերափոխումների:



**Գծապատկեր 21. Amazon.com մուտքը ըստ երկրների**

**Անհրաժեշտ միջոցառումներ:** Լիարժեք իրավական դաշտի ստեղծումն էլեկտրոնային առևտրի զարգացման նախապայմանն է, ինչը ենթադրում է էլեկտրոնային գործարքների իրականացման ընթացակարգերի պարզեցում և շուկա մուտք գործելու խոչընդոտների վերացում: Բարենպաստ նորմատիվ-իրավական դաշտ ապահովելու համար պետք է իրականացվեն օրենսդրական բարեփոխումներ ինչպես ապրանքների և ծառայությունների էլեկտրոնային առևտրի կանոնակարգման ուղղությամբ, այնպես էլ դրա հետ կապված մի շարք ոլորտներում, ինչպիսիք են էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, անձնական տվյալների պաշտպանությունը, էլեկտրոնային վճարային համակարգերը, լրգիստիկ և մատակարարման շղթաների գործունեության խրախուսումը և այլն: ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի խթանման համար անհրաժեշտ գործողություններից կարելի է առանձնացնել.

- էլեկտրոնային առևտրի ոլորտը կանոնակարգող օրենսդրության բարելավում,

- էլեկտրոնային առևտուրը կանոնակարգող հարկային օրենսդրության բարելավում,
- վճարային համակարգերի զարգացում,
- էլեկտրոնային առևտրային հարթակների զարգացում,
- էլեկտրոնային առևտրի լոգիստիկ ենթակառուցվածքի զարգացում,
- առևտրի ընթացակարգերի պարզեցում,
- սպառողների իրավունքների պաշտպանություն,
- ձեռնարկատիրության աջակցություն:

#### **5.4. Ֆինանսական հատվածում նորագույն տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները**

Ժամանակակից իրողությունների անբաժան մասնիկը կազմող թվայնացումն իր ուրույն տեղն ունի լայն կիրառությամբ և տասնամյակների պատմությամբ աչքի ընկնող երևույթների վերափոխման գործընթացներում: Փոփոխությունները ոչ միայն լրացնում են կյանքի տարբեր ասպեկտներում առկա մոտեցումները և կիրառվող գործիքակազմերը, այլ նաև դառնում են նորամուծություններ, որոնք ամբողջությամբ ձևափոխում են տնտեսվարման և հասարակության կենսագործունեության համար առանցքային հանդիսացող գործողությունների վերաբերյալ պատկերացումները: Այս պարագայում արդեն կարևորվում է ուշադրության արժանացնելն ինստիտուցիոնալ համակարգի բաղադրիչների և տարաբնույթ փոխկապակցված տարրերի հետ կապված գործընթացները, հին ինստիտուտների ձևափոխումը կամ փոխարինումը նոր ինստիտուտներով:

Ֆինանսական համակարգի դեպքում նշված հանգամանքներն առավելապես արտահայտվում են նոր պրոդուկտների մշակմամբ և ներդրմամբ, վաղուց առկա ծառայություններից օգտվելու համար դրանք մատուցող կազմակերպությունների տարածքներում ֆիզիկական ներկայության՝ նախկինում այլընտրանք չունեցող անհրաժեշտությունը գործարքների առցանց կատարմամբ փոխարինելու ձգտումով: Դրանց իրականացման համար անհրաժեշտ մի շարք «շոշափելի» գործիքներ դուրս են մղվում զանգվածային կերպով անկանխիկ ու անհպում վճարային լուծումների լայնամասշտաբ կիրառման արդյունքում: Փոփոխությունների սկզբնական շրջանում ֆինանսական գործառնությունների իրականացման և հաճախորդների ներգրավման ավանդական ինստիտուտները պարզապես ստանում էին հետաքրքիր լրացումներ, հնարավորություն էր ստեղծվում զուգահեռաբար կիրառելու տարբեր գործիքներ, ներդրվում էին ներկայումս շատ տարածված մեթոդների նախատիպերը, սակայն այժմ հիմնական շեշտը դրվում է նոր մեթոդներով հին իրողությունները լիովին փոխարինելու, այն է՝ ֆինանսական ոլորտում առկա պարադիգմերը շրջելու վրա:

Այս տեսանկյունից առաջանում են հարցեր, թե ինչպիսին են ներկայումս առկա պատկերը և վերը բերված միտումները հայաստանյան ֆինան-



սական համակարգում, ինչքանով են վերափոխվել համապատասխան ինստիտուցիոնալ միավորները նշված զարգացումների ազդեցությամբ, արդյոք պահանջված և կիրառական են նորահայտ լուծումները: Այս հարցերին պատասխանելու փորձ է ներկայացվող աշխատանքը:

Սույն աշխատանքում նախ դիտարկված են Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) ֆինանսական ոլորտին վերաբերող տեղեկատվություն տրամադրող կայքերը (այսուհետ՝ ֆինանսական տեղեկատու կայքեր), մանրամասն ներկայացված է այդ կայքերում տարաբնույթ ֆինանսական ծառայությունների և պրոդուկտների վերաբերյալ առկա տեղեկությունների ողջ սպեկտրը: Սա արված է հասկանալու համար, թե կամայական գործառնություն իրականացնել ցանկացող հաճախորդն ինչ կարող է իմանալ (ավանդային և վարկային տոկոսադրույք, տարադրամային փոխարժեք, տեղեկություններ արժեթղթերի մասով և այլն)՝ միայն Ինտերնետի ռեսուրսները կիրառելով:

Հաջորդիվ, այն փաստով պայմանավորված, որ հայաստանյան ֆինանսական շուկայում գրեթե բոլոր պրոդուկտներն ու ծառայություններն առաջարկող և ոլորտի խոշոր խաղացող հանդիսացող կազմակերպություններն առավելապես առևտրային բանկերն են, ուսումնասիրված և ըստ ուղղությունների համակարգված է ՀՀ-ում գործող առևտրային բանկերի՝ օնլայն (ինտերնետ) բանկինգի համակարգերի և մոբայլ բանկինգի հավելվածների հնարավորությունների մասով բանկերի կայքերում, նաև մոբայլ բանկինգի հավելվածների ներբեռնման կայքէջերում եղած ինֆորմացիան: Առևտրային բանկերի դեպքում, օնլայն և մոբայլ բանկինգի մասով եղածին ի լրումն, բերված է առկա օժանդակ կայքերի կիրառման և դրանցով օնլայն մատուցվող ծառայությունների նկարագիրը:

Բոլոր դեպքերում ցույց են տրված նշված կայքերի մասով SimilarWeb կայքում եղած տվյալները, որոնք վերաբերում են այցելությունների թվին, տևողությանը, տարբեր սարքավորումներին բաժին ընկնող մասնաբաժիններին, կայքեր մուտք գործելու ճանապարհներին և մի շարք այլ փոխկապակցված ցուցիչների՝ դրսևորող պոտենցիալ և առկա հաճախորդների շրջանում այդ կայքերի կիրառման մակարդակը և տարածված լինելու աստիճանը:

## **Ֆինանսական տեղեկատու կայքեր**

### **RATE.am**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ rate.am)

Հարթակը տրամադրում է տեղեկություններ ՀՀ-ում գործունեություն ծավալող հետևյալ կազմակերպությունների մասին և հետևյալ ուղղություններով.

- առևտրային բանկեր՝ փոխարժեք (փոխանակման տեսակ՝ կանխիկ և անկանխիկ, փոխարժեքի տեսակ՝ ուղղակի և խաչաձև),
- փոխանակման կետեր՝ փոխարժեք (փոխանակման տեսակ՝ մանրածախ և մեծածախ, փոխարժեքի տեսակ՝ ուղղակի և խաչաձև),
- վարկային կազմակերպություններ՝ փոխարժեք (փոխանակման տեսակ՝ կանխիկ և անկանխիկ, փոխարժեքի տեսակ՝ ուղղակի և խաչաձև),
- ներդրումային կազմակերպություններ՝ փոխարժեք (փոխանակման տեսակ՝ անկանխիկ, փոխարժեքի տեսակ՝ ուղղակի և խաչաձև),
- ՀՀ կենտրոնական բանկ (այսուհետ՝ ՀՀ ԿԲ)՝ փոխարժեք,
- միջազգային փոխարժեքներ (ներառյալ միջազգային արտարժույթի հաշվիչը և կրիպտոարժույթների փոխարժեքը. նշված է, սակայն, որ այս բաժնի վերջին թարմացումը եղել է հոկտեմբերի 3-ին՝ 10:45-ին, բայց թվականը բերված չէ<sup>65</sup>):

Կայքում առկա են ՀՀ տարածքում գործող բոլոր 17 առևտրային բանկերը: Առկա է հնարավորություն նաև քարտեզի վրա նշելու որևէ տեղանք և փնտրելու դրան ամենից մոտ գտնվող բանկային մասնաճյուղը կամ փոխանակման կետը:

Կայքն ունի արտարժույթի հաշվիչ, նաև այլ կայքերի համար վիզջեթ ստեղծելու հնարավորություն: RATE.am-ն ունի նաև հավելված, որը հասանելի է Apple Store-ում և Google Play-ում, նաև Windows Phone-ի համար:

### **MoneyMarket.am**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ moneymarket.am)

Այս հարթակը ֆինանսական ոլորտի հետ կապված գրեթե բոլոր տվյալները մեկ կայքում ամփոփող նախագիծ է: Ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է ստորև բերված բաժիններում և ենթաբաժիններում.

---

<sup>65</sup> Սույն հանգամանքն անփոփոխ կերպով դիտվել է 2022 թվականի սեպտեմբերի 26-ից նոյեմբերի 14-ը ներառող ժամանակահատվածի ընթացքում:

➤ Ֆինանսական շուկան Հայաստանում

- Արտարժույթի շուկա

Բանկերի փոխարժեքներ (առևտրային բանկերից այս հարթակում բացակայում են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ը և Արցախբանկը), ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեք, բանկերի արտարժույթային գործարքներ, արտարժույթով վարկեր բանկերի միջև, ՀՀ ԿԲ արտարժույթային ինտերվենցիաներ ամսական կտրվածքով (2017-2020 թվականների տվյալներ), միջազգային փոխարժեքներ (էջը դեռ պատրաստ չէ): Բերված տվյալների ճնշող մեծամասնությունը թարմ է:

- Արժեթղթերի շուկա

Այստեղ առկա տեղեկատվությունը բացառապես պարտատոմսերին է վերաբերում (հիմնականում պետական, որոշ դեպքերում՝ նաև կորպորատիվ)։ շրջանառությունում առկա պարտատոմսեր, առաջնային տեղաբաշխում (թողարկում), պետական պարտատոմսերի հետզնումներ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, երկրորդային շուկա, եկամտաբերության կորեր, առաջնային գործակալներ և գործակալների վարքագծի գնահատականներ (գործակալների վարքագծի մասով բերված են տվյալներ 2017-2018 թվականների համար): Բերված տվյալների ճնշող մեծամասնությունը թարմ է:

- Դրամական շուկա

Պետական պարտատոմսերով ռեպո գործարքներ, ՀՀ դրամով վարկեր բանկերի միջև, բանկերի պարտադիր պահուստավորում, ՀՀ ԿԲ հաշվեկշիռ, փողի բազա և տոկոսադրույքներ: Ենթաբաժնից ակնկալվող տվյալները գրեթե լիովին առկա են և թարմ:

➤ ՀՀ ԿԲ գործարքներ

- ՀՀ դրամով ՀՀ ԿԲ գործարքներ

ՀՀ ԿԲ տոկոսադրույքներ, ռեպո և հակադարձ ռեպո աճուրդներ ՀՀ ԿԲ-ի կողմից, ավանդ և լրմբարդային ռեպո ՀՀ ԿԲ-ում, ավանդային աճուրդներ, պարտատոմսերի առքուվաճառք ՀՀ ԿԲ-ի կողմից, արտարժույթային սվոփ ՀՀ ԿԲ-ի կողմից, բանկային տոկոսի հաշվարկային դրույք: Այստեղ բերված տեղեկատվության մի մասը թարմ է, մյուս մասը վերաբերում է տարբեր տարիներին:

- Արտարժույթով ԿԲ գործարքներ

ՀՀ ԿԲ արտարժույթային ինտերվենցիաներ ամսական կտրվածքով (բերված տվյալները 2015-2020 թվականների են), ՀՀ ԿԲ հաշվարկային փոխարժեք:

- Առկա է նաև օրենսդրական ենթաբաժին, թեև հարցականի տակ է այդտեղ արտացոլված տեղեկատվության թարմ լինելը:
- Ավանդներ ՀՀ բանկերում՝ ֆիզիկական անձանց և իրավաբանական անձանց համար
  - Բերված են տվյալներ բանկերում ավանդների տոկոսադրույքների, ժամկետների, գումարի համալրման և մասնակի նվազեցման հնարավորությունների առկայության վերաբերյալ:
  - Տեղեկատվությունն առանձնացված է ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով և ՌԴ ռուբլիով ավանդների համար:
  - Նշված է, որ տեղեկատվության վերջին թարմացումը վերաբերում է 2021 թվականի հուլիսի 9-ին:
- Ոսկու գին
  - Ոսկու ձուլակտորների գները Հայաստանում (տեղեկատվությունը թարմ է)
  - Անկանխիկ ոսկու գները Հայաստանում (տեղեկատվությունը թարմ է)
  - ՀՀ ԿԲ թանկարժեք մետաղների փոխարժեքներ (տեղեկատվությունը 2022 թվականի փետրվարի 28-ի դրությամբ է)
  - Թանկարժեք մետաղների միջազգային գները (նշված է, որ էջը դեռ պատրաստ չէ)
  - ՀՀ ֆինանսների նախարարության թանկարժեք մետաղների գները ՀՀ դրամով (տեղեկատվությունը 2021 թվականի հունվարի դրությամբ է)

Թեև հարթակում առկա է արժեթղթերի շուկային վերաբերող ենթաբաժին, բաժնետոմսերով իրականացվող գործարքների վերաբերյալ տեղեկություններ կայքը չի տրամադրում:

### **CB.AM՝ Armenian Dram Exchange Rates by Central Bank of Armenia**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ [cb.am](http://cb.am))

Տվյալ օրվա դրությամբ արտարժույթի փոխարժեքն է ՀՀ դրամով և աճի (անկման) չափը՝ վերցված ՀՀ ԿԲ կայքից: Ի սկզբանե ցուցադրված է տեղե-

կատվություն ԱՄՆ դոլարի, ՄԹ ֆունտ ստեռլինգի, եվրոյի, վրացական լարիի և ՌԴ ռուբլու համար, իսկ «Advanced table» կոճակը սեղմելու արդյունքում ցուցադրվում են համապատասխան տվյալները նաև մյուս արժույթների համար, որոնց մասով կան տվյալներ ՀՀ ԿԲ կայքում: Կայքում, սակայն, չկա հնարավորություն դիտելու համապատասխան փոխարժեքի պատմական պատկերը (եղած տվյալները միայն տվյալ օրվա համար են):

### **ԱՎԱՆԴ.am**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ [avand.am](http://avand.am))

Հարթակը միտված է Հայաստանում և Արցախում գործող բանկերի կողմից առաջարկվող ավանդային պրոդուկտների վերաբերյալ համալիր տեղեկատվություն ներկայացնելուն: Կայքը նախատեսված է ՀՀ դրամի, ԱՄՆ դոլարի, եվրոյի, ՌԴ ռուբլու և շվեյցարական ֆրանկի համար: Տվյալները ցուցադրվում են երկու հիմնական բաժիններում.

➤ «Ավանդների վարկանիշ» բաժին

Ֆիզիկական անձանց համար ՀՀ դրամով ավանդների վերաբերյալ տվյալներ առկա են 2022 թվականի հունիս և հուլիս ամիսների համար, մյուս արժույթների վերաբերյալ տվյալներ չկան:

Անհատ ձեռներեցների և իրավաբանական անձանց մասով տվյալներ չկան:

Այս բաժնի ռուսերեն և անգլերեն տարբերակների դեպքում վերոնշյալ տեղեկատվությունը լիովին բացակայում է:

➤ «Բանկերի վարկանիշ» բաժին (բանկերի վարկանշային աղյուսակ՝ ըստ առաջարկվող ավանդների եկամտաբերության)

Տեղեկատվությունն արտարժութային ավանդների համար բացակայում է, ՀՀ դրամի դեպքում աղյուսակում ներկայացված են 16 առևտրային բանկեր<sup>66</sup>: Նշված բաժնում պատկերը լիովին նույնն է նաև ռուսերեն և անգլերեն տարբերակների դեպքում:

Կայքում ներկայացված ավանդների համար կան նաև առանձին էջեր, որոնցում, «Ավանդների վարկանիշ» բաժնում բերված տեղեկատվությունից բացի, նշված են նաև համապատասխան բանկերը և, առկայության դեպքում, նմանատիպ առաջարկները:

---

<sup>66</sup> «Մելլաթ բանկ» ՓԲԸ-ի մասին տվյալներ բերված չեն:

Առկա է նաև ավանդի օնլայն հաշվիչ, ինչպես նաև հնարավորություն դիմելու ավանդների շուկայում առկա փոփոխությունների վերաբերյալ շաբաթական կամ ամսական տեղեկատվություն ստանալու համար:

## **VARKER.AM**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ varker.am)

Կայքը միտված է նպաստելու ներկայացված տեղեկատվության միջոցով ֆինանսական հաստատությունների վարկային առաջարկները համեմատելուն և բաժանված է հետևյալ խմբերի ու ենթախմբերի.

- Օնլայն վարկ
- Բանկային վարկ
  - Սպառողական վարկ
  - Հիփոթեքային վարկ
  - Ավտովարկ
  - Ավտո գրավատուն,
  - Ուսանողական վարկ
- Գրավատներ՝ տեխնիկայի գրավով վարկեր
- Միկրոֆինանսավորում
  - Սպառողական վարկեր
  - Հիփոթեքային վարկեր
  - Բիզնես վարկեր
  - Վարկեր՝ մինչև 500 000 ՀՀ դրամ
  - Երկարաժամկետ վարկեր
- Փոխարժեք:

Այս բաժինը միտված է տվյալ օրվա դրությամբ (անցյալում եղած պատկերը դիտելու հնարավորությամբ) արտարժույթի փոխարժեքին և հնարավոր փոխարկման արդյունքում ծագող պատկերին, նաև բիթքոինի և էթերեումի՝ ԱՄՆ դոլարով փոխարժեքներին և (որոշակի ժամանակահատվածի համար) գրաֆիկական պատկերին ծանոթանալուն, սակայն արտարժույթային փոխարժեքի և փոխարկիչի հատվածը չի աշխատում:

Նշված է, որ տեղեկատվությունն ուղղակիորեն հավաքվում է «Հայաստանի ֆինանսական հաստատություններից՝ առավել ճշգրիտ համեմատություն ապահովելու համար»: Այնուամենայնիվ, հարթակում բերված տեղեկատվությունը երբեմն տարբերվում է սկզբնաղբյուր (նշված ծառայություն-

ները մատուցող ֆինանսական կազմակերպությունների) կայքերում բերված տվյալներից:

**«Amchange» էլեկտրոնային գումարի փոխանակման համակարգ**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ amchange.am և amchange.ru)

Համակարգն էլեկտրոնային գումարի փոխանակմամբ զբաղվելու համար է: Այստեղ նախատեսված է ArCa, iDram և MobiDram ՀՀ դրամի փոխանակում QIWI, Payeer էլեկտրոնային դրամապանակներով ԱՄՆ դոլարի և ՌԴ ռուբլու հետ, նաև որոշ այլ փոխանակումներ:

Հասկանալի չէ, սակայն, թե համակարգը մինչ օրս գործում է, թե ոչ, և եթե այո, ապա ինչ մակարդակով:

**Fininfo.am**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ fininfo.am)

Կայքը ներկայացնում է «Ձեր ֆինանսական տեղեկատուն» համակարգը՝ իբրև ֆինանսական ծառայությունների համեմատման գործիք: Այն հանդես է գալիս իբրև միասնական հարթակ, որտեղ կարելի է որոնել անհրաժեշտ ֆինանսական ծառայությունը և մեկից ավելի առաջարկների առկայության դեպքում համեմատել համապատասխան պայմանները: Կայքը ստեղծվել, կարգավորվում և վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ներկայացված է տեղեկատվություն այնպիսի ֆինանսական ծառայությունների, պրոդուկտների և գործիքների մասով, ինչպիսիք են՝ ավտովարկը, ոսկու վարկը, ապառիկը, ուսանողական, գյուղատնտեսական և այլ սպառողական վարկերը, ավանդը, հիփոթեքը, վճարային քարտերը, դրամական փոխանցումները, վարկի վերաֆինանսավորումը, ճանապարհորդության ապահովագրությունը և ONLINE վարկը:

Այնուամենայնիվ, երբեմն հարթակում ներկայացված տվյալներն սկզբնաղբյուր կայքերում բերված տվյալների հետ չեն համընկնում: Ինչպես նշված է կայքում, «տեղեկատվությունը մուտքագրվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից», և «ներդրվում են ջանքեր, որպեսզի կայքում հրապարակման պահին տեղեկատվությունը լինի ճշգրիտ և արդիական, սակայն կայքը չի կրում որևէ պատասխանատվություն, եթե որոշակի պահի դրությամբ այն այլևս այդպիսին չի համարվում»:

## **Քիզնես 24**

(հարթակի էլեկտրոնային հասցեն՝ b24.am)

Հարթակը ֆինանսական ոլորտի լուրեր ներկայացնելուց բացի մեկտեղում է ոլորտին առնչվող տեղեկատվությունը՝ հետևյալ ուղղություններով.

- Տարադրամ՝ ԱՄՆ դոլարի, եվրոյի և ՌԴ ռուբլու առք և վաճառք (առկա է հնարավորություն դիտելու փոխարժեքը և՛ 1 ՀՀ դրամի, և՛ արտարժույթի 1 միավորի համար)
- Տեղեկատվություն ՀՀ ԿԲ-ից՝ փոխարժեքներ և մետաղներ
- Ոսկու հարգեր
- Կրիպտոարժույթների փոխարժեքներ (կապված է bybit.com կայքի հետ)
- Ֆորեքս (տեղեկատվությունը 4 արժույթների համար է)
- Նավթ (Brent և Light Sweet տեսակների համար)
- Թանկարժեք մետաղներ
- Մի քանի կազմակերպությունների բաժնետոմսերի գների պատկերը (կապված է tradingview.com/markets/stocks-usa/ կայքի հետ, որտեղ առկա է ամբողջական տեղեկատվություն ԱՄՆ արժեթղթերի շուկայի մասով)
- Գունավոր մետաղներ
- Ինդեքսներ՝ ներառյալ ասիական ինդեքսներ:

Վերոնշյալ բաժիններից մի քանիսի համար առկա է հնարավորություն բացելու առանձին էջ և ուսումնասիրելու պատկերը համապատասխան ցուցանիշի համար տվյալ օրվան նախորդող մի քանի օրվա կտրվածքով՝ գրաֆիկական տեսքով: Կայքում կարելի է ծանոթանալ նաև ՀՀ ԿԲ տոկոսադրույքներին և որոշ մակրոտնտեսական ցուցանիշների:

**Որոշակի տվյալներ ֆինանսական տեղեկատու կայքերի մասով:** Համաձայն Similarweb կայքի՝ RATE.am-ի կայքը համարվում է «ֆինանսական պլանավորում և կառավարում» (Financial Planning and Management) կատեգորիայի ներքո դասակարգվող կայքերից առաջատարը Հայաստանում (2022 թվականի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին): Երկրորդ և երրորդ դիրքերում են inecobank.am-ը և arca.am-ը (հաջորդող կայքերն են՝ ameriabank.am, aswa.am, acbadigital.am, idram.am, ardshinbank.am, aeb.am): Աղյուսակներ 6-7-ում և 9-10-ում բերված են (առկա տվյալները հաշվի առնե-



լով) կայքերի դիտումներին վերաբերող առանցքային ցուցանիշները: Աղյուսակ 8-ում ցույց է տրված կայքերի դիրքը հիմնական ցուցանիշների համար:

**Աղյուսակ 6. Ֆինանսական տեղեկատվության կայքերի դիրքումը վերաբերող հիմնական ցուցանիշները (2022 թվականի սեպտեմբեր՝ «այցելությունների քանակ»-ից բացի)**

Ֆինանսական տեղեկատվության կայք	Այցելությունների քանակ* (2022 թվականի նշված ամսին)			1 այցի միջին տևողություն (ժամ, րոպե, վայրկյան)	Թռուցիկ դիտման %-ային մաս**	1 այցին դիտված էջերի միջին քանակ
	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր			
RATE.am	2.5 մլն	1.63 մլն	1.61 մլն	00:04:41	57.50	2.35
MoneyMarket.am	<5000	<5000	<5000	00:00:29	63.31	1.84
CB.AM	<5000	<5000	<5000	-	100	1.00
ԱՎԱՆԴ.am	39345	15575	5020	00:02:54	49.06	5.38
VARKER.AM	33149	7439	<5000	-	97.41	1.00
Fininfo	4500	23064	15334	00:03:01	22.77	7.15
Բիզնես 24	119928	135051	160683	00:01:32	62.89	2.67

\* Համակարգչով (desktop) և բջջային սարքերով (mobile) համախառն այցելությունների թվաքանակը:

\*\* Միջին %-ային մասնաբաժինը (bounce rate) այն այցելուների, որոնք մինչև կայքը լքելը դիտում են միայն մեկ էջ:

CB.AM-ի դեպքում թռուցիկ դիտման %-ային մասի՝ 100%-ի հավասար լինելը և 1 այցի ընթացքում դիտված էջերի միջին քանակի՝ 1-ի հավասար լինելը բնական են, քանի որ նշված կայքը բաղկացած է միայն 1 էջից. «Advanced table» կոճակը սեղմելը կայքում պարզապես լրացուցիչ ինֆորմացիա է ավելացնում: Հաջորդիվ բերված Աղյուսակ 7-ից երևում է նաև, որ 2022 թվականի սեպտեմբերին CB.AM-ի կայքը եղել է միակը, որ ունեցել է դիտումներ միայն համակարգչով և դարձել այցելությունների՝ ըստ սարքավորումների բաշխման ցուցանիշի՝ համակարգչով դեպքի բացարձակ առաջատարը:

**Աղյուսակ 7. Ֆինանսական տեղեկատու կայքեր այցելությունների մասով  
լրացուցիչ տվյալներ (2022 թվականի սեպտեմբեր ամսվա համար)**

Ֆինանսական տեղեկատու կայք	Այցելությունների բաշխումն ըստ սարքավորումների		Եզակի (չկրկնվող) այցելուների միջին թիվ*
	Համակարգչով (desktop)	Բջջային սարքերով (mobile web)	
RATE.am	26.93%	73.07%	306940
MoneyMarket.am	31.65%	68.35%	<5000
CB.AM	100%	-	<5000
ԱՎԱՆԴ.am	33.89%	66.11%	<5000
VARKER.AM	81.24%	18.76%	<5000
Fininfo	32.43%	67.57%	6456
Բիզնես 24	12.87%	87.13%	77950

\* Առանց նույն անձի կողմից տարբեր սարքերով այցելությունների տարանջատման:

Այցելությունների %-ային բաշխման՝ համակարգչի խմբի երկրորդ և երրորդ ամենամեծ արժեքները բաժին են ընկել համապատասխանաբար VARKER.AM-ի (81.24%) և ԱՎԱՆԴ.am-ի (33.89%) կայքերին: Բջջային սարքերի խմբի մասով եղյակը 2022 թվականի սեպտեմբերի համար ձևավորել են «Բիզնես 24»-ը (87.13%), RATE.am-ը (73.07%) և MoneyMarket.am-ը (68.35%), եզակի (չկրկնվող) այցելուների միջին թվի դեպքում՝ RATE.am-ը (306940), Բիզնես 24-ը (77950) և Fininfo-ն (6456):

**Աղյուսակ 8. Հիմնական ցուցանիշների գծով ֆինանսական տեղեկատու կայքերի զբաղեցրած դիրքերը (այն կայքերի մասով, որոնց համար այդ տվյալներն առկա են)**

Ֆինանսական տեղեկատու կայք	Կայքի դիրքը համապատասխան ցուցանիշի մասով					
	Այցելությունների քանակ (2022 թվականի նշված ամսին)			1 այցի միջին տևողություն (ժամ, րոպե, վայրկյան)	Թռուցիկ դիտման %-ային մաս*	1 այցին դիտված էջերի միջին քանակ
	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր			
RATE.am	1	1	1	1	5	4
MoneyMarket.am	5-7	6-7	5-7	5	3	5
CB.AM	5-7	6-7	5-7	-	1	6-7
ԱՎԱՆԴ.am	3	4	4	3	6	2

VARKER.AM	4	5	5-7	-	2	6-7
Fininfo	5-7	3	3	2	7	1
Բիզնես 24	2	2	2	4	4	3

\*Թողուցիկ դիտման %-ային մասնաբաժնի դեպքում բարձր դիրքն ունի բացասական իմաստ:

**Աղյուսակ 9. Ֆինանսական տեղեկատու կայքեր համակարգչով (desktop) մուտք գործելու եղանակների %-ային մասնաբաժինները 2022 թվականի սեպտեմբերին (այն կայքերի մասով, որոնց համար այդ տվյալներն առկա են)**

Ֆինանսական տեղեկատու կայք	Մուտքի եղանակը և %-ային մասնաբաժինը				
	Կայքի հասցե մուտք գործելով	Այլ կայքերից (հղումներ)	Որոնում	Սոցցանցեր	Էլփոստ
RATE.am	78.49	0.09	20.41	0.47	0.54
MoneyMarket.am	39.86	-	47.71	12.43	-
CB.AM	100	-	-	-	-
ԱՎԱՆԴ.am	61.30	-	38.70	-	-
VARKER.AM	100	-	-	-	-
Fininfo	39.59	17.94	42.47	-	-
Բիզնես 24	26.42	-	64.07	9.51	-


Համակարգչով կայքեր մուտք գործելու %-ային մասնաբաժիններին վերաբերող տվյալները ցույց են տալիս, որ CB.AM-ի և VARKER.AM-ի դեպքում դիտումներն իրականացվել են բացառապես կայքի հասցե ուղղակի մուտքի միջոցով: Որոնման դեպքում առաջատարը «Բիզնես 24» հարթակն է (64.07%), իսկ սոցիալական ցանցերի ազդեցությամբ կատարված մուտքերի համար՝ MoneyMarket.am հարթակը (12.43%): Այլ կայքերից հղումների միջոցով դիտումներ կատարվել են միայն Fininfo-ի (17.94%) և RATE.am-ի (0.09%) համար: RATE.am-ը միակն է, որի դեպքում կիրառվել են մուտքի ներկայացված բոլոր 5 եղանակները՝ ներառյալ էլեկտրոնային փոստը (0.54%):

**Աղյուսակ 10. Ֆինանսական տեղեկագրու կայքեր բջջային սարքերով (mobile web) մուտք գործելու եղանակների %-ային մասնաբաժինները 2022 թվականի սեպտեմբերին (այն կայքերի մասով, որոնց համար այդ տվյալներն առկա են)**

Ֆինանսական տեղեկատու կայք	Մուտքի եղանակը և %-ային մասնաբաժինը					
	Կայքի հասցե մուտք գործելով	Այլ կայքերից (հղումներ)	Որոնում	Սոցցանցեր	Էլփոստ	Գովազդ
RATE.am	62.48	0.74	36.46	0.32	-	-
MoneyMarket.am	27.73	2.14	53.14	16.98	-	0.01
ԱՎԱՆԴ.am	53.99	0.30	45.70	-	0.01	-
VARKER.AM	73.60	1.14	25.26	-	-	-
Fininfo	48.80	6.60	42.18	2.42	0.01	-
Բիզնես 24	27.32	2.26	52.38	18.03	-	0.01


Բջջային սարքերով կայքերի դիտումներ իրականացնելու մեթոդներից կայքի հասցե ուղղակի մուտքին բաժին ընկնող %-ային մասնաբաժնով առաջատարն է VARKER.AM-ը (73.60%), իսկ այլ կայքերից (հղումներով) այցելելու գծով՝ Fininfo-ն (6.60%): Որոնման և սոցիալական ցանցերով կատարված մուտքերի դեպքում ամենից մեծ մասնաբաժինները ձևավորվել են MoneyMarket.am-ի (53.14%) և Բիզնես 24-ի (18.03%) դեպքում, համապատասխանաբար: ԱՎԱՆԴ.am-ը և Fininfo-ն միակ կայքերն են, որոնց դեպքում մուտք է կատարվել անուղղակի եղանակներից էլեկտրոնային փոստի միջոցով: Բիզնես 24-ի և MoneyMarket.am-ի դեպքում պատկերը նույնն է գովազդի ազդեցությամբ կատարված դիտումների մասով:

Առկա են նաև որոշակի տվյալներ կայքերը դիտողների սեռատարիքային կազմի վերաբերյալ: RATE.am-ի այցելուների 52.64%-ը եղել է իգական, 47.36%-ը՝ արական սեռի: Fininfo-ի, ԱՎԱՆԴ.am-ի, Բիզնես 24-ի համար իգական սեռ-արական սեռ բաշխման պատկերը հետևյալն է՝ համապատասխանաբար՝ 54.06% և 45.94%, 53.42% և 46.58%, 54.34% և 45.66%: Այդպիսով, դիտումների կեսից ավելին այդ 4 կայքերի դեպքում բաժին է ընկել իգական սեռին: Նշված կայքերի այցելուների տարիքային կազմի պատկերները (համակարգչով այցելությունների համար) բերված են ստորև:




**Գծապատկեր 22. RATE.am-ի այցելուների տարիքային կազմը (2022 թվականի սեպտեմբեր)**

RATE.am-ի կայքից ամենաշատն օգտվել են 25-34 տարեկան անձինք (34.86%): Երկրորդ տեղում 18-24 տարիքային խումբն է (22.35%):



**Գծապատկեր 23. ԱՎԱՆԴ.am-ի այցելուների տարիքային կազմը (2022 թվականի սեպտեմբեր)**


ԱՎԱՆԴ.am-ի կայքից օգտվողների առաջատարները դարձյալ 25-34 տարեկան անձինք են եղել (33.82%), երկրորդ տեղում՝ 18-24 տարիքային խումբը (24.16%):



**Գծապատկեր 24. Fininfo-ի այցելուների տարիքային կազմը (2022 թվականի սեպտեմբեր)**

Ամենաշատը Fininfo-ի կայքից օգտվել են 25-34 տարեկան անձինք (34.75%): Երկրորդ տեղում դարձյալ 18-24 տարեկաններն են (24.09%):

Վերը բերված երեք դեպքերում ամենից քիչ օգտվել են 65 տարեկան և բարձր տարիքի անձինք՝ 5.15%, 5.33% և 5.23% համապատասխանաբար: Ստորև բերված դեպքում («Բիզնես 24») ամենաշատը դարձյալ օգտվել են 25-34 տարեկան անձինք՝ 33.22%, հաջորդիվ 18-24 տարեկաններն են՝ 24.93%-ով: Այս դեպքում ևս 65 տարեկան և բարձր տարիքի անձինք կազմել են օգտվողների ամենափոքր մասը՝ 5.43%:



**Գծապատկեր 25. Բիզնես 24-ի այցելուների տարիքային կազմը (2022 թվականի սեպտեմբեր)**

Հաջորդիվ ներկայացված են RATE.am-ի կայքի այցելուների կողմից վերջինիս կայքից անմիջապես հետո այցելված կայքերը և դրանց այցելությունների տոկոսային մասնաբաժինները միայն համակարգչով (Աղյուսակ

11) և միայն բջջային սարքերով (Աղյուսակ 12) այցելությունների մասով: Բոլոր դեպքերում ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի կայքն է եղել առաջատարը՝ 41.38% և 21.74% մասնաբաժիններով: Համակարգչով այցելությունների մասով դեպքերի ավելի քան 50%-ը բաժին է ընկել ԱԿԲԱ ԲԱՆԿ-ին և ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ին, իսկ բջջային սարքերով այցելությունների դեպքում՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ-ին և ԱՐԱՐԱՏ-ԲԱՆԿ-ին: Բոլոր դեպքերում ԷՎՈԿԱԲԱՆԿ-ն զբաղեցրել է երրորդ տեղը:

**Աղյուսակ 11. RATE.am-ի կայքի այցելությունների կողմից անմիջապես այցելված կայքերը 2022 թվականի սեպտեմբերին. այցելություններ համակարգչով (desktop)**

Դիրք	Սկզբնական կայքից անմիջապես այցելված կայք	Դիտարկվող կայքին բաժին ընկնող այցելությունների %-ային մասնաբաժինը	Առկայությունը նախորդ ամսվա ցուցակում
1	acba.am	41.38	առկա է
2	ameriabank.am	22.90	ներ է
3	evoca.am	7.93	առկա է
4	hsbc.am	7.22	ներ է
5	araratbank.am	4.92	ներ է
6	idbank.am	3.45	առկա է
7	conversebank.am	3.36	ներ է
8	inecobank.am	3.16	ներ է
9	armswissbank.am	2.22	առկա է
10	rambler.ru	1.75	ներ է
11	play.google.com	1.71	ներ է

**Աղյուսակ 12. RATE.am-ի կայքի այցելությունների կողմից անմիջապես այցելված կայքերը 2022 թվականի սեպտեմբերին. այցելություններ բջջային սարքերով (mobile web)**

Դիրք	Սկզբնական կայքից անմիջապես այցելված կայք	Դիտարկվող կայքին բաժին ընկնող այցելությունների %-ային մասնաբաժինը	Առկայությունը նախորդ ամսվա ցուցակում
1	acba.am	21.74	առկա է
2	araratbank.am	15.52	ներ է
3	evoca.am	15.24	առկա է
4	ameriabank.am	9.85	ներ է
5	inecobank.am	9.55	ներ է

6	hsbc.am	8.47	նոր է
7	conversebank.am	6.60	նոր է
8	rambler.ru	5.39	նոր է
9	idbank.am	3.95	առկա է
10	play.google.com	3.70	նոր է

**Օնլայն բանկինգի և մոբայլ բանկինգի հնարավորությունները:** ՀՀ-ում գործող 17 առևտրային բանկերից 16-ը<sup>67</sup> հաճախորդներին տրամադրում են կարողություն առանց բանկեր այցելելու (բացառությամբ որոշ դեպքերի, երբ առկա է անձի նույնականացման պահանջ ֆիզիկական ներկայության պայմանով), օնլայն բանկինգի համակարգերի և մոբայլ բանկինգի հավելվածների միջոցով օգտվելու մի շարք պրոդուկտներից և իրականացնելու տարաբնույթ գործառնություններ: Այժմ առկա հնարավորությունները, որոնք ընդհանուր են, տարածված և ներկայացված գրեթե բոլորի մոտ, հետևյալ ծառայություններն են.

- Փոխանցումներ, վճարումներ և հարակից գործառնություններ
  - Կատարել փոխանցումներ հաճախորդի՝ բանկում առկա հաշիվների միջև և նույն բանկի այլ հաճախորդների հաշիվներին, միջբանկային փոխանցումներ ՀՀ-ում, նաև միջազգային փոխանցումներ ՀՀ-ից դուրս գործող բանկերի հաշվետերերին
  - Իրականացնել արտարժույթի անկանխիկ փոխարկումներ (մի շարք դեպքերում՝ արտոնյալ սակագներով)
  - Կատարել քարտից քարտ փոխանցումներ
  - Իրականացնել բանկային քարտերի բլոկավորում և ապաբլոկավորում, կից, լրացուցիչ քարտերի ձեռքբերում, վերաթողարկում, փոխարինում և փակում
  - Թվայնացնել վճարային քարտերը
  - Ներկայացնել վճարման (դրամով և արտարժույթով) և պարբերական վճարումների ու փոխանցումների ավտոմատ իրականացման հանձնարարականներ
  - Ներկայացնել հայտեր բանկային հաշվի բացման և տարբեր բանկային պրոդուկտների ձեռքբերման նպատակով

<sup>67</sup> «Մեյլաթ բանկ» ՓԲԸ-ի կայքում համապատասխան տեղեկատվություն բերված է:



- Ներկայացնել կանխիկացման հայտ, փոխել կանխիկի տրամադրման սահմանաչափերը
  - Դիմել SMS ծառայության ակտիվացման նպատակով, կարգավորել քարտային գործարքների վերաբերյալ SMS ծանուցումները
  - Բացել նոր ժամկետային ավանդներ (հեռակառավարման համակարգերի միջոցով ներդնելու դեպքում հաճախ տրվում է ավելի բարձր տոկոս ստանալու հնարավորություն), երկարաձգել, նվազեցնել, համալրման հնարավորության դեպքում՝ համալրել, փոփոխել տոկոսի ստացման հաշիվը, խզել ավանդները
  - Կատարել վարկերի հերթական, մասնակի կամ ամբողջական մարումներ՝ բանկում սպասարկվող այլ հաճախորդի վարկի մարումը և այլ բանկերի հանդեպ ունեցած վարկային պարտավորությունները մարելը ներառյալ
  - Կատարել կոմունալ ծառայությունների դիմաց մեկանգամյա և բազմակի վճարումներ առանձին և կամ խմբային եղանակով
  - Կատարել ճանապարհային ոստիկանության տուգանքների վճարումներ և վճարումներ պետական բյուջե
  - Կատարել վճարումներ բջջային ծառայությունների և հնտերնետի համար, գույքահարկի մասով կամ ավտոկայանատեղիի համար
- Տեղեկատվական և այլ բնույթի ծառայություններ
- Դիտել հաճախորդի քարտային, ընթացիկ, խնայողական և ավանդային հաշիվների մնացորդները և դրանցով իրականացված գործարքները, ծախսերի վիճակագրությունը
  - Ստանալ և դիտել հաշիվների, վճարային քարտերի, վարկերի, ավանդների քաղվածքները
  - Պատվիրել և ստանալ քաղվածքներ հաշվից, տեղեկանքներ և այլ տեղեկատվություն հաշիվներով գործարքների վերաբերյալ
  - Իրական ժամանակում հետևել քարտային գործառնություններին և մնացորդներին
  - Տեղեկանալ արտարժութային և ոսկու փոխարժեքների մասին
  - Դիտել վարկերի կարգավիճակը, վարկերի մնացորդները, հաշվեգրված տոկոսները, կատարված վճարումները և մարման ժամանակացույցը, վարկային պարտավորությունները

- Դիտել ժամկետային ավանդների գումարների մնացորդներն ու կուտակված տոկոսները, կատարված գործառնությունները
- Գտնել բանկերի մոտակա մասնաճյուղերն ու բանկոմատները (գտնվելու վայրերը)
- Դիտել վճարման հանձնարարականի ձևանմուշները, ստեղծել նոր ձևանմուշներ՝ դրանց հիմամբ վճարումներ կատարելու նպատակով
- Կապ հաստատել բանկի հետ
- Ուղարկել և ստանալ ազատ ձևաչափի նամակներ՝ ֆայլերի (MS Word, Excel և այլն) կցման հնարավորությամբ, ներմուծել տվյալներ xml ձևաչափով ֆայլից
- Ուղարկել բանկին նամակներ, դիմումներ, հայտեր, առաջարկներ, դիմել տեղեկանքների ստացման համար, ստանալ ծանուցումներ, պատասխաններ, հաղորդագրություններ
- Խմբագրել անձնական տվյալները

Վերոգրյալ հնարավորություններից բացի, առաջարկվում են նաև մի շարք ծառայություններ, որոնց մասին հիշատակում կարելի է հանդիպել միայն որոշ բանկերի կայքերում և կամ հավելվածների ներբեռնման համապատասխան կայքերում: Դրանք են (ամեն թվարկման համար բերված է այն բանկերի ցանկը, որոնց մասով նշված ծառայության մատուցման վերաբերյալ տեղեկատվությունն առկա է).

- Կենսաթոշակային հաշվի դիտում
  - ԱԿԲԱ ԲԱՆԿ
  - ԱՄԵՐԻԱԲԱՆԿ
  - Արդշինբանկ
  - Արցախբանկ
  - ԻՆԵԿՈՐԲԱՆԿ
  - ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ
  - ՅՈՒՆԻԲԱՆԿ
- Կցել ArCa համակարգի անդամ այլ բանկերի կողմից թողարկված քարտեր և իրականացնել գործարքներ կցված քարտերով
  - ԱԿԲԱ ԲԱՆԿ
  - ԱյԴի Բանկ

- ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
- Արդշինբանկ
- ԻՆԵԿՈԲԱՆԿ
- ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ
- Կատարել նվիրաբերություն «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամին
  - Արդշինբանկ
  - Արցախբանկ
- Ստանալ արագ դրամական փոխանցման համակարգերով ուղարկված գումարները
  - Արդշինբանկ
  - ԱՐԱՐԱՏԲԱՆԿ
  - ԻՆԵԿՈԲԱՆԿ
  - ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ (քարտային կամ ընթացիկ հաշվին «MyTransfer» ծառայության միջոցով)
  - ՅՈՒՆԻՍԲԱՆԿ (Unistream ուղարկում և ստացում)
  - ՎՏԲ-Հայաստան Բանկ
- Իրականացնել գործառնություններ արժեթղթերով
  - ԷՎՈԿԱԲԱՆԿ

EvocaTOUCH հավելվածի միջոցով հնարավոր է online տարբերակով գնել ԷՎՈԿԱԲԱՆԿ-ի պարտատոմսերը (ինչպես իրենք են նշում, առաջին անգամ հայաստանյան ֆինանսական համակարգում):

- ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ

Կատարել պարտատոմսերին վերաբերող գործարքներ: Ինտերնետ-Բանկ համակարգն ընձեռում է հնարավորություն հայտ ներկայացնելու և փաստաթղթեր ստորագրելու արժեթղթերով գործառնությունների մասով (օրինակ՝ մասնակցություն աճուրդներին, ռեպո և հակադարձ ռեպո գործառնություններ, արժեթղթերի գրավադրմամբ վարկերի ստացում):

- Կոնվերս Բանկ

Իրականացնել պարտատոմսերի գնում

- ԱԿԲԱ ԲԱՆԿ

Ձեռք բերել բանկի բաժնետոմսերը, գնել և վաճառել ՀՀ-ում ցուցակված արժեթղթեր

- ՎՏԲ-Բանկ Հայաստան

Առևտրային համակարգի և բջջային հավելվածի միջոցով հնարավոր են ՌԴ-ի և արտերկրի արժեթղթերի շուկաների ֆինանսական գործիքների ուսումնասիրումը, գործարքներ կնքելը, նաև յուրաքանչյուր գործարքի ֆինանսական արդյունքներին և ամբողջ պորտֆելին հետևելը:

- Արդշինբանկ

Ներկայացնել արժեթղթերի օտարման կամ ձեռքբերման պատվեր

➤ Պատվիրել Visa Digital թվային քարտ (առաջարկվող արժույթներից յուրաքանչյուրով հնարավոր է ձեռք բերել 1 քարտ)

- ԱԿԲԱ (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո)
- ԱՄԵՐԻԱԲԱՆԿ
- ԱյԴի Բանկ (ՀՀ դրամ, եվրո, ԱՄՆ դոլար, ՌԴ ռուբլի)
- Արդշինբանկ (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո)
- ԻՆԵԿՈԲԱՆԿ (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի)
- ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ AEB Mobile հավելվածի միջոցով (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի)
- Արցախբանկի դեպքում՝ պատվիրել և ստանալ Mastercard Virtual քարտն Artsakhbank Mobile հավելվածի միջոցով (ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո, ՌԴ ռուբլի)

Բացի նշված ծառայությունները մատուցելուց, որոշ բանկեր աչքի են ընկնում նաև հատուկ օնլայն պրոդուկտներով և որոշ սեփական նախաձեռնություններով:

➤ ԱԿԲԱ ԲԱՆԿ

Բանկի բջջային հավելվածը թույլ է տալիս դիտել տեղեկատվություն «Ակբա Լիզինգ» ՓԲԸ-ի կողմից տրված լիզինգի մասով և վճարել պարտավորությունները: Հավելվածի միջոցով հնարավոր է նաև՝

- դիմել և ստանալ «5G» վարկեր (24/7 ռեժիմով սպառողական վարկեր են),
- 24/7 ռեժիմով ձևակերպել ավանդի գրավով վարկային գիծ և արագ օվերդրաֆտ, նաև ավանդի գրավով վարկ,
- կատարել առանց քարտի կանխիկացումներ բանկի բոլոր բանկոմատներից. կանխիկացման կողը կարելի է փոխանցել նաև այլ անձանց,

- ստանալ հղումով փոխանցումներ՝ գեներացնել հղում և ուղարկել այն Facebook-ով, Viber-ով և այլ ուղիներով այն անձին (անձանց), ումից հաճախորդը ցանկանում է ստանալ գումար,
- կատարել կոնտակտով (հեռախոսահամարով, էլեկտրոնային հասցեով) ակնթարթային փոխանցումներ բանկի այլ հաճախորդներին,
- կատարել QR կոդով փոխանցումներ ACBA Digital-ի այլ օգտատերերին,
- ուղարկել գումարի հարցում ցանկացած անձի կամ կատարված ծախսը բաժանել մի քանի անձանց միջև,
- կնքել ԱՊՊԱ պայմանագրեր՝ նաև այլ անձի մեքենայի համար (որպես ապահովագրական ընկերություններ հանդես են գալիս Ինգո Արմենիան, Ռոսգոստրախ Արմենիան և Նաիրի Ինշուրանսը),
- տեղեկանալ ՀԿԱԾ արգելանքների առաջացման, թարմացման կամ դուրս գրման մասին:

Բանկի հեռահար սպասարկման հնարավորություններից է նաև առանց գրավի և երաշխավորի ներգրավման որոշակի վարկատեսակների գծով պայմանագրերի ստորագրման էլեկտրոնային համակարգը:

#### ➤ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ

Կարելի է դիտել բրոքերային հաշիվներին առկա մնացորդը, հայկական պարտատոմսերի պորտֆոլիոները և շահութաբերությունը: Ինտերնետ և մոբայլ բանկինգի համակարգերը թույլ են տալիս նաև բրոքերային հաշիվները համալրելու նպատակով գումար փոխանցել ընթացիկ բանկային հաշվից բրոքերային հաշվեհամարին:

#### ➤ Այդի Բանկ

Կարելի է առանձնացնել հետևյալ պրոդուկտները.

- «Ապահով» ավանդ (ավելացման իրավունքով և առանց). եթե ավանդը ներդրվում է առցանց եղանակով՝ «Idram & IDBank» հավելվածով կամ idbanking.am հարթակով, ապա տոկոսադրույքն ավելի բարձր է:
- Rocket Line թվային ապառիկ (մի շարք առևտրային կետերից գնումներ կատարելու դեպքում՝ Rocket Line 0%)՝ նախահաստատ-

ված սահմանաչափ է, պարտավորությունը գումարի միայն օգտագործված մասի չափով է («buy now, pay later» ձևաչափ): Տրամադրվում է «Idram & IDBank» հավելվածի Պրեմիում Պլյուս օգտատեր հանդիսացող այն անձանց, որոնք սինքրոնացրել են «Idram» և բանկի հաշիվները:

- Rocket օնլայն վարկ՝ պետք է դիմել «Idram & IDBank» հավելվածով կամ idbanking.am հարթակով. վարկի ստացումն անմիջապես հավելվածում՝ մինչև 5 րոպեի ընթացքում:

Լրացուցիչ հնարավորություններից են քեշբեք ստանալը, Idram դրամապանակը և բանկում առկա հաշիվները սինքրոնացնելը, անվճար առցանց խնայողական հաշիվ բացելը, առցանց տարբերակով անվճար ակնթարթային փոխանցումներ կատարելը բանկի այլ հաշիվների, նաև առցանց բանկային փոխանցումների միջոցով հաշվի ելքագրումը (կանխիկի ելքագրում), QR և NFC վճարումներ կատարելը:

Առկա է նաև «IDpay» հավելվածը, որը թույլ է տալիս կատարել փոխանցումներ ՌԴ-ից ՀՀ ընդամենը 0.5% միջնորդավճարով:

➤ ԱՐԱՐԱՏԲԱՆԿ

Օնլայն բանկինգի համակարգով հնարավոր է ստանալ վարկ, իրականացնել Visa Direct միջազգային և Flight փոխանցումներ, փոխանցումներ բրոքերային հաշիվներին կամ հաշիվներից, կնքել ԱՊՊԱ պայմանագիր և կատարել ԱՊՊԱ վճարումներ, դիմել ՊԵԿ ներկայացվող տեղեկանքի տրամադրման հայտի ստացման նպատակով (հիփոթեքային վարկերի շրջանակում եկամտահարկի վերադարձի համար): Առկա է նաև էլեկտրոնային ստորագրության հնարավորություն:

Հատուկ ներդրումային հարթակը («ARARATBANK TRADING PLATFORM») թույլ է տալիս կատարել առևտուր շուրջ 5000 ակտիվներով՝ արտարժույթ, բաժնետոմսեր, ապրանքահումքային ակտիվներ և այլն: Հարթակը հասանելի է համակարգչային ծրագրի, ինտերնետային կայքերի (investing.araratbank.am և trader.araratbank.am) և մոբայլ հավելվածի («AraratBank Trading Platform») ձևով:

➤ Արդշինբանկ

Հաճախորդները կարող են ձևակերպել ԱՊՊԱ մի քանի րոպեում, դիմել և ստանալ վարկ հաշված րոպեների ընթացքում:

➤ **Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան**

Կորպորատիվ հաճախորդների համար ներդրված է էլեկտրոնային փոստի միջոցով հեռահար սպասարկման մեկ այլ եղանակ՝ մի շարք պրոդուկտների ու ծառայությունների համար էլեկտրոնային ստորագրության «Live Sign» համակարգը: Հասանելի է նաև «HSBC Evolve» միջազգային օնլայն հարթակը (էլեկտրոնային հասցե՝ [gbm.hsbc.com/evolve/overview](http://gbm.hsbc.com/evolve/overview)), որով հնարավոր է իրականացնել արտարժույթային գործառնություններ ավելի քան 1500 արժույթային զույգերով:

➤ **ԷՎՈԿԱՐԱՆԿ**

Առաջարկում է Evoca Online ավանդատեսակը, որն ընդունվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ բացառապես EvocaTOUCH հավելվածի և EvocaONLINE համակարգի միջոցով: 366 օր և ավել ժամկետով ձևակերպելու դեպքում առաջարկվում է բանկի մի շարք այլ ավանդատեսակների համար գործող տոկոսադրույքից 0.25%-ային կետի չափով բարձր տոկոսադրույք (բացառությամբ ՌԴ ռուբլով ավանդ ներդնելու դեպքի):

Հավելվածի միջոցով կարելի է կատարել փոխանցումներ ԷՎՈԿԱՐԱՆԿի և մի շարք այլ (հայաստանյան) բանկերի քարտապաններին՝ իբրև հասցեատիրոջ տվյալ նշելով քարտատիրոջ հեռախոսահամարը («Փոխանցումներ հեռախոսահամարով» ծառայություն):

➤ **ԻՆԵԿՈՐԱՆԿ**

Հավելվածով կարելի է դիմել և 15 վայրկյանում ստանալ «1CLICK» օնլայն վարկ, ստանալ «paylater» վճարային սահմանաչափ 24/7 ռեժիմով («buy now, pay later» ձևաչափ), կատարել QR վճարումներ («InecoPay»), բանկի հաճախորդ ընկերոջը «ԻնեկոԸնկեր» ծառայությամբ գումար փոխանցել: Սոցիալական ապահովության և սոցիալաթեթի հաշիվներ բացելու դեպքում տրվում է նաև անվճար հասանելիություն «InecoOnline» և «InecoMobile» համակարգերին և դրանցով հաշիվները կառավարելու հնարավորություն:

➤ **Կոնվերս Բանկ**

Առկա է ավանդներն օնլայն բացելու («Պրոգրես», «Կարաս» ժամկետային և ակցիաների շրջանակներում այլ տեսակների ավանդները, սակայն առանց երրորդ անձի օգտին ներդրման թույլտվության) հնարավորություն: Կարելի է նաև պատվիրել Visa վիրտուալ քարտ-հաշիվ (Visa Virtual Account):

➤ **ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ**

հնտերնետ և մոբայլ բանկինգի համակարգերով կարելի է դիմել նոր վարկի համար և ստանալ օնլայն վարկ, իրականացնել «հեշտ» փոխանցում (նշելով ստացողի հեռախոսահամարը կամ էլեկտրոնային փոստի հասցեն) և բանկի մասնաճյուղերի միջև անհաշիվ փոխանցումներ («ՀԷԲ փոխանցում» ծառայություն):

➤ ՎՏԲ-Բանկ Հայաստան

Գործարկել է չատ-բոտ «Facebook Messenger»-ի միջոցով բանկային գործարքների իրականացման համար: Ծառայությունը, որը կոչվում է «Չատ-բանկ DIRECT», թույլ է տալիս դառնալ բանկի հաճախորդ՝ բացելով բանկային քարտ, ստանալ վարկ կամ արագ դրամական փոխանցում քարտին, ներդնել ավանդ, ծանոթանալ հաճախորդի գործող պրոդուկտներին վերաբերող տեղեկատվությանը:

Ստորև (Աղյուսակ 13) ներկայացված են անկանխիկ և անհայում վճարումներ կատարելու և ընդունելու նպատակով մի շարք բանկերի կողմից ներդրված FinTech լուծումներ:

**Աղյուսակ 13. Անկանխիկ և անհայում վճարումներ կատարելու և ընդունելու նպատակով առևտրային բանկերի ներդրած FinTech լուծումներ**

Առևտրային բանկ	Apple Pay (կցված քարտի վճարային համակարգը)	Google Pay (կցված քարտի վճարային համակարգը)	Անհայում վճարումներ կատարելու այլ գործիքներ	Անկանխիկ և անհայում վճարումներ ընդունելու գործիքներ
ԱԿԲԱ ԲԱՆԿ	Visa և Mastercard	Visa և Mastercard	NFC վճարումներ, Garmin Pay (վճարումներ ժամացույցներով)	ACBA SoftPos հավելված*
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	Visa և Mastercard	Visa և Mastercard	PayX QR վճարումներ	Ameria PhonePOS հավելված*, V-POS տերմինալ**, PayX QR
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	Visa և Mastercard		PayX QR վճարումներ	
Արդշինբանկ	Visa և Mastercard	Visa և Mastercard	«Visa Token Service» ծառայություն (էլեկտրոնային դրամապանակով),	V-POS տերմինալ**, PayX QR



			Visa Payment Ring վճարային մատանի, ArdshinPay, PayX QR (բանկի հավելվածով)	
ԷՎՈԿԱՐԱՆԿ	Visa	Visa	PayX QR վճարումներ (բանկի հավելվածով)	Evoca mPOS հավելված*, V-POS տերմինալ**, PayX QR
ԻՆԵԿՈՐԱՆԿ	Visa և Mastercard		NFC վճարումներ, InecoPay, Garmin Pay (վճարումներ ժամացույցներով)	V-POS տերմինալ**
Կոնվերս Բանկ	Visa	Visa և Mastercard		E-COMMERCE ծառայություն**
ՀԱՅԲԻՉՆԵՍ-ԲԱՆԿ			PayX QR վճարումներ (բանկի հավելվածով)	
ՀԱՅԷԿՈՆՈՄ-ԲԱՆԿ	Visa	Visa և Mastercard		V-POS տերմինալ**
ՅՈՒՆԻԲԱՆԿ	Visa		NFC վճարումներ՝ Uni Wallet էլեկտրոնային դրամապանակում քարտեր կցելով, PayX QR (բանկի հավելվածով)	PayX QR
ՎՏԲ-Հայաստան Բանկ			PayX QR վճարումներ	

\* Հավելվածը դարձնում է Android համակարգով և NFC ընթերցող սմարթֆոնը POS տերմինալ:

\*\* Նախատեսված են կայքերից գնումների ժամանակ առցանց վճարումների ընդունման համար:

### Առևտրային բանկերի օժանդակ կայքեր

ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ն ունի մի քանի օժանդակ կայք.

- [automarket.ameriabank.am](http://automarket.ameriabank.am)՝ օնլայն ավտովարկավորման հարթակ,
- [estate.ameriabank.am](http://estate.ameriabank.am)՝ բնակարանների ձեռքբերման նպատակով օնլայն վարկավորման հարթակ,

- [payments.ameriabank.am/AccountTransfer/](http://payments.ameriabank.am/AccountTransfer/)՝ թույլ է տալիս օնլայն եղանակով քարտից քարտ գումար փոխանցել,
- [smart-apply.ameriabank.am](http://smart-apply.ameriabank.am)՝ օնլայն եղանակով բացվում է «ՍՄԱՐԹ» հաշիվ, ինչի համար պահանջվում է նաև գրանցվել օնլայն բանկինգի համակարգում (լիարժեք, ոչ սահմանափակ հասանելիությամբ ընթացիկ հաշվի ձեռքբերման և տրամադրվող վճարային քարտի ակտիվացման նպատակով անհրաժեշտ է անցնել նույնականացում տեսազանգի կամ բանկ այցելելու եղանակով),
- [sme-ecosystem.ameriabank.am](http://sme-ecosystem.ameriabank.am)՝ «Ամերիա Բիզնես» հարթակ. հնարավոր է ԱԶ գրանցել, բացել բանկում հաշիվ, ստանալ քարտ, օգտվել օնլայն և մոբայլ բանկինգի («MyAmeria») համակարգից, կատարվում է օնլայն վարկավորում (ավտոմատ հաստատմամբ վարկավորման նպատակով բանկն ստանում է հարկային շրջանառությանը վերաբերող տվյալներ),
- [sme-onlineloans.ameriabank.am](http://sme-onlineloans.ameriabank.am)՝ նախատեսված է օնլայն եղանակով միկրո, փոքր և միջին բիզնեսի վարկավորման համար:

ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ-ի առցանց վճարումների համակարգը ([payment.aeb.am](http://payment.aeb.am)) տալիս է հնարավորություն իրականացնելու վարկի հերթական և մայր գումարի մարումներ: Առկա է նաև ԱՊՊԱ պայմանագրերի առցանց կնքման հնարավորություն [insurance.aeb.am](http://insurance.aeb.am) կայքի միջոցով:

Կոնվերս Բանկը հատուկ փոքր և միջին բիզնեսի ձեռնարկատերերի համար ունի բիզնես վարկերի օնլայն հարթակ ([sme.conversebank.am](http://sme.conversebank.am)):

ԷՎՈԿԱԲԱՆԿ-ի օնլայն վճարումների հարթակի ([payment.evocabank.am](http://payment.evocabank.am)) միջոցով կարելի է համալրել բանկում ունեցած բանկային և քարտային հաշիվները, իրականացնել վարկի մայր գումարի վաղաժամկետ մարում և հերթական մարում, ինչպես նաև քարտից քարտ փոխանցումներ, կոմունալ, գույքահարկի, ՃՈ, տեղական և միջազգային օպերատորների, ինտերնետի մասով վճարումներ, որոշ վարկային կազմակերպությունների հանդեպ առկա վարկային պարտավորությունների մասով մարումներ և այլն:

ՎՏԲ-Հայաստան Բանկի [pay.vtb.am](http://pay.vtb.am) կայքի օգնությամբ հնարավոր է որոշակի վճարի դիմաց համալրել այդ բանկում առկա քարտային և բանկային հաշիվները տեղական և միջազգային բանկերի կողմից թողարկված

քարտերից (դրամական փոխանցումների իրականացման «VTB-in» ծառայություն):

Այդի Բանկի հետ «Idram & IDBank» համատեղ հարթակով հանդես եկող «Իդրամ» վճարային համակարգի (համակարգի օպերատոր՝ «Իդրամ» ՍՊԸ) idram.am կայքի միջոցով հնարավոր է կատարել վճարումներ և տարբեր գործարքներ կրթական ծառայությունների, հեռահաղորդակցման ծառայությունների, կոմունալների, ճՈ տուգանքների, ավտոկայանատեղիի, գույքահարկի, ԱՊՊԱ-ի, ԴԱՀԿ-ի և այլնի մասով, իրականացնել վարկերի մարում, փոխանցումներ, համալրումներ, անհպում վճարումներ: Ընտրված ծառայությունների իրականացման նպատակով հաճախորդն ուղղորդվում է banking.idram.am կայք: Փոխկապակցված օժանդակ կայք է գործընկեր կազմակերպություններում կատարված գնումների համար քեշբեք ստանալուն միտված «Idram Cashback» ծառայության cashback.idram.am կայքը:

**Որոշակի տվյալներ առևտրային բանկերի՝ օնլայն բանկինգի և օժանդակ կայքերի մասով:** Աղյուսակներ 14-15-ում և 17-18-ում ցուցադրված են բանկերի օնլայն բանկինգի կայքերի դիտումների, իսկ Աղյուսակներ 19-20-ում և 22-23-ում՝ օժանդակ կայքերի դիտումների մասով մի շարք ցուցանիշներ: Աղյուսակներ 16-ում և 21-ում բերված են հիմնական ցուցանիշների գծով կայքերի զբաղեցրած դիրքերը:

**Աղյուսակ 14. Առևտրային բանկերի՝ օնլայն բանկինգի կայքերի դիտմանը վերաբերող հիմնական ցուցանիշները (2022 թվականի սեպտեմբեր՝ բացի «Այցելությունների քանակ» ցուցանիշից)**

Առևտրային բանկ	Այցելությունների քանակ* (2022 թվականի նշված ամսին)			1 այցի միջին տևողություն (ժամ, րոպե, վայրկյան)	Թռուցիկ դիտման %-ային մաս**	1 այցին դիտված էջերի միջին քանակ
	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր			
ԱԿԲԱ ԲԱՆԿ	92785	120774	111606	00:08:28	12.33	9.20
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	125727	125715	95338	00:10:52	12.66	4.52
Այդի Բանկ (online.idbank.am)	24758	29469	20480	00:03:07	57.34	1.87
Այդի Բանկ (idbanking.am)	22878	17445	20621	00:07:53	15.05	10.99
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	44038	56085	61808	00:12:21	15.10	4.26
Արդշինբանկ	154369	143165	262469	00:02:26	77.68	1.96

ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	<5000	<5000	<5000	00:00:01	-	2.00
Արցախբանկ	<5000	<5000	<5000	00:01:19	22.16	2.46
Բիրլոս Բանկ Արմենիա	<5000	<5000	<5000	-	94.28	1.04
ԷՎՈԿԱԲԱՆԿ	37275	40240	40600	00:07:28	21.54	4.23
ԻՆԵԿՈԲԱՆԿ	308982	312906	305948	00:07:23	7.50	7.69
Կոնվերս Բանկ	80391	92292	67652	00:08:24	14.39	4.27
ՀԱՅԲԻՉՆԵՍ- ԲԱՆԿ	40684	58787	50958	00:12:49	16.73	4.32
ՀԱՅԷԿՈՆՈՄ- ԲԱՆԿ (accounts.aeb.am)	66255	63130	64857	00:00:59	56.62	2.02
ՀԱՅԷԿՈՆՈՄ- ԲԱՆԿ (newonline.aeb.am)	64102	66877	64267	00:07:35	26.72	6.06
ՅՈՒՆԻԲԱՆԿ	73979	27914	47396	00:04:30	69.75	1.96
ՎՏԲ-Հայաստան Բանկ	12266	12732	14964	00:07:34	11.56	9.69

\* Համակարգչով (desktop) և բջջային սարքերով (mobile) համախառն այցելությունները:

\*\* Միջին %-ային մասնաբաժինը (bounce rate) այն այցելուների, որոնք մինչև կայքը լքելը դիտում են միայն մեկ էջ:

**Աղյուսակ 15. Առևտրային բանկերի՝ օնլայն բանկինգի կայքեր այցելությունների մասով լրացուցիչ տվյալներ (2022 թվականի սեպտեմբեր ամսվա համար)**

Առևտրային բանկ	Ըստ սարքավորումների այցելությունների բաշխումը (%-ային արտահայտմամբ)		Եզակի (չկրկնվող) այցելուների միջին թիվ*
	Համակարգչով (desktop)	Բջջային սարքերով (mobile web)	
ԱԿԲԱ ԲԱՆԿ	90.84	9.16	18508
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	89.32	10.68	15951
Այրի Բանկ (online.idbank.am)	86.14	13.86	<5000
Այրի Բանկ (idbanking.am)	31.21	68.79	6693
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	96.39	3.61	<5000
Արդշինբանկ	96.06	3.94	14126
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	100	-	<5000

Արցախբանկ	16.10	83.90	<5000
Բիբլոս Բանկ Արմենիա	-	100	<5000
ԷՎՈԿԱԲԱՆԿ	88.43	11.57	6093
ԻՆԵԿՈՐԱՆԿ	78.25	21.75	35536
Կոնվերս Բանկ	93.46	6.54	9956
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	82.91	17.09	7001
ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ (accounts.aeb.am)	100	-	<5000
ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ (newonline.aeb.am)	100	-	<5000
ՅՈՒՆԻԲԱՆԿ	95.41	4.59	5302
ՎՏԲ-Հայաստան Բանկ	76.11	23.89	<5000

\* Առանց նույն անձի կողմից տարբեր սարքերով այցելությունների տարանջատման:

Աղյուսակ 15-ից երևում է, որ ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ-ի և ՀԱՅԷԿՈՆՈՍԲԱՆԿ-ի՝ օնլայն բանկինգի կայքերի դիտումներ կատարվել են միայն համակարգչի, Բիբլոս Բանկ Արմենիայի դեպքում՝ միայն բջջային սարքերի միջոցով: Երկրորդ և երրորդ տեղերում են ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի (96.39%) և Արդշինբանկի (96.06%) կայքերը, եթե դիտումները կատարվել են համակարգչով. բջջային սարքերի դեպքում այդ դիքերում են Արցախբանկի (83.90%) և Այրի Բանկի idbanking.am (68.79%) կայքերը: Չկրկնվող այցելումների միջին թվով առաջատարների եռյակը ձևավորել են օնլայն բանկինգի՝ ԻՆԵԿՈՐԱՆԿ-ի (35536), ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի (18508) և ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ի (15951) կայքերը:

**Աղյուսակ 16. Հիմնական ցուցանիշներով օնլայն բանկինգի կայքերի զբաղեցրած դիրքերը**

Առևտրային բանկ	Առևտրային բանկի դիրքը համապատասխան ցուցանիշի մասով					
	Այցելությունների քանակ (2022 թվականի նշված ամսին)			1 այցի միջին տևողու- թյուն	Թռուցիկ դիտման %-ային մաս*	1 այցին դիտված էջերի միջին քանակ
	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր			
ԱԿԲԱ ԲԱՆԿ	4	4	3	4	14	3
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	3	3	4	3	13	6
Այրի Բանկ (online.idbank.am)	12	11	13	12	4	16
Այրի Բանկ	13	13	12	6	11	1

(idbanking.am)						
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	9	9	8	2	10	9
Արդշինբանկ	2	2	2	13	2	14-15
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	15-17	15-17	15-17	16	-	13
Արցախբանկ	15-17	15-17	15-17	14	7	11
Բիբլոս Բանկ Արմենիա	15-17	15-17	15-17	-	1	17
ԷՎՈԿԱԲԱՆԿ	11	10	11	9	8	10
ԻՆԵԿՈԲԱՆԿ	1	1	1	10	16	4
Կոնվերս Բանկ	5	5	5	5	12	8
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	10	8	9	1	9	7
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ (accounts.aeb.am)	7	7	6	15	5	12
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ (newonline.aeb.am)	8	6	7	7	6	5
ՅՈՒՆԻԲԱՆԿ	6	12	10	11	3	14-15
ՎՏԲ-Հայաստան Բանկ	14	14	14	8	15	2

\*Թռուցիկ դիտման %-ային մասնաբաժնով բարձր դիրքն ունի բացասական իմաստ:

Աղյուսակներ 14-ը և 16-ը ցույց են տալիս, որ 2022 թվականի հուլիս-սեպտեմբեր հատվածում ԻՆԵԿՈԲԱՆԿ-ի՝ օնլայն բանկինգի կայքը եղել է բացարձակ առաջատար այցելությունների քանակով (հուլիսին՝ 308982 դիտում, օգոստոսին՝ 312906 դիտում, սեպտեմբերին՝ 305948 դիտում): Երկրորդ տեղում Արդշինբանկի համապատասխան կայքն է (հուլիսին՝ 154369 դիտում, օգոստոսին՝ 143165 դիտում, սեպտեմբերին՝ 262469 դիտում): ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ը և ԱԿԲԱ ԲԱՆԿ-ը բաշխել են երրորդ և չորրորդ դիրքերը (սեպտեմբերին եղել է փոխատեղում), իսկ հինգերորդ դիրքում Կոնվերս Բանկն է: 1 այցի ամենաերկար միջին տևողությամբ (12 րոպե 49 վայրկյան) կայքը սեպտեմբերին եղել է ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ-ի կայքը, 1 այցի ընթացքում դիտված էջերի միջին քանակի գծով առաջատարը (10.99 էջ ցուցանիշով)՝ ԱյԴի Բանկի՝ ֆիզիկական անձանց համար նախատեսված օնլայն բանկինգի կայքը: Բիբլոս Բանկ Արմենիայի կայքն առաջին տեղում է թռուցիկ դիտման %-ային մասնաբաժնով՝ այցելուների միջինում 94.28%-ն ընդամենը 1 էջ է դիտում և լքում է կայքը: Թերևս դա է պատճառը, որ կայքը 1 այցի ընթացքում դիտված էջերի միջին քանակով (1.04 էջ) զբաղեցնում է վերջին տեղը:

**Աղյուսակ 17. Առևտրային բանկերի՝ օնլայն բանկինգի որոշ կայքեր համակարգչով (desktop) մուտքի եղանակների %-ային մասնաբաժինները (2022 թվական, սեպտեմբեր)**

Առևտրային բանկ	Մուտքի եղանակը և %-ային մասնաբաժինը					
	Կայքի հասցե մուտք գործելով	Այլ կայքերից (հղումներ)	Որոնում	Սոցցանցեր	Էլ-փոստ	Գովազդ
ԱԿԲԱ ԲԱՆԿ	73.51	20.85	1.09	0.59	3.95	-
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	53.80	39.49	0.42	2.02	4.27	-
Այդի Բանկ (online.idbank.am)	30.46	24.61	2.65	3.86	38.41	-
Այդի Բանկ (idbanking.am)	59.48	38.27	-	2.25	-	-
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	88.94	1.39	0.02	3.48	6.17	-
Արդշինբանկ	66.93	32.11	0.82	0.13	-	-
ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ	5.76	76.11	-	-	18.13	-
Արցախբանկ	-	100	-	-	-	-
ԷՎՈԿԱԲԱՆԿ	95.24	-	0.75	1.02	3.00	-
ԻՆԵԿՈԲԱՆԿ	96.11	0.01	1.23	0.21	2.45	-
Կոնվերս Բանկ	32.51	45.79	4.65	1.74	15.31	-
ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ	76.60	8.71	0.12	4.36	10.20	-
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ (accounts.aeb.am)	0.19	68.41	2.73	15.76	12.91	<0.01
ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ (newonline.aeb.am)	14.95	76.22	1.41	6.91	0.51	-
ՅՈՒՆԻԲԱՆԿ	38.66	6.48	33.28	9.06	12.52	-
ՎՏԲ-Հայաստան Բանկ	6.73	93.27	-	-	-	-

Համակարգչով կատարվող դիտումների համար կայքի հասցե ուղղակի մուտք գործելու %-ային մասնաբաժնով առաջատարն է ԻՆԵԿՈԲԱՆԿ-ի՝ օնլայն բանկինգի կայքը (96.11%), այլ կայքերից՝ հղումներով մուտքի մասով՝ Արցախբանկի կայքը, որի դեպքում համապատասխան կայքի դիտումը միմիայն այդ կերպ է տեղի ունենում: Որոնման շնորհիվ կատարվող դիտումների դեպքում մասնաբաժինն ավելի մեծ է ՅՈՒՆԻԲԱՆԿ-ի կայքի (33.28%), սոցիալական ցանցերի միջնորդությամբ կատարվող դիտումների գծով՝ ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ-ի accounts.aeb.am կայքի (15.76%) դեպքում: Այդի Բանկի online.idbank.am կայքը գլխավորում է ցուցակն էլեկտրոնային փոստի

համար (38.41%): Միայն ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ-ի accounts.aeb.am կայքն ունի գովազդի ազդեցությամբ կատարված դիտումների մասնաբաժին (<0.01%):

**Աղյուսակ 18. Առևտրային բանկերի՝ օնլայն բանկինգի կայք բջջային սարքով (mobile web) մուտքի եղանակների %-ային մասնաբաժինները (2022 թվական, սեպտեմբեր)**

Առևտրային բանկ	Մուտքի եղանակը և %-ային մասնաբաժինը				
	Կայքի հասցե մուտք գործելով	Այլ կայքերից (հղումներ)	Որոնում	Սոցցանցեր	Էլփոստ
ԱԿԲԱ ԲԱՆԿ	73.04	8.62	18.14	0.19	0.01
ԱՄԵՐԻԱԲԱՆԿ	66.45	23.15	4.37	6.03	0.01
Այդի Բանկ (online.idbank.am)	74.13	11.26	7.34	7.22	0.06
Այդի Բանկ (idbanking.am)	69.05	13.41	13.92	3.62	-
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ	82.22	3.39	11.14	3.22	0.01
Արդշինբանկ	72.14	6.93	20.91	-	0.01
ԷՎՈԿԱԲԱՆԿ	73.72	1.43	23.00	1.85	0.01
ԻՆԵԿՈԲԱՆԿ	73.35	1.26	25.32	0.07	0.01
Կոնվերս Բանկ	72.26	17.95	8.14	1.63	0.03
ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ	73.63	3.96	18.03	4.34	0.03
ՅՈՒՆԻԲԱՆԿ	58.27	4.50	30.60	6.63	0.02
ՎՏԲ-Հայաստան Բանկ	66.67	31.49	1.83	-	0.01

Բջջային սարքերով կատարված դիտումների գծով ուղղակիորեն կայքի հասցե մուտքի %-ային մասնաբաժնով առաջատարն է ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի՝ օնլայն բանկինգի կայքը (82.22%), այլ կայքերից՝ հղումներով մուտքի մասով՝ ՎՏԲ-Հայաստան Բանկի համապատասխան կայքը (31.49%): Որոնման եղանակի մասնաբաժինն ավելի մեծ է ՅՈՒՆԻԲԱՆԿ-ի կայքի դեպքում (30.60%): Սոցիալական ցանցերի միջնորդությամբ կատարված դիտումների ցուցակը գլխավորում է Այդի Բանկի՝ իրավաբանական անձանց համար նախատեսված online.idbank.am հարթակը (7.22%), որն էլփոստով կատարված դիտումների համար նույնպես ունի ամենամեծ մասնաբաժինը (0.06%):




Հիմնվելով այս և նախորդ աղյուսակների տվյալների վրա՝ կարելի է նկատել, որ 2022 թվականի սեպտեմբերին համակարգչով և բջջային սարքերով կատարված մուտքերի՝ որոնման և էլեկտրոնային փոստի %-ային մասնաբաժիններով օնլայն բանկինգի առաջատար կայքերը նույնն են՝ համապատասխանաբար ՅՈՒՆԻԲԱՆԿ-ի կայքը և ԱյԴԻ Բանկի [online.idbank.am](http://online.idbank.am) կայքը:

Համաձայն Similarweb կայքում բերված տեղեկատվության՝ ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի հարթակը ([acbadigital.am](http://acbadigital.am)) մրցակից է համարվել ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ի, Արդշինբանկի, ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ-ի, Կոնվերս Բանկի, ԷՎՈԿԱԲԱՆԿ-ի, ԻՆԵԿՈԲԱՆԿ-ի կայքերին ([online.ameribank.am](http://online.ameribank.am), [ibanking.ardshinbank.am](http://ibanking.ardshinbank.am), [internetbank.ambusinessbank.am](http://internetbank.ambusinessbank.am), [ebanking.conversebank.am](http://ebanking.conversebank.am), [online.evocabank.am](http://online.evocabank.am), [online.inecobank.am](http://online.inecobank.am)) և ԱյԴԻ Բանկի՝ իրավաբանական անձանց համար նախատեսված հարթակին ([online.idbank.am](http://online.idbank.am)): ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ-ի և Կոնվերս Բանկի մրցակից է համարվել նաև [hsbcnet.com](http://hsbcnet.com) կայքը, ՀԱՅԲԻՉՆԵՍԲԱՆԿ-ի դեպքում՝ նաև [online.ameribank.am](http://online.ameribank.am) կայքը:


ԱՐԱՐԱՏԲԱՆԿ-ի, ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ-ի, Կոնվերս Բանկի, Արդշինբանկի, ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի, ԻՆԵԿՈԲԱՆԿ-ի՝ օնլայն բանկինգի գործիքակազմից օգտվող անձինք նաև զգալիորեն այցելել են և փնտրել «Ֆինանսական պլանավորում և կառավարում» (Financial Planning and Management) կատեգորիայի ներքո դասակարգվող կայքեր և տեղեկատվություն, որոշ դեպքերում՝ նաև կառավարական կայքեր (Government), որոնք առաջատար են ԷՎՈԿԱԲԱՆԿ-ի դեպքում: ԱյԴԻ Բանկի՝ ֆիզիկական անձանց համար նախատեսված հարթակի մասով առաջատարը «հոսքային հեռարձակում և օնլայն հեռուստատեսություն» (Streaming & Online TV) կատեգորիան է:

ԱԿԲԱ ԲԱՆԿ-ի դեպքում այցելուների 53.32%-ը եղել է իզական սեռի, 46.68%-ը՝ արական սեռի: ԱյԴԻ Բանկի՝ ֆիզիկական անձանց համար նախատեսված հարթակի դեպքում պատկերը հետևյալն է՝ իզական սեռ՝ 49.30%, արական սեռ՝ 50.70%: Ստորև բերված են նշված երկու կայքերի այցելուների տարիքային կազմի պատկերները (համակարգչով (desktop) այցելությունների հիման վրա):



**Գծապատկեր 26. ԱԿՐԱ ԲԱՆԿ-ի՝ օնլայն բանկինգի կայքի այցելուների տարիքային կազմը (2022 թվականի սեպտեմբեր)**

Կայքից ամենաշատն օգտվել են 25-34 տարեկան անձինք (34.03%): Երկրորդ տեղում 18-24 տարիքային խումբն է (23.84%): Ամենից քիչ օգտվել է 65+ տարիքային խումբը (5.60%):



**Գծապատկեր 27. Օնլայն բանկինգի կայքի այցելուների տարիքային կազմն ԱյԴի Բանկի՝ ֆիզիկական անձանց համար նախատեսված հարթակի մասով (2022 թվականի սեպտեմբեր)**

Կայքից ամենաշատն օգտվել են 25-34 տարեկան անձինք (34.13%): Երկրորդ տեղում 18-24 տարիքային խումբն է (18.88%): Տվյալ կայքի համար 65 տարեկան և բարձր տարիքի անձինք դարձյալ ամենից քիչ օգտվողներն են եղել (5.39%):

Հաջորդիվ դիտարկված են բանկերի մյուս՝ օժանդակ կայքերը: Դրանց միջոցով հնարավոր է կատարել գործարքներ, որոնք հաճախ ներկայացված

են լինում նաև օնլայն և մոբայլ բանկինգի համակարգերում, մատուցվում են նաև վարկավորման և այլ ծառայություններ, որոնց համար հատուկ ստեղծվում են այս կայքերը: Ստորև ներկայացված է օժանդակ կայքերին վերաբերող և առկա տեղեկատվությունը:

**Աղյուսակ 19. Օժանդակ կայքերի դիրմանը վերաբերող հիմնական ցուցանիշները (2022 թվականի սեպտեմբեր՝ բացի «Այցելությունների քանակ» ցուցանիշից)**

Օժանդակ կայք	Այցելությունների քանակ* (2022 թվականի նշված ամսին)			1 այցի միջին տևողություն (ժամ, րոպե, վայրկյան)	Թռուցիկ դիտման %-ային մաս**	1 այցին դիտված էջերի միջին քանակ
	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր			
payments.ameribank.am	140787	150302	127756	00:02:00	51.58	2.39
automarket.ameribank.am	22963	5028	<5000	00:07:40	19.12	13.06
estate.ameribank.am	18267	52295	18559	00:06:29	22.09	5.80
smart-apply.ameribank.am	19241	60425	38916	00:02:13	60.17	2.27
sme-onlineloans.ameribank.am	<5000	<5000	<5000	00:01:05	-	8.21
insurance.aeb.am	<5000	<5000	<5000	-	9.16	2.19
payment.aeb.am	<5000	<5000	<5000	00:02:07	-	3.00
sme.conversebank.am	-	<5000	<5000	-	100	1.00
payment.evocabank.am	5303	<5000	<5000	00:23:47	-	36.00
idram.am	251006	218619	149740	00:06:19	44.68	5.44
banking.idram.am	169119	164137	113677	00:07:38	34.10	6.21
cashback.idram.am	<5000	<5000	<5000	00:03:07	64.93	1.91

\* Համակարգչով (desktop) և բջջային սարքերով (mobile) համախառն այցելությունները:

\*\* Միջին %-ային մասնաբաժինը (bounce rate) այն այցելուների, որոնք մինչև կայքը լքելը դիտում են միայն մեկ էջ:

**Աղյուսակ 20. Օժանդակ կայքեր այցելությունների մասով լրացուցիչ տվյալներ (2022 թվականի սեպտեմբեր ամսվա համար)**

Օժանդակ կայք	Ըստ սարքավորումների այցելությունների բաշխումը (%-ային արտահայտմամբ)		Եզակի (չկրկնվող) այցելուների միջին թիվ*
	Համակարգչով (desktop)	Բջջային սարքերով (mobile web)	
payments.ameribank.am	16.58	83.42	47407
automarket.ameribank.am	58.40	41.60	<5000
estate.ameribank.am	54.25	45.75	6624

smart-apply.ameriabank.am	15.61	84.39	10270
sme-onlineloans.ameriabank.am	-	100	<5000
insurance.aeb.am	-	100	<5000
payment.aeb.am	100	-	<5000
sme.conversebank.am	100	-	<5000
payment.evocabank.am	100	-	<5000
idram.am	58.80	41.20	45501
banking.idram.am	72.12	27.88	26104
cashback.idram.am	59.61	40.39	<5000

\* Առանց նույն անձի կողմից տարբեր սարքերով այցելությունների տարանջատման:

Օժանդակ կայքերից ամբողջությամբ համակարգչով դիտումներ ունեցել են ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ-ի՝ առցանց վճարումների կայքը (payment.aeb.am), Կոնվերս Բանկի՝ փոքր և միջին բիզնեսի ձեռնարկատերերի համար նախատեսված բիզնես վարկերի օնլայն կայքը (sme.conversebank.am) և ԷՎՈԿԱԲԱՆԿ-ի՝ օնլայն վճարումներ կատարելու համար նախատեսված payment.evocabank.am կայքը: Միայն բջջային սարքերով կատարված այցելություններ եղել են միկրո, փոքր և միջին բիզնեսի օնլայն վարկավորման sme-onlineloans.ameriabank.am հարթակի (ԱՄԵՐԻԱԲԱՆԿ) և ԱՊՊԱ պայմանագրերի առցանց կնքման insurance.aeb.am (ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ) հարթակի դեպքում: Եզակի այցելուների միջին թվի ամենամեծ արժեքը եղել է ԱՄԵՐԻԱԲԱՆԿ-ի payments.ameriabank.am կայքի դեպքում (47407 այցելու), իսկ երկրորդ (45501 այցելու) և երրորդ (26104 այցելու) արժեքները գրանցել են համապատասխանաբար idram.am և banking.idram.am կայքերը:

**Աղյուսակ 21. Բերված ցուցանիշներով օժանդակ կայքերի զբաղեցրած դիրքերը**

Օժանդակ կայք	Օժանդակ կայքի դիրքը համապատասխան ցուցանիշի մասով					
	Այցելությունների քանակ (2022 թվականի նշված ամսին)			1 այցի միջին տևողություն	Թռուցիկ դիտման %-ային մաս*	1 այցին դիտված էջերի միջին քանակ
	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր			
payments.ameriabank.am	3	3	2	9	4	8
automarket.ameriabank.am	4	6	6-12	2	8	2
estate.ameriabank.am	6	5	5	4	7	5
smart-apply.ameriabank.am	5	4	4	7	3	9

sme-online loans.ameriabank.am	8-11	7-12	6-12	10	-	3
insurance.aeb.am	8-11	7-12	6-12	-	9	10
payment.aeb.am	8-11	7-12	6-12	8	-	7
sme.conversebank.am	-	7-12	6-12	-	1	12
payment.evocabank.am	7	7-12	6-12	1	-	1
idram.am	1	1	1	5	5	6
banking.idram.am	2	2	3	3	6	4
cashback.idram.am	8-11	7-12	6-12	6	2	11

\*Թռուցիկ դիտման %-ային մասնաբաժնով բարձր դիրքն ունի բացասական իմաստ:

2022 թվականի հուլիս-սեպտեմբեր ժամանակահատվածում օժանդակ կայքերից այցելությունների թվով ամենամեծ արժեքներն ունեցել է idram.am-ը (251006 դիտում՝ հուլիսին, 218619 այցելություն՝ օգոստոսին, 149740 դիտում՝ սեպտեմբերին): Երկրորդ և երրորդ տեղերը բաշխվել են (սեպտեմբերին եղել է փոխատեղում) banking.idram.am հարթակի և payments.ameriabank.am կայքի միջև: 1 այցի միջին տևողության և 1 այցին դիտված էջերի միջին քանակի ամենից մեծ արժեքները (23 րոպե և 47 վայրկյան, 36.00 էջ) payment.evocabank.am հարթակի դեպքում են դրսևորվել: Թռուցիկ դիտման %-ային մասնաբաժնի 100% արժեքը (1 այցի ընթացքում միջինում 1.00 էջ դիտելուն զուգահեռ) ձևավորվել է sme.conversebank.am հարթակի դեպքում:

**Աղյուսակ 22. Օժանդակ կայքեր համակարգչով (desktop) մուտք գործելու եղանակների %-ային մասնաբաժինները 2022 թվականի սեպտեմբերին**

Օժանդակ կայք	Մուտքի եղանակը և %-ային մասնաբաժինը				
	Կայքի հասցե մուտք գործելով	Այլ կայքերից (հղումներ)	Որոնում	Սոցցանցեր	Էլ-փոստ
payments.ameriabank.am	30.19	62.95	6.86	-	-
automarket.ameriabank.am	23.52	1.79	74.69	-	-
estate.ameriabank.am	62.75	21.54	13.19	2.53	-
smart-apply.ameriabank.am	10.55	89.45	-	-	-
payment.aeb.am	95.83	4.17	-	-	-
sme.conversebank.am	-	100	-	-	-
payment.evocabank.am	-	100	-	-	-

idram.am	53.50	12.95	14.23	5.00	14.32
banking.idram.am	25.30	49.16	4.75	5.09	15.71
cashback.idram.am	83.31	16.69	-	-	-

Համակարգչով կատարված դիտումների համար ուղղակիորեն կայքի հասցե մուտքի %-ային մասնաբաժնով առաջատարն է payment.aeb.am կայքը (95.83%), այլ կայքերից՝ հղումներով մուտքի դեպքում՝ sme.conversebank.am և payment.evocabank.am կայքերը. այցելություններն այս կայքեր միայն այդ եղանակով են տեղի ունեցել: Որոնման շնորհիվ կատարված դիտումների մասնաբաժինն automarket.ameriabank.am կայքի դեպքում է ավելի մեծ (74.69%), իսկ սոցցանցերի միջնորդությամբ կատարված այցելությունների գծով առաջատարը banking.idram.am կայքն է (5.09%), որն ունի նաև էլփոստով կատարված դիտումների ամենամեծ մասը (15.71%): Միայն idram.am-ի և banking.idram.am-ի դեպքում են կատարվել այցելություններ բոլոր եղանակներով:


**Աղյուսակ 23. Օժանդակ կայքեր բջջային սարքերով (mobile web) մուտք գործելու եղանակների %-ային մասնաբաժինները 2022 թվականի սեպտեմբերին**

Օժանդակ կայք	Մուտքի եղանակը և %-ային մասնաբաժինը					
	Կայքի հասցե մուտք գործելով	Այլ կայքերից (հղումներ)	Որոնում	Սոցցանցեր	Էլփոստ	Գովազդ
payments.ameriabank.am	66.11	20.89	12.96	0.03	0.01	-
automarket.ameriabank.am	24.13	4.36	69.56	1.94	0.01	-
estate.ameriabank.am	63.66	10.63	21.03	4.68	0.01	-
smart-apply.ameriabank.am	67.53	32.31	0.16	-	-	-
idram.am	63.25	5.39	25.54	5.78	0.02	0.02
banking.idram.am	68.98	20.53	5.09	5.38	0.02	-
cashback.idram.am	54.38	10.77	34.86	-	-	-

Բջջային սարքերով կատարված այցելությունների համար ուղղակիորեն կայքի հասցե մուտքի %-ային մասնաբաժնով առաջատարը banking.idram.am-ն է (68.98%), այլ կայքերից՝ հղումներով մուտքի մասով՝ smart-apply.ameriabank.am կայքը (32.31%): Որոնման շնորհիվ կատարված դիտումների դեպքում մասնաբաժինն ավելի մեծ է automarket.ameriabank.am

կայքի (69.56%), սոցցանցերի միջնորդությամբ կատարված դիտումների գծով՝ idram.am կայքի համար (5.78%): idram.am-ը և banking.idram.am-ն ունեն նաև էլիտոսով կատարված դիտումների ամենամեծ մասնաբաժինը՝ 0.02%: Գովազդի ազդեցությամբ մուտքեր եղել են միայն idram.am կայքի դեպքում (0.02%):

Idram.am և banking.idram.am կայքերից օգտվող անձինք զգալիորեն այցելել են և փնտրել «Ֆինանսական պլանավորում և կառավարում» (Financial Planning and Management) կատեգորիայի մեջ մտնող կայքեր և տեղեկատվություն, իսկ երկրորդ տեղում «սոցիալական մեդիայի ցանցեր» (Social Media Networks) կատեգորիան է:



**Գծապատկեր 28. Idram.am կայքի այցելուների տարիքային կազմը (2022 թվականի սեպտեմբեր)**

Կայքից ամենաշատն օգտվել են 25-34 տարեկան անձինք (34.51%): Երկրորդ տեղում 18-24 տարիքային խումբն է (24.86%): Այս դեպքում ևս ամենից քիչ (5.19%) օգտագործողները եղել են 65 տարեկան և բարձր տարիքի:

**Ֆինանսական տեղեկատու կայքերի մասով լավագույն միջազգային փորձը:** Ֆինանսական տեղեկատու կայքերի և դրանց հիման վրա իրականացվող գործարքների մասով լավագույն փորձով աչքի է ընկել Ռուսաստանի Դաշնության (այսուհետ՝ ՌԴ) ֆինանսական շուկան՝ պայմանավորված երկրում մշակված ու ներդրված նախաձեռնությամբ և վերջինիս իրականացմանը նպաստելու նպատակով կատարված օրենսդրական բարեփոխումներով:

ՌԴ կենտրոնական բանկը 2017 թվականի դեկտեմբերին հայտարարեց «Маркетплейс» նախագծի մասին՝ նպատակ ունենալով ստեղծելու երկրի ողջ տարածքում, առանց աշխարհագրական սահմանափակումների, ֆինանսական պրոդուկտների (ծառայությունների) հեռավար մանրածախ վաճառքի օրենսդրական և նորմատիվ հենք՝ հատուկ ռեեստրում նման ֆինանսական գործարքների գրանցմամբ: Ստեղծման հիմքում նաև շուկայում մրցակցության զարգացման և ֆինանսական սպասարկման օպտիմիզացիայի նախադրյալների ձևավորման ցանկությունն է. կամայական ընկերության համար, անկախ վերջինիս չափերից, հայտվում է նոր հաճախորդների ներգրավման լրացուցիչ աղբյուր:

«Маркетплейс»-ը գործում է «plug&play» («Միացի՛ր և խաղա՛») սկզբունքով և միավորում է հետևյալ մասնակիցներին.

- Ֆինանսական պլատֆորմներ. օնլայն հարթակներ են, որտեղ ֆինանսական կազմակերպությունները և հաճախորդները կկնքեն գործարքներ: Պլատֆորմները միտված են ավտոմատիզացնելու կողմերի փոխազդեցությունները և ապահովելու հարմարություն ֆինանսական գործառնություններ իրականացնելիս:
- Ֆինանսական պրոդուկտների և ծառայությունների մատակարարներ՝ բանկեր, ապահովագրական կազմակերպություններ, փայատիրական ներդրումային հիմնադրամների կառավարիչներ, կորպորատիվ և պետական պարտատոմսերի էմիտենտներ:
- Ֆինանսական գործառնությունների ռեգիստրատոր՝ հարթակներում իրականացված գործարքներին վերաբերող և իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկությունների պահպանման ռեեստր: Այն ստեղծված է Ազգային հաշվարկային դեպոզիտարիայի (Небанковская кредитная организация акционерное общество «Национальный расчетный депозитарий») հենքի վրա: Նախատեսված է հնարավորություն ստանալու քաղվածքներ ռեգիստրատորից Ռուսաստանի դաշնության պետական ծառայությունների պորտալի (gosuslugi.ru) միջոցով:
- Ազրեգատոր-կայքեր (ֆինանսական պլատֆորմների օպերատորների փաստաթղթերում կոչվում են նաև «ցուցափեղկ-ազրեգատորներ»)։ ինտերնետային ռեսուրսներ և բջջային հավելվածներ, որոնք



տալիս են հաճախորդին հնարավորություն հիմնական չափանիշների հիման վրա, դրանք են՝ ժամկետ, տոկոսադրույք, վարկանիշ և այլն, համեմատելու և ընտրելու ֆինանսական պրոդուկտներ<sup>68</sup>:

Նախագծի օրենսդրական հիմքը դրվեց 2020 թվականի հուլիսին, երբ ընդունվեց և վավերացվեց «Ֆինանսական պլատֆորմների կիրառմամբ ֆինանսական գործարքների կատարման մասին» Դաշնային օրենքը: Վերջինիս սահմանմամբ՝ ֆինանսական պլատֆորմներով կարող են իրականացվել ֆինանսական գործարքներ (բանկային ծառայությունների, ապահովագրական ծառայությունների, արժեթղթերի շուկայում ծառայությունների մատուցման գործարքներ, ֆինանսական գործիքներով գործարքներ, ֆինանսական պլատֆորմի կանոններով նախատեսված՝ ֆինանսական բնույթի այլ ծառայությունների մատուցման գործարքներ)՝ կատարվող ֆինանսական կազմակերպությունների կամ էմիտենտների և ֆինանսական ծառայությունների սպառողների (որոնք ֆիզիկական անձինք են) միջև ֆինանսական պլատֆորմի կիրառմամբ՝ բացառությամբ բանկային հաշվի ավանդի պայմանագրերի, որոնք կնքվում են՝ պայմանավորված ֆինանսական ծառայությունների սպառողի կողմից ձեռնարկատիրական գործունեության իրականացմամբ<sup>69</sup>:

2021 թվականի հունվարի 21-ին ՌԴ կառավարության նախագահ Միխայիլ Միշուստինն ստորագրեց ՌԴ կառավարության որոշում, որով ֆինանսական պլատֆորմների օպերատորներին տրվեց հնարավորություն ստանալու անհրաժեշտ տեղեկություններն ԱՊՊԱ-ի ավտոմատացված տեղեկատվական համակարգից, որպեսզի վերջիններս կարողանան ավտոմատ հովազրության պայմանագրեր կնքելն ընդգրկել իրենց կողմից ապահովվող ծառայությունների ցանկում<sup>70</sup>:

Ինտերնետի ռուսական սեգմենտում առկա են հետևյալ ֆինանսական տեղեկատու կայքերը.

---

<sup>68</sup> ՌԴ կենտրոնական բանկի կայքի «Деятельность» բաժնի «Развитие финансовых технологий» ենթաբաժնի «Маркетплейс» բաղադրիչ, Банк России // URL: [https://cbr.ru/fintech/market\\_place/](https://cbr.ru/fintech/market_place/), 26.12.2022:

<sup>69</sup> Федеральный закон от 20 июля 2020г. №211-ФЗ «О совершении финансовых сделок с использованием финансовой платформы», // URL: <https://ivo.garant.ru/#/document/74399619/>, 26.12.2022.

<sup>70</sup> Правительство упростило оформление электронного полиса ОСАГО, ՌԴ կառավարության պաշտոնական կայք, // URL: <http://government.ru/news/41370/>, 26.12.2022:

- «Credits.ru» (credits.ru, «Дабл-Ю Групп» ՍՊԸ): Հարթակը թույլ է տալիս ուսումնասիրել սպառողական, գրավի պահանջով վարկեր, ավտովարկեր, հիփոթեք, փոխառություններ, խնայողություններ, բանկային քարտեր, վերաֆինանսավորման և ապահովագրական պրոդուկտներ, բիզնեսի դեպքում՝ վարկեր և հաշվարկադրամարկդային սպասարկման (այսուհետ՝ ՀԴՍ) առկա տարբերակներ: Մի շարք պրոդուկտների մասով կարելի է ներկայացնել օնլայն հայտեր: Ներկայացվող ծառայությունները մատուցում են տարբեր ռուսաստանյան բանկեր, սպառողական վարկային կոոպերատիվներ, միկրոֆինանսական և ապահովագրական կազմակերպություններ:
- «ЮНИКОМ24» (unicom24.ru, «ЮНИКОМ24» ՍՊԸ): Ներկայացվում են միկրոփոխառություններ, սպառողական վարկեր, ավտովարկեր, հիփոթեք, դեբետային և վարկային քարտեր, ապահովագրական ծառայություններ, վարկերի վերաֆինանսավորման և ՀԴՍ տարբերակներ, տեղեկատվություն փոխարժեքի մասին: Առկա է նաև վարկային պրոդուկտների ընտրության համար նախատեսված մեկ այլ հարթակ՝ «Кредитный Брокер» (kreditbroker.ru, «ЮНИКОМ24» ՍՊԸ): Կարելի է ներկայացնել օնլայն հայտեր մի շարք պրոդուկտների համար: Բոլոր ծառայությունները վերաբերում են բանկերին, միկրոֆինանսական, միկրովարկային և ապահովագրական կազմակերպություններին:
- «Выберу.ру» (vbr.ru, «Выберу.ру» ՍՊԸ): Հարթակում մեկտեղված են միկրոֆինանսական և ապահովագրական կազմակերպությունների, բանկերի հետևյալ առաջարկները.
  - ծառայություններ անհատների համար՝ վարկեր (սպառողական, նպատակային, ավտովարկեր, վերաֆինանսավորում) հիփոթեք, քարտեր, փոխառություններ, ապահովագրական և ներդրումային ծառայություններ, արտարժույթի և կրիպտոարժույթների փոխարժեք,
  - ծառայություններ բիզնեսի համար՝ վարկեր, բիզնես-քարտեր, ֆակտորինգ, էքվայերինգ, բանկային երաշխիքներ, ավանդներ, ՀԴՍ:

- «Банки.ру» հարթակը (banki.ru, «Информационное агентство «Банки.ру») ՍՊԸ): Հավաքագրում է ծառայություններ և պրոդուկտներ գործընկերներ բանկերի, միկրոֆինանսական, ապահովագրական և ներդրումային կազմակերպությունների մասով, որոնք վերաբերում են.
  - ֆիզիկական անձանց՝ ավանդներ, բանկային քարտեր, վարկեր (սպառողական, ավտովարկեր, վերաֆինանսավորում), հիփոթեքային, ապահովագրական և ներդրումային ծառայություններ,
  - իրավաբանական անձանց՝ բիզնես-քարտեր, ՀԴՍ, բիզնեսի ապահովագրություն, վարկեր՝ նախատեսված անհատ ձեռներեցների համար, դեբետային քարտեր ինքնազբաղվածների համար:
- «Сравни.ру» ՍՊԸ-ի «Сравни» հարթակը (sravni.ru) մեկտեղում է բանկերի, միկրոֆինանսական և ապահովագրական ընկերությունների գծով տեղեկատվություն անհատների և բիզնեսի համար՝ ապահովագրական պրոդուկտներ, վարկեր և փոխառություններ, խնայողություններ և քարտեր, էքվայերինգ, ՀԴՍ, բիզնեսի համար ավանդներ, քարտեր, վարկեր և երաշխիքներ, գրանցում և հաշվապահական ծառայություններ:

Նշվածներից ամենահայտնի հարթակները «Банки.ру» և «Сравни» հարթակներն են, որոնք «Маркетплейс»-ի շրջանակներում գործող պլատֆորմների համար ագրեգատոր-կայքեր են:

«Банки.ру» հարթակի դեպքում ֆինանսական պլատֆորմի (պլատֆորմի կայքէջ՝ bankiplatforma.ru) օպերատորն է «Цифровые технологии» բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ ԲԸ), որի նշված պլատֆորմի միջոցով ֆիզիկական անձինք կարող են կնքել բանկային ավանդային և վարկային պայմանագրեր՝ պլատֆորմում օնլայն ձևակերպման հնարավորությամբ<sup>71</sup>: «Информационное агентство «Банки.ру») ՍՊԸ-ն սույն օպերատորի հետ անմիջականորեն կապված ցուցափեղկ-ագրեգատոր կազմակերպություն է:

«Сравни» հարթակի դեպքում ֆինանսական պլատֆորմի օպերատորն է «Финансовый Маркетплейс Сравни.ру» ԲԸ (պլատֆորմի կայքէջ՝

---

<sup>71</sup> Правила финансовой платформы Акционерного общества «Цифровые технологии» (ред. 20.12.2022), // URL: [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/-rules\\_dt\\_20122022.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/-rules_dt_20122022.pdf), 25.12.2022.

sравни.market), որն առաջարկում է ֆիզիկական անձանց սպառողական վարկերի ընտրության գծով ծառայություններ՝ պլատֆորմում օնլայն ձևակերպման հնարավորությամբ: Սույն օպերատորի պլատֆորմի՝ 2022 թվականի սեպտեմբերի խմբագրությամբ կանոնների համաձայն՝ այս օպերատորն ապահովում է հնարավորություն կնքելու վարկային պայմանագիր, բանկային ավանդի, կամավոր ապահովագրման, բանկային հաշվի, բանկային քարտի թողարկման, հեռավար բանկային սպասարկման և ԱՊՊԱ պայմանագրեր<sup>72</sup>: Վարկեր ձևակերպելու և ստանալու հնարավորությունն ի հայտ է եկել 2022 թվականի նոյեմբերին, պլանավորված է ավանդների օնլայն ձևակերպման կարողության ներդրվելը<sup>73</sup>: Ստացվում է, որ նշված օպերատորը դեռ շարունակում է հասանելի դարձնել կանոններով առաջարկված ֆունկցիոնալը:

«Сравни.ру» ՄՊԸ-ն «Финансовый Маркетплейс Сравни.ру» ԲԸ-ի համար ցուցափեղկ-ագրեգատոր կազմակերպություն է: Սույն օպերատորն այս պահին գործում է ՌԴ-ի միայն 10 սուբյեկտներում:

«Открытый финансовый маркетплейс» ֆինանսական պլատֆորմը (opfm.ru, օպերատոր՝ «Открытый финансовый маркетплейс» ԲԸ) ապահովում է ֆիզիկական անձանց բանկային ավանդի, ընթացիկ հաշվի և վարկային պայմանագրեր կնքելու հնարավորությամբ<sup>74</sup>: Նշվում է, որ բանկերը կստանան հնարավորություն իրացնելու իրենց ֆինանսական պրոդուկտները 24/7 ռեժիմով ՌԴ-ի բոլոր ռեգիոններում՝ առանց նոր օֆիսներ բացելու անհրաժեշտության<sup>75</sup>:

Մեկ այլ հարթակ է «Финансовая платформа»-ն (platform.finance, օպերատոր՝ «Специализированный депозитарий «ИНФИНИТУМ»» ԲԸ): Սույն

---

<sup>72</sup> Правила финансовой платформы АО «Финансовый Маркетплейс Сравни.ру» (ред. 02.09.2022), // URL: [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/rules\\_sravni\\_02092022.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/rules_sravni_02092022.pdf), 25.12.2022.

<sup>73</sup> **Еще один финансовый маркетплейс начал выдавать кредиты онлайн, газета «Ведомости», 30 ноября, 2022, // URL: <https://www.vedomosti.ru/finance/articles/2022/11/29/952726-vtoroi-krupneishii-finansovii-marketpleis-nachal-vidavat-krediti-onlain>, 26.12.2022.**

<sup>74</sup> Правила финансовой платформы АО «ОФМ» (ред. 21.12.2021), // URL: [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/rules\\_ofm\\_21122021.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/rules_ofm_21122021.pdf), 25.12.2022.

<sup>75</sup> «Открытый финансовый маркетплейс» ֆինանսական պլատֆորմի կայքի «Банки» բաժին, // URL: <https://opfm.ru/banks>, 25.12.2022:

ֆինանսական պլատֆորմի միջոցով կարող են իրականացվել միայն փա-  
յատիրական ներդրումային հիմնադրամների ներդրումային փայերի ձեռք-  
բերման, մարման կամ փոխանակման գործարքներ<sup>76</sup>:

«ВТБ Регистратор» ԲԸ-ն մշակել է իր՝ «Маркетплейс» կոչվող ֆինանսա-  
կան պլատֆորմը (վերջինիս անցնել կարելի է «ВТБ Регистратор» ԲԸ-ի  
vtbreg.com կայքից՝ pos.vtbreg.ru/marketplace/marketplace2/ հղումով), որով  
իրականացվում են միայն արժեթղթերով գործարքներ, որոնք կնքվում են  
ֆինանսական ծառայությունների սպառողի կողմից ձեռնարկատիրական  
գործունեության իրականացմամբ պայմանավորված<sup>77</sup>:

«Финансовая платформа «Московская Биржа»» պլատֆորմը (ինտերնե-  
տային կայքում՝ finuslugi.ru, կոչվում է «Финуслуги», օպերատոր՝ «Москов-  
ская Биржа ММВБ-РТС» հանրային բաժնետիրական ընկերություն) նախա-  
տեսված է բանկային ավանդի, պարտադիր ապահովագրման, սպառողա-  
կան վարկի, պարտատոմսերի առքուվաճառքի պայմանագրեր կնքելու հա-  
մար<sup>78</sup>: Կայքում նշված է, որ, բացի բուն օպերատորի ծառայություններից,  
մատուցվում են նաև օպերատոր չհանդիսացող «МБ Маркетплейс» ՍՊԸ  
կազմակերպության ծառայությունները: Վերջինս ընդգրկված է «Московская  
Биржа» խմբում, սակայն հայտնի չէ՝ նշված օպերատորի համար ագրեգա-  
տոր-կայք է, թե պարզապես ֆինանսական շուկայի փոխկապակցված մաս-  
նակից:

Այսպիսով, «Маркетплейс» նախագիծը, որն այսօր իրականություն է և  
ՌԴ ֆինանսական շուկայի զարգացման կարևոր բաղադրիչ, շահավետ նո-  
րույթ է տարբեր կազմակերպությունների և ֆիզիկական անձանց համար:  
Համարվում է, որ այն նպաստելու է ոլորտում մրցակցության զարգացմա-

---

<sup>76</sup> Правила оператора финансовой платформы Акционерного общества «Специализированный депозитарий «ИНФИНИТУМ» (ред. 10.02.2022), // URL: [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/rules\\_infinitum\\_10022022.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/rules_infinitum_10022022.pdf), 25.12.2022.

<sup>77</sup> Правила финансовой платформы АО ВТБ Регистратор (ред. 27.08.2020), // URL: [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/rules\\_vtm\\_27082021.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/rules_vtm_27082021.pdf), 25.12.2022.

<sup>78</sup> Правила финансовой платформы Публичного акционерного общества «Московская Биржа ММВБ-РТС» (ред. 28.11.2022), // URL: [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/rules\\_mmvb\\_28112022.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/rules_mmvb_28112022.pdf), 25.12.2022.

նը<sup>79</sup>, քանի որ հաճախորդների համար վերացվում են ծառայություններ մատուցող կազմակերպություններին փոխարինելուն խոչընդոտող բազմաթիվ հանգամանքներ, զգալիորեն նվազեցվում է տեղեկատվական անհամաչափության (ասիմետրիայի) մակարդակը՝ շնորհիվ համապատասխան հարթակներում շուկայի խաղացողների առաջարկների մեկտեղման և միաժամանակ մի քանի տարբերակ ուսումնասիրելու և դրանցից ընտրելու ընդլայնվող կարողության: Ֆինանսական շուկայի հատկապես փոքր խաղացողներին տրամադրվում է խոշոր ֆինանսական ընկերությունների հետ հավասար գործելու, ֆինանսական միջոցներ ներգրավելու և հաճախորդներին սպասարկելու հնարավորություն, վերացվում կամ գոնե կրճատվում են շուկա մուտքի արգելքները, որոնցից, թվային իրողություններով պայմանավորված, հատկապես վնասակար է ֆինանսական ապրանքների մանրածախ վաճառքի համար վաճառքի սեփական ցանցի և մասնաճյուղերի անհրաժեշտությունը. հեռավար սպասարկումն օժանդակող մեխանիզմ է անգամ տվյալ ռեգիոնում չներկայացված ֆինանսական կազմակերպության համար:

**Դիտարկումներ և առաջարկներ ուսումնասիրված կայքերի վերաբերյալ:** Ներկայումս ՀՀ-ում առկա են տարբեր կայքեր, որոնք հանդես են գալիս իբրև ֆինանսական տեղեկատուներ: Նշված կայքերը նախատեսված են ՀՀ ֆինանսական շուկային վերաբերող տարբեր տվյալներ ներկայացնելու և հետաքրքրված անձանց մի շարք ծառայությունների մասին տեղեկացնելու համար: Այս ամենին զուգահեռ ՀՀ-ում գործող առևտրային բանկերը, որոնք տեղական ֆինանսական ոլորտի հիմնական խաղացողներից են, վերջին մի քանի տարվա ընթացքում զգալի ջանքեր են գործադրել բարձրացնելու համար իրենց կողմից տրամադրվող բազմատեսակ ծառայությունների ինտերնետային հասանելիության մակարդակը՝ ունենալով նպատակ բացառելու մասնաճյուղերում ֆիզիկական ներկայության կարիքը և զարգացնելու ֆինանսական տեխնոլոգիաների սեկտորը: Սույն վերլուծությունը միտված է այս իրողությունների ներկայացմանը և մանրամասն քննարկում է ներդրված նորամուծությունները, որոնք նպաստում են ֆինանսական ոլորտում տասնամյակների ընթացքում ձևավորված ինստիտուցիոնալ համակարգի

---

<sup>79</sup> Подходы Банка России к развитию конкуренции на финансовом рынке, Доклад для общественных консультаций, Москва, ноябрь 2019, стр. 18, 35, 39, // URL: [https://cbr.ru/-Content/Document/File/90556/Consultation\\_Paper\\_191125.pdf](https://cbr.ru/-Content/Document/File/90556/Consultation_Paper_191125.pdf), 26.12.2022.

փոխվելուն: Առկա են, սակայն, որոշակի խնդիրներ, որոնք խանգարում են վերը բերված միտումների արագ տարածմանը և հնարավոր սպառողների՝ փոփոխությունների գործընթացներում ներգրավմանը:

Ֆինանսական տեղեկատու կայքերի ուսումնասիրման արդյունքում նկատվել է, որ մի շարք տվյալներ ցուցադրվում են տարբեր և միմյանց հետ չկապված կայքերում (որոշակի տարբերություններով, օրինակ՝ թարմության աստիճանի մասով), իսկ որոշ կայքեր ներկայացնում են նաև հատուկ, այլ դեպքերում չհանդիպող տեղեկություններ: Կան մասնագիտացված (RATE.am, CB.AM, ԱՎԱՆԴ.am, VARKER.AM), ինչպես նաև ընդհանրական բնույթի կայքեր (MoneyMarket.am, Fininfo): Ամբողջական և անընդհատ թարմացող տեղեկությունների հավաքագրմանը և հասանելիության ապահովմանը նպաստելու նպատակով առաջարկվում է, որ սույն կայքերը դիտարկեն և իրացնեն միմյանց հետ համագործակցելու ցանկացած հնարավորություն: Մասնավորապես, հաշվի առնելով, որ fininfo-ի կայքը ստեղծվել, կարգավորվում և վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից, նպատակահարմար է հատկապես մասնագիտացված կայքերը fininfo-ի կազմում ընդգրկելը: Սա կկանխի անգամ անհամապատասխանության հետևանքով խնդիրների ի հայտ գալը (այն դեպքերում, երբ ֆինանսական տեղեկատու կայքերում բանկային պրոդուկտների վերաբերյալ առկա տվյալները չնչին կամ զգալի կերպով տարբերվում են առևտրային բանկերի կայքերում բերված ինֆորմացիայից): Մեկ այլ ընդունելի տարբերակ է պարզապես փոխադարձ կապեր ստեղծելն ու ամրապնդելը, որոնց շրջանակներում դրանք շարունակաբար fininfo-ից կստանան և վերջինիս կտրամադրեն անհրաժեշտ տվյալները:

Այս ամենին կարող է զգալի նպաստել հատկապես ՌԴ փորձը՝ հավաքագրված «Маркетплейс» նախագծի մշակման և ներդրման ժամանակ: Հաշվի առնելով ՀՀ ԿԲ fininfo-ի կայքի և մասնագիտացված տեղեկատուների առկայությունը՝ առաջարկվում է տեղեկությունների թարմության շարունակական և անխափան ապահովման նպատակով ստեղծել ՀՀ ֆինանսական շուկայի մասնակիցների համար հնարավորություն իրականացնելու գործառնություններ այդ կայքերի միջոցով: Փոխադարձ կապեր ստեղծելով ու ամրապնդելով՝ ՀՀ-ի համար առավել նպատակահարմար կարող է լինել հատկապես կայքերը մասնագիտացված հարթակների վերածելը՝ առանձին տարադրամային ավանդային, վարկային, արժեթղթային և այլ գործարքների

համար՝ զուգահեռաբար աշխատանքներ կատարելով նոր հարթակների ստեղծման գծով: Սա տարբերվում է ՌԴ տարբերակից, որտեղ նույն հարթակում կարող են մատուցվել տարբեր ծառայություններ, սակայն, չբացառելով հետագայում խառը բնույթի հարթակների ստեղծումը, մասնագիտացված բնույթի հարթակների դեպքում կպահպանվեն արդեն եղած ռեսուրսները: Նմանապես կարելի է ստեղծել միասնական ռեսուրս՝ մասնագիտացված ենթառեսուրսներով՝ հատուկ այս մեխանիզմի ներդրման դեպքում, եթե դա չի հակասի արդեն առկա լուծումներին կամ մշակվող այլ նախաձեռնություններին:

Անհասկանալի է էլեկտրոնային գումարի փոխանակմանը միտված «Amchange» համակարգի ապագան, մինչդեռ այն կարևոր և արդիական մեխանիզմ է անկանխիկ վճարումներին նպաստելու տեսանկյունից, իսկ համակարգի կամ այլ նմանատիպ համակարգերի կիրառման մասշտաբների մեծացումն առաջնահերթ խնդիր է նշված նպատակի իրագործման առումով:

Հետազոտության՝ առևտրային բանկերին վերաբերող հատվածի կատարման ժամանակ նկատվել են մի շարք խնդիրներ, որոնց լուծումը կարևոր է ոչ այնքան անկախ հետազոտողների, որքան պոտենցիալ և առկա հաճախորդների համար: Մասնավորապես՝ առևտրային բանկերի կայքերում օնլայն և մոբայլ բանկինգի վերաբերյալ տեղեկությունների ուսումնասիրման ժամանակ նկատվել է, որ միշտ չէ, որ դրանք ամփոփ և համալիր կերպով են ներկայացնում առկա ծառայությունները, որոնք մատուցվում են նշված համակարգերի և հավելվածների շնորհիվ: Առաջացել են իրավիճակներ, երբ բանկերի կայքերի՝ օնլայն և մոբայլ բանկինգին վերաբերող էջերում անհրաժեշտ տվյալների բացակայության կամ թերի ներկայացված լինելու պատճառով գործարքների կատարման ժամանակակից լուծումների վերաբերյալ պատկերացում կազմելու համար հարկ է եղել դրանք համալրելու այլ՝ առաջարկվող պրոդուկտներին վերաբերող էջերում տարբեր կերպ բաշխված տեղեկություններով: Որոշ դեպքերում ծագել է անհրաժեշտություն տեղեկատվությունը համակարգելու մոբայլ բանկինգի հավելվածների ներբեռնման համար նախատեսված կայքերում բերված նկարագրության կամ թարմացումներին վերաբերող հայտարարությունների միջոցով: Երբեմն եղել են դեպքեր, երբ թերի է եղել ներբեռնման էջերում ցուցադրված ինֆորմա-



ցիան, և բացակայել են նշումներն առ այն, թե թարմացումների արդյունքում ինչպիսի հնարավորություններով են հավելվածները համալրվել: Հաճախորդների ցանցի ընդլայնման առումով վերոնշյալ հանգամանքների առկայությունը ենթադրում է օնլայն-մոբայլ բանկինգի և հավելվածների ներբեռնման էջերում բերված տվյալների համալրում և համակարգված ներկայացում՝ բանկային պրոդուկտներին վերաբերող էջերում փնտրտուքը բացառելու համար:

Ֆինանսական ոլորտում առկա ինստիտուցիոնալ պարադիգմի վերափոխման և տեղեկատու կայքերի ու բանկերի կողմից հաճախորդների ներգրավման հարցերում կարող են զգալի օգնել Similarweb-ի տրամադրած տվյալները: Հարկ է ուշադրություն դարձնել թռուցիկ դիտման %-ային մասնաբաժնի բարձր և 1 այցի ընթացքում դիտված էջերի միջին թվի ցածր արժեքների պես խնդիրներին: Ցուցանիշները կարող են լինել անգամ խնդրահարույց իրողությունների ցուցիչներ և օգնել չեզոքացման գործում: Ցուցանիշների դիտարկմամբ կայքերն ստանում են հնարավորություն հասկանալու հետագա քայլերը և նպաստելու նորահայտ լուծումների կիրառման ընդլայնմանը:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Խաչատրյան Կ., Սահմանադրականության մակարդակը որպես պետության կայացածության գրավական, «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդես (սոցիոլոգիա, տնտեսագիտություն), N 3(24), 2017:
2. Խաչատրյան Կ., Պետության կայացածության և պետական կառավարման որակի փոխկապվածության խնդիրները, «Բանբեր Երևանի համալսարանի» գիտական հանդես (տնտեսագիտություն), N 3(33), 2020:
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ: Տարեկան հաշվետվություն 2019 թ., Երևան:
4. Սարգսյան Հ., Գևորգյան Ռ., Մինասյան Կ., Մխիթարյան Ժ., Զաքարյան Հ., ՀՀ տնտեսության թվային փոխակերպումների ինստիտուցիոնալ համակարգի ձևավորման հիմնախնդիրները, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2020, 160 էջ:
5. Василенко Н.В., Трансформация и освобождение труда в условиях новой экономики, Инновационная экономика и промышленная политика региона (ЭКОПРОМ-2016): труды международной научно-практической конференции 22-24 сентября 2016 года, Под ред. д-ра экон. наук, проф. Бабкина А.В., Издательство Политехнического университета, Санкт-Петербург, 2016, 671с.
6. Воронцовский А.В., Цифровизация экономики и ее влияние на экономическое развитие и общественное благосостояние, Вестник Санкт-Петербургского университета, т. 36, №2, 2020.
7. Гелиха О.Я., Соломина В.П., Тульчинского Г.Л., Управление персоналом и человеческий капитал современной России, коллективная монография, Под ред., ООО «Книжный Дом», Санкт-Петербург, 2011.
8. Дигилина О.Б., Тесленко И.Б., Савельев И.И., Формирование институциональной среды цифровой экономики в России, Вестник Академии, №4 (57), декабрь, 2018, Московская академия предпринимательства, Москва.
9. Добролюбова Е.И., Южаков В.Н., Ефремов А.А., Ключкова Е.Н., Талапина Э.В., Старцев Я.Ю, Цифровое будущее государственного управ-

- ления по результатам. Издательский дом «Дело» РАНХиГС, Москва, 2019, 114 с.
10. Куманичкин П., Состоятельность современного государства: новые подходы к оценке, Среднерусский вестник общественных наук, т. 13, №2, 2018.
  11. Рыжкова М.В., Чиков М.В., Институциональная природа цифровых платформ, Вестник Бурятского государственного университета. Экономика и менеджмент, №4, 2019.
  12. Садовая Е.С., Цифровая экономика и новая парадигма рынка труда, Мировая экономика и международные отношения, Т. 62, №12, 2018.
  13. Санникова Т.Д., Институциональные и ресурсные ограничения на пути решения задачи перехода к цифровой экономике, Вопросы инновационной экономики, Т. 9, №3, июль-сентябрь, 2019.
  14. Якобсон Лев, Государственный сектор экономики, Аспект Пресс, Москва, 2000.
  15. Bannister Fran, and Regina Connolly, ICT, public values and transformative government: A framework and programme for research, Government Information Quarterly, vol. 31, No. 1, 2014.
  16. Boardman Craig, Assessing Governance: The Importance of Evaluating Policy Outcomes in National Mission Areas, 2014.
  17. Chen Z., Promoting innovative learning in training and adult education–a Singapore Story / Z. Chen, A. Chia, X. Bi. – DOI: 10.1080/0158037X.2020.1772224 // Studies in Continuing Education, 2020.
  18. Chuairé María et al., State Capacity and the Quality of Policies: Revisiting the Relationship between Openness and the Size of Government. Inter-American Development Bank, 2014.
  19. Davies Jack, (2018), Smart Contract Operating Project Networks: Using integrated functionality for improving workflow, transparency, and easier collaboration. 10.13140/RG.2.2.31763.17440.
  20. Dincecco Mark and Gabriel Katz, State Capacity and Long-run Economic Performance, The Economic Journal, 126(590), 2016.

21. Dincecco Mark, The Rise of Effective States in Europe, *Journal of Economic History*, Vol. 75, No. 3, 2015.
22. Drahokoupil J., Piasna A., Work in the Platform Economy: Beyond Lower Transaction Costs, *Intereconomics: Review of European Economic Policy*, Vol. 52, Number 6 (November/December), 2017.
23. European Commission, (2019), *2nd survey of schools: ICT in education. Objective 1: Benchmark progress in ICT in schools. Final report*. Publications Office in the European Union.
24. Giovanni De Gregorio, The rise of digital constitutionalism in the European Union, Oxford University Press and New York University School of Law, 2021.
25. Hendrix Cullen, Measuring state capacity: theoretical and empirical implications for the study of civil conflict, *Journal of peace research*, Thousand Oaks, vol. 47, No. 3, 2010.
26. Lim V. et al., Massive Open and Online Courses and Open Education Resources in Singapore // Southeast Asian Ministers of Education (SEAMEO) Journal, vol. 1, 2017.
27. Machova Renáta and Martin Lněnička, Reframing E-Government Development Indices with Respect to New Trends in ICT". *Review of Economic Perspectives. Narodohospodářsky Obzor*, vol. 15, No. 4, 2015.
28. Margetts Hellen and Patrick Dunleavy, The second wave of digital-era governance: a quasi-paradigm for government on the Web. *Philosophical Transactions of the Royal Society*, vol. 371, No. 1987, 2013.
29. Marktanner M., Addressing the Marketing Problem of the Social Market Economy, Berlin 60 Years of Social Market Economy - Formation, Development and Perspectives of a Peacemaking Formula, 2010.
30. Möller J., Filter Bubbles and Digital Echo Chambers. *The Routledge Companion to Media Disinformation and Populism*, edited by Howard Tumber and Silvio Waisbord, Routledge, London, 2021.
31. National Cyber Security Strategies, Practical Guide on Development and Execution, EUCA, 2012.
32. OECD. Recommendation of the Council on Digital Government Strategies. OECD Publishing, Paris, 2014.

33. O'Reilly Tim, Government as a Platform. Innovations: Technology, Governance, Globalization, vol. 6, No. 1, 2011.
34. Report of the Special rapporteur on extreme poverty and human rights, A/74/48037, UN, 2019.
35. Siskos Eleftherios et al., Multicriteria Decision Support For Global E-Government Evaluation, Omega, No 46,2014.
36. Śledziewska K., Włoch R., The Economics of Digital Transformation: The Disruption of Markets, Production, Consumption and Work, 2021.
37. United Nations. United Nations e-Government Survey 2014: E-Government for the Future We Want: UN Publishing Section, New York, 2014.
38. United Nations. United Nations e-Government Survey 2018. New York: UN Publishing Section, 2018.
39. USAID & Payson Graduate Program in Global Development. A Glossary on Violent Conflict, March, 2000.
40. Walder Andrew, The Waning of the Communist State: Economic Origins of Political Decline in China and Hungary; The Regents of the University of California,1995.
41. World Development Report 2016: Digital Dividends. The World Bank, Washington, DC, USA, 2016.
42. Yang J., Building a Learning Society in Japan, the Republic of Korea and Singapore. / J. Yang, R. Yorozu. // UIL Publication Series on Lifelong Learning Policies and Strategies. UNESCO Institute for Lifelong Learning, №2, 2015.

### **Էլեկտրոնային կայքեր**

43. avto.am, Traffic Analytics & Market Share | Similarweb, մուտք՝ 10.10.2022, 11:50:
44. health - Log In (armed.am), մուտք՝ 15.01.2023, 15:15 :
45. <https://surfshark.com/dql2020>, մուտք՝ 10.03.2022, 11:30:
46. <https://www.arlis.am/documentview.aspx?docid=155309>, ՀՀ ԿԳՄՍ նախարարի 17.08.2021թ., N 65-Ն հրամանը, մուտք՝ 15.06.2022, 17:00:

47. <https://www.statista.com/statistics/377766/household-internet-access-in-finland/>, Eurostat, *Share of households with internet access in Finland from 2007 to 2020 [Graph]*. Statista, 2021, May 5, 15.06.2022, 17:30:
48. <https://www.statista.com/topics/7760/mobile-phone-usage-in-finland/#dossierKeyfigures>, Clausnitzer, J., *Mobile phone usage in Finland – Statistics and facts*. 2021, 15.06.2022, 18:30.
49. <https://corporate.armed.am/about-system/էլեկտրոնային-սոցիալական-ընկերություններ-հայաստանում>, 16.06.2022, 18:30:
50. <https://wits.worldbank.org/>, WITS - World Integrated Trade Solutions, մուտք՝ 20.09.2022, 13:00:
51. [https://cbr.ru/fintech/market\\_place/](https://cbr.ru/fintech/market_place/), ՌԴ կենտրոնական բանկի կայքի «Деятельность» բաժնի «Развитие финансовых технологий» ենթաբաժնի «Маркетплейс» բաղադրիչ, Банк России, մուտք՝ 26.12.2022, 12:00:
52. <https://ivo.garant.ru/#/document/74399619/>, Федеральный закон от 20 июля 2020 г. №211-ФЗ «О совершении финансовых сделок с использованием финансовой платформы», մուտք՝ 26.12.2022, 12:25:
53. [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/rules\\_sravni\\_02092022.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/rules_sravni_02092022.pdf), Правила финансовой платформы АО «Финансовый Маркетплейс Сравни.ру» (ред. 02.09.2022г.), մուտք՝ 26.12.2022, 12:40:
54. <https://www.vedomosti.ru/finance/articles/2022/11/29/952726-vtoroi-krupneishii-finansovii-marketpleis-nachal-vidavat-krediti-onlain>, Еще один финансовый маркетплейс начал выдавать кредиты онлайн, газета «Ведомости», 30 ноября, 2022 г., մուտք՝ 26.12.2022, 13:15:
55. [https://cbr.ru/vfs/finm\\_infrastructure/financial\\_platform\\_operators/rules/rules\\_ofm\\_21122021.pdf](https://cbr.ru/vfs/finm_infrastructure/financial_platform_operators/rules/rules_ofm_21122021.pdf), Правила финансовой платформы АО «ОФМ» (ред. 21.12.2021г.), մուտք՝ 25.12.2022, 16:00:
56. [https://cbr.ru/Content/Document/File/90556/Consultation\\_Paper\\_191125.pdf](https://cbr.ru/Content/Document/File/90556/Consultation_Paper_191125.pdf), Подходы Банка России к развитию конкуренции на финансовом рынке, Доклад для общественных консультаций, Москва, ноябрь 2019, մուտք՝ 26.12.2022, 19:00:
57. [list.am Traffic Analytics & Market Share | Similarweb](https://list.am), մուտք՝ 23.09.2022, 11:20:

58. list.am Traffic Analytics & Market Share | Similarweb, փոխընթաց` 23.09.2022, 11:30:
59. PSRC\_2021\_report.pdf, փոխընթաց` 22.09.22, 16:14:
60. sas.am Traffic Analytics & Market Share | Similarweb, փոխընթաց` 10.10.2022, 12:50:
61. Summary of Adoption of E-Commerce Legislation Worldwide | UNCTAD, UNCTAD, Summary of Adoption of E-Commerce Legislation Worldwide, փոխընթաց` 20.09.2022, 13:50:
62. Лучшие сайты Армении, рейтинг - каталог армянских сайтов (ranks.am), փոխընթաց` 20.09.2022, 12:45:

## Summary

### **The perspectives of the institutionalization of state administration in the context of digitalization of the economy**

*Hayk Sargsyan, Ruben Gevorgyan  
Karlen Khachatryan, Karine Avetisyan  
Zhirayr Mkhitarian, Varsenik Sargsyan  
Karine Minasyan, Hrachya Zakaryan*

The beginning of the third millennium was accompanied by the fourth industrial revolution by digitalizing social and economic relations. The latter is characterized by a double impact. On one side, the countries are trying to exercise strategic leadership to speed up the process of digital transformation and capitalize on the benefits of digitalization, on the other hand, digital transformation brings challenges like cyber security risks. The paper assesses the possibilities of using digitization tools and proposes changes to existing institutional relationships, such as new institutions replacing existing institutions and new institutions operating in parallel with old institutions.

This research is designed for professors, graduate students, students, as well as those working in the field of digitization & technological development and governmental administration.



## Резюме

### Перспективы институционализации государственного управления в условиях цифровизации экономики

*Айк Саргсян, Рубен Геворгян  
Карлен Хачатрян, Карине Аветисян  
Жирайр Мхитарян, Варсеник Саргсян  
Карине Минасян, Грачя Закарян*

Начало третьего тысячелетия сопровождалось четвертой промышленной революцией, отличительной чертой которой является цифровизация социально-экономических отношений. Последний характеризуется двойным эффектом. С одной стороны, государства пытаются проявить стратегическое лидерство, чтобы ускорить процесс цифровой трансформации и максимально использовать преимущества, которые приносит цифровизация, с другой стороны, по мере углубления цифровой трансформации, вызовы, возникающие в цифровом пространстве, в том числе риски кибербезопасности, возрастают.

В книге оцениваются возможности использования инструментария цифровых технологий и предлагаются изменения в существующих институциональных отношениях, через создание новых институтов, заменяющих существующие институты, а также действующих параллельно со старыми институтами. Работа предназначена для преподавателей, аспирантов, студентов, а также специалистов работающих в сфере цифровизации и технологического развития и сотрудников органов государственного управления.



**ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿ ԼԵՎՈՆԻ, ԳԵՎՈՐԳՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԱԼԲԵՐՏԻ  
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԿԱՌԼԵՆ ԳԱԳԻԿԻ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ  
ՄԻՆԻԹԱՐՅԱՆ ԺԻՐԱՅԻ ՍԱՄՎԵԼԻ, ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐՍԵՆԻԿ ԿԱՐԵՆԻ  
ՄԻՆԱՍՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԱՂԱՍՈՒ, ԶԱՔԱՐՅԱՆ ՀՐԱՉՅԱ ՍԱՄՎԵԼԻ**

**ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼԱՑՄԱՆ  
ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

**ՄԱՍ 2**

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան  
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի  
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի  
Հրատ. սրբագրումը՝ Ա. Գոյումջյանի

Ստորագրված է տպագրության՝ 26.05.2023:

Չափսը՝ 70x10 <sup>1</sup>/<sub>16</sub>: Տպ. մամուլը՝ 11:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն  
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1  
[www.publishing.y su.am](http://www.publishing.y su.am)



ՎԻՍՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 2023  
[publishing.ysu.am](http://publishing.ysu.am)